


ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**Կ. ՊՈԼՍԻ ԼԶԴ ՄԱՍՈՒԼԸ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ
ԶԱՀԱԿԻՐ
1909-1915ԹԹ.**



Գիրքը նվիրվում է 1915 թ. նահատակված
Կ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթի
աշխատակազմի և գլխավոր խմբագիր
ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐՅԱՆԻ
պայծառ հիշատակին

Խմբագիր՝
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԱԼԲԵՐՏ ԽԱՆՍՅԱՆ

Հովսեփյան Մարիամ Վռամի
Բանասիրական գիտությունների թեկնածու
«Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ

Գրքում առաջին անգամ փորձ է արվել գիտական ուսումնասիրության շրջանակներում ներկայացնել դարասկիզբին Կ. Պոլսում հրատարակված ԳՅԴ մամուլի ուրվագիծը, մասնավորապես 1909-1915 թթ. օսմանյան կայսրության մայրաքաղաքում լույս տեսած «Ազատամարտ» օրաթերթի, «Ուսանող», «Երկունք» ամսաթերթերի հիմնախնդիրների համախումբը և թեմատիկ ստորաբաժանումները:

Աշխատությունը վերաբերում է կուսակցության մամուլին և այդ շրջանի ԳՅԴ ազգային քաղաքականությանը ու լրագրության առանձնահատկություններին:

Գիրքը նախատեսված է ոչ միայն հայ մամուլի պատմաբանների և լրագրության ֆակուլտետների ուսանողության, այլև ընթերցող լայն հասարակայնության համար:

Աշխատությունը նվիրված է ամբողջովին կամ գրեթե ամբողջովին չուսումնասիրված մի այնպիսի թեմայի, ինչպիսին հայ ազգային ամենահեղինակավոր կուսակցություններից մեկի՝ Գայ հեղափոխական դաշնակցության մամուլն է: 1909-1915 թթ., ինչպես հայտնի է, կազմում են այդ կուսակցության ամենաշրջադարձային և դրամատիկ փուլերից մեկը. ըստ այդմ, այս շրջանի ԳՅԴ մամուլը բնութագրվում է թեմաների ու հրապարակախոսության հարստությամբ և քաղաքական ու սոցիալական առաջադրումների հրատապությամբ: Հեղինակը իր գործին ձեռնմուխ է եղել այս ամենի գիտակցումով, հանդես է բերել իր թեման գիտականորեն մշակելու և վերլուծելու լայն կարողություններ: Նա դասդասել է իրոք մեծածավալ նյութը՝ առանձնացնելով գլխավոր և երկրորդական թեմաները ու մշտապես ուշադրության կենտրոնում պահելով մշված մամուլի արժեքավորումը: Իսկ դա առաջին հերթին աշխատության մեջ դրսևորվել է ԳՅԴ հարուստ պատմության գլխավոր փուլերը գիտականորեն վերարտադրելու, այդ կուսակցության գաղափարական ընթացքը սթափ արժեքավորելու հեղինակի զովելի կարողություններով:

Մարիամ Հովսեփյանը իր «ԳՅԴ Կ. Պոլսի պարբերական մամուլը ազգային-ազատագրության ջահակիր» գրքում առաջադրում և գիտականորեն վերլուծում է այնպիսի խնդիրներ, ինչպես օսմանյան խորհրդարանի գործունեությունն է և դրա բնութագիրը երիտթուրքերի կառավարման շրջանում: Քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպես կայսրության հպատակ ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի ներկայացուցչությունը օսմանյան խորհրդարանում, դրա ոչ արդյունավետ դերը, հայ պատգամավորների խորհրդարանական գործունեության հետ կապվող ընթացիկ խնդիրներ: Կարևոր է օսմանյան II Սահմանադրությանը և արևմտահայերի Սահմանադրությանը հայ քաղաքական գործիչների տված գնահատականը այս աշխատության մեջ: Ադանայի 1909 թ. կոտորածի օրինակով ցույց է տրվում, որ օսմանյան սահմանադրական նորմերը (անհատի կյանքի և կայքի ապահովության, բուրդ ազգերի, կրոնների և դավանանքների հավասարություն օրենքի առջև, անհատի և ազգի հավաքական իրավունքների և այլն) երիտթուրքերի տիրապետության ժամանակաշրջանում մնում էին սոսկ թղթի վրա, ունեին զուտ ձևական բնույթ՝ առարկայական ձևով ցուցադրելով իրավունքի ու գործնական կյանքի և հարաբերությունների միջև եղած խոր հակասությունը:

Աշխատության մեջ առանձին տեղ է հատկացված արևմտահայերի Ազգային ժողովի իրավական գործունեության, այդ ժողովի իրավունքների և պարտականությունների, դրանց իրացման չափերի, Ազգային ժողովի՝

օսմանյան իրավական ինստիտուտների հետ ունեցած փոխհարաբերության և այլնի բնութագրմանը: Յեղիմակը քննարկել է իրավական հետաքրքրություն նեկայացնող մի շարք հարցեր, ինչպես՝ հպատակ ժողովուրդների գինվորագրության հարցը, հողային իրավական հարաբերությունները՝ կապված Թուրքիայի հողային օրենսգրքի իրավական բովանդակության բնութագրման հետ, կրթական օրենսգիրքը և այլն:

Նշված բոլոր խնդիրները ուսումնասիրության առարկա են դառնում, աշխատության շրջանակների համեմատ, առաջին անգամ հայ մամուլի հետազոտության ընդհանուր սահմաններում: Եվ այս իմաստով էլ, կարծում են, նշված խնդիրները իրենց անպայման նպաստը կբերեն օսմանյան և արևմտահայերի Սահմանադրությունների, կայսրության հպատակ ժողովուրդների իրավական կացությանը վերաբերող հետազոտություններին և մասնավորապես այդ թեման ընդգրկող բուհական ձեռնարկներին: Ուստի Մարիամ Յոսեփյանի սույն աշխատության հրատարակությունը առաջին գործնական քայլն է այս ուղղությամբ:

ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների»
ամսագրի գլխավոր խմբագիր,
ՀՀ ԳԱ պատմության ինստիտուտի հայ մամուլի
պատմության գիտական խմբի ղեկավար,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱԼԲԵՐՏ ԽԱՌՍՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի վերջին հիմնվում և 20-րդ դարի սկզբին բուռն ծաղկում է ապրում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության (այսուհետև՝ ՀՀԴ) պարբերական մամուլը: ՀՀԴ-ն կարևորել է վերջինիս դերը քաղաքական պայքարում և գիտակցել, որ հայ ժողովրդի գոյատևմանը նպաստելու, ազգակիցների կյանքը բարվոքելու, նրանց համախմբելու ազգապահպան գործընթացում գաղափարաքարոզչական օժանդակող ազդակներից մեկը կուսակցական մամուլն է: Դաշնակցության ծրագիրը ու գաղափարները, հասարակական-քաղաքական տարաբնույթ հիմնահարցերի նկատմամբ ունեցած տեսակետները և մոտեցումները արևմտահայերին ներկայացնալու նպատակով է նաև, որ ՀՀԴ Արևմտյան բյուրոն, օգտվելով 1908 թվականի հուլիսի 10-ին Օսմանյան Թուրքիայում կատարված հեղաշրջման ընթացած խոսքի, մամուլի «ազատությունից», կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում 1909 թվականին սկսում է հրատարակել «Ազատամարտ» պաշտոնաթերթը: 1909-1915 թթ. Կ. Պոլսում այդ օրաթերթից բացի հրատարակվել են նաև դաշնակցական «Ուսանող» և «Երկունք» ամսաթերթերը: Եվ քանի որ «Ազատամարտը», «Ուսանողը» և «Երկունքն» առ այսօր չեն ուսումնասիրվել, ուստի այս աշխատության շրջանակներում փորձ է արվում ընդհանուր պատկերացում տալ դրանց հիմնադրման, նպատակների և ուղղվածության մասին՝ Կ. Պոլսի ՀՀԴ պարբերական մամուլը դիտարկելով որպես կուսակցության խոսափող: Բնական է, որ ուսումնասիրության սկզբունքային տվյալ մոտեցմամբ է պատճառաբանվում այն հանգամանքը, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի դեպքերը ու իրադարձությունները, որոնց խորը վերլուծությունը և լուսաբանումը արված են այլոց կողմից, այստեղ վեր են հանվում՝ հիմնական սկզբնականից ելնելով: Ուսումնասիրությունները կատարվել են այդ պարբերականների Հայաստանում գտնվող հավաքածուների հիման վրա: Դրանք, սակայն, ոչ ամբողջությամբ, ոչ բոլոր համարներով (թվերով) են մեզ հասել ու պահպանվել՝ ամենքին հայտնի պատճառներով. պետականության բացակայություն, անկայուն քաղաքական իրադրություն, աննպաստ պատմական հանգամանքներ, Ցեղասպանություն: Այնուամենայնիվ դրանց մեծ մասը ժառանգվել է մեզ, և հնարավորություն է ընծեռում ընդհանուր առմամբ կարծիք կազմել ՀՀԴ Կ. Պոլսի պարբերա-

կան մամուլի մասին, որն առավել կհարստանա և կամբողջականանա, եթե հետագայում մնացած համարները կարողանանք ձեռք բերել և ուսումնասիրել:¹

Հետազոտության նպատակները իրականացնելու համար իբրև սկզբնաղբյուր օգտագործվել են նաև արխիվային նյութեր, ժամանակակիցների, առավելապես դաշնակցական ակնառու գործիչներից, մտավորականներից և «Ազատամարտ» օրաթերթի աշխատակիցներից շատերի հուշագրությունները ու աշխատությունները, նշված ժամանակաշրջանում հրատարակված թե՛ Դաշնակցության և նրան համակիր պարբերական մամուլի, թե՛ 1909-1915թթ. Կ.Պոլսի մամուլում ընդհանրապես ՀՀԴ-ին ու նրա պաշտոնական ներկայացուցիչներ «Ազատամարտին», «Ուսանողին» և «Երկունքին» առնչվող հրապարակումներից, ի թիվս որոնց՝ ՀՀԴ-ի գործելակերպը քննադատող հոդվածներ, աշխատություններ:

Աշխատության մեջ արտահայտվում է մեր գնահատականը ՀՀԴ-ի, նրա գործելակերպի և Կ.Պոլսի դաշնակցացական մամուլի մասին, որը ձևավորվել է վերոհիշյալ ուսումնասիրության արդյունքում: Պետք է նկատել, որ եթե ՀՀԴ-ի ու նրա գործունեության վերաբերյալ կա բավականաչափ հարուստ գիտական գրականություն, գրված են բազմաթիվ ուսումնասիրություններ, գրքեր ու հոդվածներ, ապա նույնը չի կարելի ասել ՀՀԴ մամուլի մասին: «Մեր պայմաններեն մեզ անհնար է ճշտորոշել ու լրիվ կերպով ներկայացնել ՀՀԴ պարբերական ու ոչ պարբերական հրատարակություններու ցանկը: Քաղաքական պայմաններու հետևանքով լույս տեսած են թերթեր անկուսակցական անվան տակ, մինչդեռ իրապես դաշնակցական հրատարակություններ են եղած», - կարդում ենք 1950թ. հրատարակված «Հուշապատման» մեջ:² Իրոք, մինչև օրս հստակ պատկերացում չկա դաշնակցական պարբերականների մատենագիտության հարցում: ՀՀԴ մամուլը բավականաչափ պատշաճ է ներկայացված Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» մատենագիտական աշխատության մեջ,³ թեև այստեղ կան անճշտություններ, բացթողումներ: Իր որակով ու գիտական արժեքով Գ. Լևոնյանի մատենագիտությանը զիջում է Հովհ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա» աշխատությունը:⁴ Նա բնականաբար տուրք է տվել զուտ քաղաքական և գաղափարական թելադրանքներին ՀՀԴ մամուլը գնահատելով բացառապես թշնամական դիրքերից: Նա իր

1 «Հուշապատմում ՀՀԴ (1890-1950թթ.)», Բոստոն, 1950, էջ 562-579:

2 «Հուշապատմում ՀՀԴ (1890-1950թթ.)», նշվ. աշխ., էջ 562-579:

3 «Հայոց պարբերական մամուլը», կազմեց Գ. Լևոնյանը, Երևան, 1934թ.:

4 Հովհ. Պետրոսյան, «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (1794-1900թթ.)», Երևան, 1956թ.:

հերթին շարունակում է նախորդ մատենագիտություններում թույլ տրված սխալներն ու վրիպումները: Դաշնակցության մամուլը ներկայացված է նաև Ա. Կիրակոսյանի «Հայ պարբերական մամուլի մատենագիտության» մեջ:⁵ Հեղինակը կրկնել է նախորդ մատենագիտությունների թերությունները (հիմնականում՝ խմբագիրների, հրատարակության թվականների հարցում), սակայն կատարել է դրական աշխատանք՝ մտցնելով իր ճշտումները: Հետազոտական անաչառությունը արդեն զգացնել է տալիս Մ. Բաբլոյանի «Մատենագիտության» մեջ,⁶ որտեղ հեղինակը որոշ չափով ուղղել է հրապարակի վրա եղած մատենագիտական թերությունները՝ մասամբ կրկնելով դրանք:

Թերևս նշենք, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի դաշնակցական մամուլին խորհրդային շրջանի պատմագրության մեջ զրեթե չեն անդրադարձել, թեև վերաբերմունքը, բնականաբար, պիտի դրսևորվեր նույն բացասական միտումով, ինչը կուսակցության պատմագրության հանդեպ էր: Օրինակ՝ ՀՍՍՀ ԳԱ հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» 6-րդ հատորում Դաշնակցությունը և նրա մամուլը շատ համառոտ գնահատված են պրոլետարական հեղափոխության դիրքերից: ՀՀԴ-ն և մյուս ազգային կուսակցություններն այստեղ հորջորջվում են «բուրժուանացիոնալիստական» ու «մանր բուրժուական»: Դաշնակցական մամուլը մեղադրվում է այն բանում, որ նշված ժամանակաշրջանում «ազգայնական դիրքերից ջանում էր հայ ժողովրդի ազատագրական պայքարը շեղել հեղափոխական ճանապարհից, խանգարում էր աշխատավոր զանգվածների դասակարգային ինքնագիտակցության զարկում»:⁷ Այս նույն ոգով են բնութագրվում Դաշնակցությունը ու նրա մամուլը խորհրդային շրջանի բոլոր պատմաբանների աշխատություններում:⁸ Խորհրդային շրջանի հրապարակումներից պետք է առանձնացնենք Լ. Խուրշուդյանի «Դաշնակցություն կուսակցության սոցիալական էության լենինյան գնահատականի հարցի շուրջ» հոդվածը (ռուսերեն), որը պատմագիտական նորովի հայեցվածք էր Դաշնակցության

5 «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967թթ.)», համահավաք ցանկ, կազմեց Ա. Կիրակոսյանը, Երևան, 1970:

6 «Հայ պարբերական մամուլը (1794-1980թթ.)», մատենագիտական համահավաք ցուցակ, կազմեց Մ. Բաբլոյանը, Երևան, 1986:

7 «Հայ ժողովրդի պատմություն» (ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն), Երևան, 1981, հ. 6-րդ, էջ 869-870:

8 Բ. Անանիկյան, «Հոգեբանական պատերազմը և Դաշնակցությունը», Երևան 1986, էջ 6, 63-66, 95, 152: Հ. Սիմոնյան, «Դաշնակցությունը հակակոմունիզմի ծառայության մեջ», Երևան, 1966, էջ 12, 30-30: Ա. Համբարյան, «Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին», Երևան, 1990, էջ 210-240:

գնահատականի տեսակետից:⁹ Պատմաբանի պնդմամբ ԳՅԴ-ն ոչ թե հետադիմական, այլ մանր-բուրժուական ձախ-մարողնիկական կուսակցություն է: Լ.Խուրշուդյանը այս գաղափարն անցկացնում է՝ ելելով իր ժամանակի հնարավորությունից՝ իբրև լենինյան տեսակետի վերականգնում, որը խեղաթուրվել էր խորհրդային հետագա շրջանի պատմության մեջ:

Վերջին տասնամյակին ԳՅԴ պատմությանն անդրադարձել են այս կուսակցության նշանավոր գործիչներ Գ. Տասնապետյանը և Էդ. Յովհաննիսյանը: Գ. Տասնապետյանի անգլերեն լույս տեսած աշխատության մեջ ԳՅԴ մամուլը դիտարկվում է միայն կուսակցության գաղափարական քարոզչության կտրվածքով: Նա նշում է, որ 1909 թ. օգոստոս-սեպտեմբերին Վառնայում գումարված ԳՅԴ 5-րդ համաժողովը ուշադրության կենտրոնում պահելով տարածաշրջաններում կատարվող աշխատանքը, որոշում է թերթեր հրատարակել ինչպես երկրում, այնպես էլ Կ.Պոլսում: Այս կերպ Կարինի «Հառաջի» և Թիֆլիսի «Հորիզոնի» հետ 1909 թ. Կ.Պոլսում սկսում է հրատարակվել «Ազատամարտը» Ռ. Ջարդարյանի խմբագրությամբ:¹⁰ Այս հեղինակը չի անդրադարձել բուն «Ազատամարտի» գործունեությանը: Էդ. Յովհաննիսյանը ևս ամբողջովին ուսումնասիրել է ԳՅԴ կուսակցության պատմությունը՝ քննարկման առարկա չդարձնելով նրա մամուլը:¹¹ Սակայն ինչպես ԳՅԴ մամուլը առհասարակ, այնպես էլ ԳՅԴ Կ.Պոլսի նշված պարբերականները չեն արժանացել գիտական ուսումնասիրության: «Ուսանողը» ու «Երկունքը», ի դեպ, չեն գտնվել ոչ դաշնակցական պարբերականների ուշադրության կենտրոնում, որոնց հարձակումների թիրախը «Ազատամարտն» էր: Ավելի ճիշտ՝ ոչ այնքան «Ազատամարտը», որքան ԳՅԴ-ն, քանի որ քննադատությունների գերակշիռ մասը առնչվում է դաշնակցության գաղափարախոսությանը և գործելակերպին: «Ազատամարտը» մշտապես խուսափել է դառնալ միջկուսակցական պայքարի միջոց:¹² ԳՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը, հնարավորության սահմաններում, չոր և զուսպ ձևով կարողացել է պատասխանել իր և ԳՅԴ-ի հասցեին տպագրվող անճշտություններին, չստուգված փաստերին անհրաժեշտության դեպքում տպագրելով որոշ արգելված փաստաթղթեր և դրանով ձգտելով բարձր պահել կուսակցության վարկը:

9 Л. Хуршудян, “К вопросу о ленинской оценке социальной сущности партии Дашнакцутюн” («Լրաբեր հասարական գիտությունների», Երևան, 1988, թիվ 7, էջ 12-31):

10 Н. Dasnabedian, “History of the Armenian Revolutionary Federation Dashnaktsutiun (1890-1924)”, Միլան, 1989, էջ 91:

11 Э. Оганисян, “Век борьбы”, Մյունխեն-Մոսկվա, 1991:

12 «Ազատամարտ», 1909, թիվ 63, 71, 75, 81, 86, 93, 98, 142, 151:

Հայ իրականության մեջ «Ազատամարտի» խաղացած դերին անդրադարձել են Մ. Վարանդյանը, Գ. Սիրունին, Գ. Լազյանը, Ռ. Դարբինյանը, Ռ. Ջարդարյանը: «Թերթն ստացավ իրեն արժանի դիրքն ու կշիռը պետական կյանքի մեջ: Կառավարությունը միշտ ուշադիր էր անոր ծայնին, հաշվի կառներ անոր կարծիքները պետական կարևորություն ունեցող այլ և այլ խնդիրներու շուրջ: «Ազատամարտը» կզրավեր մտավորական բազմությունը իր անկախ ու անկողմնակալ խոսքով, քննադատական շիտակ կեցվածքով և իր ժողովրդավար-ազատական ուղղությամբ», - գրում է Մ. Վարանդյանը:¹³ Իսկ Գ. Սիրունին այսպես է բնորոշել «Ազատամարտի» դերը. «Երիտասարդության համար տեսակ մը սրբավայր էր «Ազատամարտի» շենքը: Հոն էր, կերպով մը, հայ կյանքին բազկերակը... ճիշտ է, գիտեմ մարդիկ ալ, որ մատներով չէին բռներ մեր թերթը... Ան Իթքիատի և Դաշնակցության բարեկամության օրերուն անգամ հացկատակի մը դիրքը չառավ, ընդհակառակը, իր խոսքն ավելի կծու, ավելի հատու եղավ»:¹⁴ Գ. Լազյանը «Ազատամարտը» համարել է «թրքահայ լրագրության ամենափայլուն օրկան», որը պոլսահայ մամուլի պատմության մեջ նոր շրջանի սկիզբը դրեց:¹⁵ 1912թ. Ռ. Ջարդարյանը Ս. Վրացյանին գրած նամակում հայտնում է, որ թերթը Պոլսում «անօրինակ և աննախընթաց հաջողություն մը գտավ» տպաքանակը 1600-ից հասցնելով 6000-ի:¹⁶

«Ազատամարտի», «Ուսանողի», «Երկունքի» և ընդհանրապես ԳՅԴ մամուլի մասին դրվատանքով, նույնիսկ չափազանցությամբ է արտահայտվել դաշնակցական ճանաչված գործիչ և ուսումնասիրող Գ. Սիրունին: Նա իրավամբ նշում է, որ ԳՅԴ մամուլը նոր ու թարմ շունչ է բերել իր աշխարհում, բայց ծայրահեղության գիրկն է ընկնում մերժելով մինչ այդ հրատարակված պարբերականների դրական արժանիքները: Որպես ասվածի ապացույց վկայակոչենք միայն հետևյալ պարբերությունը նրա հոդվածից. «1895-1896թթ. հետո Պոլսեն մեկիկ-մեկիկ արտասահման հեռացեր էին թրքահայ լավագույն մտավորականները: Ասպարեզը մնացեր էր հացկատակներուն և անոնց, որ լրագրությունը ապրուստի միջոց մը ըրած էին: 1908 հուլիսին, երբ Համիտ մարդոց լեզուները բացավ, կփակվեր հայ մամուլի տարեգրությանց ամենն տխուր մեկ օրը: Շատ քիչ թերթեր, մանավանդ վերջին քառորդ դարուն, այնքան ազդած են ապրող սերունդին վրա, որքան «Ազատամարտը» իր գոյության վեց

13 Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 439:

14 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 11, էջ 104-115, թիվ 12, էջ 115-137:

15 Գ. Լազյան, «Հեղափոխական դեմքեր», Կահիրե, 1945, էջ 214:

16 Գ. Լազյան, նշվ. աշխ., էջ 213-214:

տարիներուն մեջ»:¹⁷ Իսկ Ռ. Դարբինյանը, փորձելով արժևորել ԶԳԴ մասնավորապես Կ. Պոլսի մամուլը, թվարկում է դրանցում նկատվող որոշ թերություններ, մեկը մյուսին կրկնօրինակելու միտումներ՝ միայն «Ազատամարտը» համարելով նոր սերնդի խոսափող, նոր գաղափարներ ու ծրագրեր հնչեցնելու միջոց:¹⁸

Ի տարբերություն դաշնակցական վերոհիշյալ գործիչների այս գնահատականների, նշված ժամանակահատվածում լույս տեսած ոչ դաշնակցական պարբերականները գրեթե թշնամական ու բացասական կարծիք ունեին ԶԳԴ մամուլի մասին:¹⁹ Բավական է թերթել ասեմք՝ «Մուրճ», «Մշակ», «Յնչակ», «Ժամանակ», «Հայրենիք», «Բյուզանդիոն», «Օրագիր», «Ծիածան» թերթերի հավաքածուները, որպեսզի համոզվենք ասվածի ճշմարտության մեջ: Մեծ մասամբ այս լրագրային կուսակցական-գաղափարական պայքարը վերածվում էր անձնական հարաբերությունները ճշգրտելու և նեղ անձնային վեճ ու կռիվների, որոնք, կարծում ենք, պատիվ չէին բերում կողմերից և ոչ մեկին:

Եթե ընդհանրացնենք, հավանաբար, պետք է եզրակացնենք, որ անհրաժեշտ է գիտականորեն վերլուծել ժայռահեղության հասնող այս կարծիքները: Սխալ է անվերապահորեն ճշմարտացի համարել ԶԳԴ մամուլը և մերժել մինչ այդ ու նաև նույն ժամանակահատվածում հրատարակված ոչ դաշնակցական թերթերն ու ամսագրերը: Սխալ է միայն վատը, մերժելին փնտրել ու մատնանշել ԶԳԴ մամուլում, ինչն անում են նրա հակառակորդ գործիչները: Ընդ որում, դաշնակցական մամուլի վերաբերյալ տեսակետները ԶԳԴ հակառակորդ հրատարակություններում ունեն բացառապես բանավիճային, դեպքից դեպք հանդիպող և պատահական բնույթ, որը չի կարող համարվել օբյեկտիվ գնահատական: Այդ պատճառով էլ այստեղ ձեռնպահ ենք մնում այս բովանդակության նյութերից, որոնց ուղղվածությունը բացառապես կուսակցական և քաղաքական նկարագիր ունի: (Օրինակ՝ ռամկավարների վեճը ԶԳԴ մամուլի, նաև՝ հնչակյանների բանավեճը դաշնակցական լրագրողների, գործիչների հետ և այլն): Եվ ուրեմն այսօր կարիք է զգացվում օբյեկտիվ վերլուծություն կատարել այս ոլորտում: Դրան նպաստելու նպատակով է ընտրվել սույն աշխատության թեման:

Այսպիսին են ԶԳԴ մամուլի (մասնավորապես 1909-1915թթ. Կ. Պոլսում հրատարակված) վերաբերյալ առկա աղբյուրները ու գրականու-

17 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 6, էջ 65-72, 80-81 (Յ. Սիրունի, «Ազատամարտի» սերունդը):

18 «Ազատամարտ», 1912, թիվ 946:

19 Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 397:

թյունը, որոնց քննական վերլուծությունը թույլ է տվել ընտրել ուսումնասիրության շարադրման և հարցադրումների քննարկման որոշակի սկզբունքներ:

Քննարկումների մեկնակետը եղել է հետևյալը՝ լինել օբյեկտիվ և անկողմնակալ, իմանալ կողմ ու դեմ կարծիքները, հավատարիմ մնալ սեփական եզրակացություններին, առավելագույնս տիրապետել նյութին, կարդալ և փորձել հնարավորինս հասկանալ Կ. Պոլսի ԶԳԴ պարբերական մամուլի հրապարակումների դրդապատճառները ու ակնկալիքները և զերծ մնալ սուբյեկտիվ գնահատականներից, մանավանդ եզրահանգումներ ձևակերպելիս, որոնք առնչվում են «Ազատամարտ» օրաթերթին, «Ուսանող» և «Երկունք» ամսաթերթերին, դրանց խաղացած դերին ու արժեկշռին: Առաջնային չափանիշը մնացել է ուսումնասիրման առարկայի անմիջական ծանոթությունը: Նույն դրդապատճառով 1909-1915 թթ. Կ. Պոլսում ԶԳԴ-ի հրատարակած «Ազատամարտ» օրաթերթի, «Ուսանող» և «Երկունք» ամսաթերթերի վերաբերյալ ճիշտ ու անսխալ դիրքորոշում դրսևորելու համար անհրաժեշտ ենք համարել Հայաստանում գտնվող դրանց հավաքածուների մանրակրկիտ ուսումնասիրությունը:

Նկատի ենք առել մեկ հանգամանք ևս: Քանի որ «Ազատամարտը», «Ուսանողը» և «Երկունքը» մեր համոզմամբ ԶԳԴ-ի գաղափարախոսն էին և հրատարակվել են կոնկրետ 1909-1915 թթ. Կ. Պոլսում, ուստի տվյալ աշխատության շրջանակներում չենք անդրադարձել այն հարցերին կամ ենթահարցերին, որոնք այլ ուղղվածություն ունեն (օրինակ՝ գրական-մշակութային խնդիրների լուսաբանելը և այլն) ու առանձին և մանրամասն ուսումնասիրության կարիք են զգում: Չենք ծանրացել այն հարցախնդրների վրա, որոնք գաղափարաքարոզչական առումով օսմանյան կայսրությունում 1909-1915 թթ. ԶԳԴ-ն առաջնային չի համարել իր մարտավարական ծրագրերում:

ՀՀԴ-Ն ԵՎ ՆՐԱ ՀԱՎԱՍՏԱՍԶԸ

1909-1915 թթ. Օսմանյան թուրքիայի մայրաքաղաք Կ.Պոլսում լույս են տեսնում Հայ հեղափոխական դաշնակցության «Ազատամարտ» օրաթերթը և «Ուսանող» ու «Երկունք» ամսաթերթերը: Քանի որ դրանք կուսակցական պատկանելություն ունեն և ՀՀԴ-ի գաղափարախոսն են այնքանով, որքանով ժամանակաշրջանի իրադարձությունները վերլուծում և գնահատում են ելնելով իրենց կուսակցության ծրագրային մեկնակետերից, ուստի նախ անհրաժեշտ է ընդհանուր պատկերացում կազմել ՀՀԴ-ի և նրա հավատամքի մասին: Նշենք նաև, որ քննարկելու ենք մինչև 1918թ. ՀՀԴ-ի դավանած հայացքները, որովհետև Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո (1918թ.) կուսակցությունը փոխել է իր ծրագիրը (1919թ.), որն ընդունում է առ այսօր:

Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադրումը ներկայացնելու համար անհրաժեշտ է հետադարձ հայացք նետել դեպի անցյալը և վեր հանել կուսակցության կազմակերպմանը նպաստող կենսապայմանները: Մեր ժողովուրդը մշտապես, երբ զրկվել է իր քաղաքական անկախությունից ու նվաճվել այլազգիների կողմից, պայքարել է դրան վերստին տիրանալու ցանկությամբ: Այդ ազատամարտը հատկապես դրամատիկ բնույթ է ստանում Հայաստանի Օսմանյան թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև 1555թ. բաժանվելուց հետո, որով հայերը մատնվում են «չարչարանքի բոլոր ձևերուն՝ աշխարհի ամենեն բարբարոս ռեժիմին տակ»:¹ 16-րդ դարից սկսած՝ ազատասեր հայորդիները որոնել են ստրկացումից, ուժացումից ու իբրև ազգություն ոչնչացվելուց փրկվելու ուղիներ: Դրանք հիմնականում արտահայտվել են երկու ձևով՝ զինված տեղային բնույթի ելույթներով և Հռոմի պապին, եվրոպական տերություններին, Ռուսաստանին բազմաթիվ խնդրագրեր առաքելով՝ հավատալով, թե նրանց աջակցությամբ վերջ կտրվի թուրք-պարսկական լծին: Ոչ միայն հայության մեծամասնությունը դեռևս չէր զիտակցում զենքը ձեռքին հանուն ազատության մղվելիք պայքարի անհրաժեշտությունը, այլև հաղթանակի հասնելու համար նրանց ուժերը չափազանց աննշան էին:

Պատմական հանգամանքների բերումով 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը ազատվում է պարսկական գերիշ-

1 Մ.Վարանդյան, «ՀՀԴ պատմություն», Երևան, 1992, էջ 13, Խ. Գաբիկյան, «Հայկական հարցն Արևելյան հարցի մեջ (1860-1880)», Բեյրութ, 1982, էջ 122-123, 140, «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1985, էջ 212-225:

խանությունից ու միացվում Ռուսաստանին: Դրանով, համեմատական կարգով, բարվոքվում է արևելահայերի տնտեսական և մշակութային կացությունը: Նրանց, ի տարբերություն արևմտահայերի, այլևս չի սպառնում զոհն ակնհայտ ցեղասպանության վտանգը: Այս իրողությանը հայոց ազատագրական շարժումը կարծես մտնում է մի նոր շրջան: Գրեթե ամենքին հուզում է մեկ խնդիր. ազատագրել արևմտահայերին թուրքական ենթակայությունից, քանզի օսմանյան բռնապետությունում նրանք դատապարտված էին մահվան:²

«Քրդական ավարառությունը և սպանությունը ամեն կողմ անապահովություն, ամեն կողմ լքում ու անկում առաջ բերած են... Ժողովուրդը կճնշվի հարստահարությանց և տրոց ծանրության տակ, պանդխտությունը և գաղթականությունը կամայացունեն մեր երկիրը: Թուրքը կուզե հազարավոր տարիներ ապրող հայ ազգը բնաջինջ անել աշխարհիս վրայեն», - գրում է Թիֆլիսում հրատարակված «Արծազանք» թերթը:³ Օսմանահպատակ հայերը դարեր շարունակ ենթարկվում էին հարստահարությունների, կեղեքումների՝ չունենալով քաղաքական, քաղաքացիական տարրական իրավունքներ, կյանքի ու զույթի ապահովություն: Արևմտահայերի ոչնչացման ծրագիրը թուրքական կառավարությունը իրականացնում էր տարբեր միջոցներով. պարբերաբար կազմակերպում էր ջարդեր, ազգային, կրոնական թշնամանք էր ներարկում հայերի և կայսրության մուսուլմանական հավատքի ժողովուրդների միջև՝ վերջիններին օգտագործելով որպես հայասպան գործիք, նաև փակում էր հայկական մշակույթի օջախները, մամուլը: Այս ամենից բացի, Թուրքիայում թե՛ բռնի, թե՛ հատուկ կերպով մշակված ազդարային, հարկային քաղաքականությամբ արևմտահայերից խլում էին պապենական հողակտորները, նրանց դարձնում հողազուրկ և փաստորեն ստիպում անթիվ և բազմապիսի հարկապարտքերը մարելու համար գրավ դնել, վաճառել ընտանիքները կերակրող հողակտորները, գնալ պանդխտության:⁴

2 Ա. Համբարյան, «Հայ հասարակական-քաղաքական միտքն արևմտահայության ազատագրության ուղիների մասին», Երևան, 1990, էջ 157-240:

3 «Ծրագիր հնչակյան սոցիալ-հեղափոխական կուսակցության», Լոնդոն, 1891, էջ 9 [ՀՀ հասարակական-քաղաքական կազմակերպությունների և փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ), ֆ. 4045, ց. 1, գ. 5]: «Դրոշակի» թուրքիկ թերթը, 1891, թիվ 3, էջ 1-3 (նույն տեղում, ֆ. 4047, ց. 1, գ. 3):

4 Լ. Բայրամյան, «Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում», Երևան, 1982, էջ 11-19:

«Исторический очерк гичакской партии и ее позиции в Турецкой Армении, составленный в департаменте полиции», 1910, стр. 1-9, (ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 148): «Դրոշակ», Ժնև, 1905, թիվ 4, էջ 4-5 (նույն տեղում, ֆ. 4047, ց. 1, գ. 24):

Հայության ազատատենչ ոգորումները երբեք չեն դադարել: Արդեն 19-րդ դարում հայ հասարակական-քաղաքական մտքի ականավոր ներկայացուցիչ, հոգևորական գործիչ Մկրտիչ Խրիմյանը քարոզում է, որ հայ ժողովուրդը պիտի գիտակցի, թե որքան թանկ է ազատության գինը. «Աշխարհիս Փրկիչ զայն իւր խաչով և արյունով զնեց...Մի՞թե դու ցանկալի ազատություն առանց զոհի և արյան, ծրի ստանալ կուզես»⁵: Ազգի ինքնիշխանությանը կամովին զոհաբերվողները թողնում էին տուն ու տեղը, վերցնում իրենց խաչ-հրացանը և զինվորագրվում ֆիդայի հերոսամարտիկների խմբերին: Սկսված շարժումը զորանում է 19-րդ դարի երկրորդ կեսից, երբ արևմտահայությունն ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման զարթոնք է ապրում.⁶ ընդունվում է Ազգային սահմանադրությունը, բացվում են դպրոցներ, մշակութային կենտրոններ, մեկը մյուսի հետևից տպագրվում են թերթեր ու ամսագրեր: Արևմտահայստանը, ավելի, քան երբևէ, կապվում է Կ.Պոլսի հետ՝ ազգային, հոգևոր ու մշակութային փոխհարաբերությունների նոր դրսևորումներով: Մի հայտնի չափով ժողովրդավարական բնույթ են ստանում Կ.Պոլսի Պատրիարքարանի և գավառական առաջնորդարանների փոխհարաբերությունները, զավառը կենտրոնի հետ առնչվում է առավել սերտ աղերսներով, ինչն, իր հերթին, դրականորեն է ներգործում ազգային հոգեվերելքի գործընթացի վրա: Արևմտահայերի մեջ ազատագրության հույսեր են արթնանում մանավանդ 1877-1878 թթ. ռուսթուրքական պատերազմից, օսմանյան կայսրությունից որոշ երկրների պոկվելուց (Բալկաններ), Բեռլինի համաժողովից և Բարենորոգումների կամ Հայկական հարցի ի հայտ գալուց հետո:

Ժամանակակիցները պատմում են, որ վերը թվարկված իրադարձությունները ազգային նոր շարժումների մղիչ ուժ են հանդիսանում ծնելով մեկից ավելի ազգային ու հեղափոխական կազմակերպություններ:⁷ Ոգևորությունների պատճառը այն էր, որ առաջին անգամ թուրքահայաստանի հարցը դրվում էր դիվանագիտական սեղանի վրա, և աշխարհի հզոր տերությունները խոստանում էին բարեկարգել արևմտահայերի

դրությունը:⁸ Սակայն տարիների ընթացքում ի դերն են ելնում Բեռլինի համաժողովի 61-րդ հոդվածի հետ կապված սպասումները, քանզի, խրախուսվելով մեծ պետությունների քաղաքական շահանով խարդավանքներից ու խաղերից և հասկանալով, որ նրանք ամենևին հետամուտ չեն ստանձնած պարտավորությունների կատարմանը, այլ պարզապես համաժողովի որոշմամբ թուրքիայի ամբողջականության, ապագայի առջև բացել են երկյուղի դուռ, օսմանյան կառավարությունը հրահանգում է կոտորել, տեղահանել արևմտահայերին ու կրճատել նրանց թվաքանակը այն աստիճանի, որպեսզի արտաքին ուժերը չկարողանան իրեն պարտադրել հայկական բարենորոգումների անցկացումը: 19-րդ դարի 80-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական գործիչները, որոնց հայացքները ձևավորվել էին բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի, Հայկական հարցի, ռուսական հեղափոխական շարժման, մասնավորաբար «Նարոդնայա վոլյա» կազմակերպության ու եվրոպական փիլիսոփայական, հասարակագիտական ուսմունքների ազդեցությամբ, վստահաբար կարծում են, որ այլևս բավական է մամուլի և գրականության միջոցով քարոզչությամբ զբաղվելը: Պետք է խոսքից գործի անցնել՝ գիտակցական, նպատակային ու կազմակերպված կռվի համար: Գլխավոր՝ Հայկական հարցի լուծման նպատակով են կազմակերպվում հայ քաղաքական կուսակցությունները. 1885թ. հիմնվում է «Արմենականների», 1887-ին «Հնչակյան» կուսակցությունը:⁹ «Մեկ հատիկ վերք կար այն ժամանակ մեր

5 Խրիմյան Հայրիկ, «Երկեր», Երևան, 1992, էջ 445:

6 Ստ. Սապահ-Գուլյան, «Երիտասարդ թուրքիա», Երևան 1991, էջ 40-45, 51-58:

Ս. Մարկոսյան, «Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին», Երևան 1968, էջ 49: Լեո, «Անցյալից», Թիֆլիս, 1925, էջ 193-195: Հ. Սառիկյանց, «Հուլեր 1878-1924թթ. մասին», Երևան 1934, էջ 7-45 (ՀՀ ՀԹԿՓ ԿՊԱ, ֆ.4047, ց.2, գ.11):

«Հայ ժողովրդի պատմություն», նշվ. աշխ., էջ 265-267:

7 Լ.Բայրամյան, նշվ. աշխ., էջ 135-138:

Մ. Назарбек, «Из воспоминания о создании и деятельности партии “Гичак”, Тифлис, 1918, стр. 1-18 (ՀՀ ՀԹԿՓ ԿՊԱ, ֆ.4045, ց.2, գ.27):

“Докладная записка о деятельности партии “Дашнакцутюн” за 1890-1908 гг.” стр. 1-19, (նույն տեղում ֆ.4047, ց.1, գ.68):

8 «Հայրենիք», Բոստոն, 1924, թիվ 10, էջ 54, Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 155-166: Ա. Մանդելշտամ, «Երիտասարդ թուրքերի պետությունը», Եջմիածին, 1916, էջ 1-6:

Հ. Շահրիկյան, «Բարենորոգումներու հարցը», Կ. Պոլիս, 1914, էջ 39-42, 109-115: «Փաստաթղթերի հավաքածու Հայկական հարցի մասին» [ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև ՀՀ ՊԿՊԱ), ֆ.450, ց.2, գ.8, ք.1-15]:

«Հայկական հարցն Արևմուտքում», Փարիզ, 1926, էջ 33:

Ս. Սերոբյան, «Հայկական հարցը և անոր փուլերը», Բեյրութ, 1937, էջ 71:

9 Մենք հանգամանորեն չենք ներկայացնում վերոհիշյալ խմբակների և քաղաքական կուսակցությունների պատմությունն ու գործունեությունը նկատի ունենալով, որ այդ մասին զրկված են մի շարք գրքեր և աշխատություններ: Մենք խիստ համառոտակի նշեցինք նրանց մասին, այսինքն այնքան, որքան անհրաժեշտ էր մեր առջև դրված խնդիրների հետագա ուսումնասիրության և վերլուծության համար: Տե՛ս ստորև թվարկված գրքերը և այլ պատմաբանների աշխատությունները: Լեո, «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», Փարիզ, հ. 1-ին, 1934, էջ 11-29, 141-160: Բ. Միքայելյան, «Բեկորներ իմ հուշերից» («Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 10, էջ 54-62):

Լ. Չորմիսյան, «Կուսակցությունները», Բեյրութ, 1965, էջ 22-39, 48-78, Գ. Նժդեհ, «Բաց նամակներ հայ մտավորականությանը», Բեյրութ, 1929, էջ 25-27, «Ռամկավար ազատական կուսակցություն», Երևան, 1991, էջ 54-68, Վ. Ղազարյան, «Ռամկավար ազատական կուսակցություն», Երևան, 1991, էջ 39-65, «Ծրագիր հնչակյան կուսակցության», Լոնդոն, 1897, էջ 1-8:

ազգային մարմնոյն վրա.թրքահայոց կացութիւնը, գոր հարկ էր դարձանել ամեն գնով»:¹⁰ Այդ սուրբ գործի կենսագործման համար պահանջ է զգացվում նույն դրոշի շուրջը միավորել ողջ հայութեանը: Եվ քանի որ մինչ այդ գոյություն ունեցող կուսակցություններն անընդունակ էին համախմբել սրտացավ ու մարտունակ անձնագոհներին, ուստի կազմակերպության աշխատանքների համակարգման և համազգային պայքարը ղեկավարելու նպատակով 1890 թվականի ամռանը հիմնադրվում է նոր մարտական-քաղաքական կուսակցություն Չայ հեղափոխականների դաշնակցությունը,¹¹ որը կոչված էր «համադրելու մեկ հզոր և ներդաշնակ բանակի մեջ երկրի ու զաղութներու բոլոր ըմբոստ, հեղափոխական խմբումները» հանուն Արևմտյան Չայաստանի քաղաքական և տնտեսական ազատության ընդհանուր ապստամբություն է, թե քանի որ տաճկաց կառավարությունը չի ուզում որևէ բարենորոգում անել Թուրքահայաստանում, իսկ Եվրոպան չի կամենում հայերի համար երկու զինվորի արյուն անգամ թափել, ապա տաճկահայերի կողմից անօգուտ ու վտանգավոր է ապավինել օտարներին: «Մեզ մնում է միայն դիմել ժողովրդական ապստամբության»: Թերթը ավելացնում է, որ դրա իրագործմանն է ծառայելու Չայ հեղափոխականների դաշնակցությունը՝ հայոց բողոքի և վրեժխնդրության մարմնացումը:¹² Նո-

10 Ս. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 39:

Փաստաթղթերի հավաքածու Չայկական հարցի մասին», էջ 1-15:

Լ. Սարգսյան, «Հուլիտի ՉՅԴ հիմնադրման և 1-ին համագումարի մասին», Թիֆլիս, 1924, էջ 50-93 (ՀՀ ՀԲԿՊ ԿՊԱ, ֆ.4047, ց.2, գ.9)

11 «Չայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 10, էջ 54-62:

Գ. Խուլիմյան, «ՀՀԴ 1-ին Ընդհանուր ժողովը», Երևան, 1992, էջ 5-10:

«Դիվան ՀՀԴ», Բոստոն, 1934, հ. 1-ին, էջ 88-89 (ՀՀԴ մամիֆեստը):

9 Մենք հանգամանորեն չենք ներկայացնում վերոհիշյալ խմբակների և քաղաքական կուսակցությունների պատմությունն ու գործունեությունը նկատի ունենալով, որ այդ մասին գրված են մի շարք գրքեր և աշխատություններ: Մենք խիստ համառոտակի մշեցիքն նրանց մասին, այսինքն այնքան, որքան անհրաժեշտ էր մեր առջև դրված խնդիրների հետագա ուսումնասիրության և վերլուծության համար: Տե՛ս ստորև թվարկված գրքերը և այլ պատմաբանների աշխատությունները:

Լեո, «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», Փարիզ, հ. 1-ին, 1934, էջ 11-29, 141-160:

Ք. Միքայելյան, «Բեկորներ իմ հուշերից» («Չայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 10, էջ 54-62):

Լ. Չորմիսյան, «Կուսակցությունները», Բեյրութ, 1965, էջ 22-39, 48-78, Գ. Նժդեհ, «Բաց նամակներ հայ մտավորականության», Բեյրութ, 1929, էջ 25-27, «Ռամկավար ազատական կուսակցություն», Երևան, 1991, էջ 54-68, Վ. Ղազարյան, «Ռամկավար ազատական կուսակցություն», Երևան, 1991, էջ 39-65, «Ծրագիր հնչակյան կուսակցության», Լոնդոն, 1897, էջ 1-8:

12 «Դրոշակ», ժնն, 1891, թիվ 1, էջ 4:

«Դրոշակ», 1986, թիվ 17, էջ 17-20 (Հ. Տասնապետյան, «ՀՀԴ Ա Ընդհանուր ժողովը և անդրանիկ ծրագիրը»):

«Դիվան ՀՀԴ», Բոստոն, 1934, հ. 1-ին, էջ 95-100:

«Ք. Միքայելյանը և ՀՀԴ-ն» (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.43, ց.1, գ.47, ք. 2-6):

րածին կուսակցությունը շուտով անօրինակ ու անձնուրաց նվիրումի գործելակերպով գրավում է թուրքական և ռուսական կառավարությունների ուշադրությունը հայդուկային տիպի ինքնապաշտպանական մարտավարությամբ մտահոգություն պատճառելով նրանց: Սակայն հեղափոխական գործունեությունը կուսակցությանը անդամագրվածներին անակնկալներ է մատուցում, չիմացված ճշմարտություններ բացահայտում արևմտահայերի կենսամակարդակի ու վերջինների պայքարունակության պատրաստվածության աստիճանի մասին: Չայ հեղափոխականների մի մասը կարծում է, որ տաճկահայերը դեռևս անպատրաստ են ոչ միայն ընդհանուր ապստամբության, այլև՝ ինքնապաշտպանության, որ ստրկամտությունը ներթափանցել է լայն խավերի ուղմ ու ծուծը, իսկ տվյալ հանգամանքներում օսմանյան կայսրությունում առաջմ հարկ է հրաժարվել անկախ Չայաստանի երազից ու գոհանալ զոնե բռնապետական վարչակարգի փոփոխմամբ ժողովրդական-ռամկավարականով, հայաշատ գավառներում վարչական ինքնավարության հաստատմամբ և բարենորոգումների անցկացմամբ՝ այդպիսով Թուրքիայում ապահովելով հարազատ ժողովրդի թեկնած միայն հայեցի ու բարեկեցիկ կյանքը:¹³ Մեկ-երկու տարում Չայ հեղափոխականների դաշնակցության մեջ առաջ են գալիս գաղափարական տարածայնություններ: Ընդդիմադիրները, այլախոհ կուսակցություններն առանձնանում են և շարունակում առանձին գործել՝ համաձայն իրենց սկզբունքների: Կուսակցությունը անվանափոխվում է ու կոչվում Չայ հեղափոխական դաշնակցություն:

Եթե սկզբնապես Դաշնակցության անդամները հասարակական-քաղաքական տարբեր մտայնության տեր մարդիկ էին, որոնք միավորվել էին նույն գործի՝ տաճկապատկան Չայաստանի քաղաքական և տնտեսական ազատագրման համար հեղափոխական ճանապարհով, ապա այժմ այն ոչ թե հեղափոխականների կամ հեղափոխական մարդկանց միություն էր, այլ՝ հեղափոխական դաշնակցություն, այսինքն՝ հեղափոխական կոնկրետ ծրագիր հետապնդող ու հեղափոխական գործելակերպով կուսակցություն, միով բանիվ՝ դաշնակցային իմաստով հեղափոխականների կազմակերպություն: «Հիմա նա նույն մտածումը և ծրագիրն ունեցող հեղափոխականների կուռ միություն է ու ոչ թե նույն նպատակն ունեցող հեղափոխականների դաշնակցություն», -գրում է դաշնակցական ակնամավոր գործիչ Նիկոլ Աղբալյանը:¹⁴ 1892թ. Դաշնակ-

13 Ս. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 95-97, Լ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 167-169:

«Դրոշակ», 1930, թիվ 11-12, էջ 329-332 (Կ. Սասունի, «Ընդհանուր ապստամբության խնդիրը հայ ազատագրական շարժման մեջ»):

«ՀՀԴ կանոնադրությունը» (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.69, ց.1, գ.289, էջ 1-26):

14 Լ. Հանգոյց, «Մտածումներ ՀՀԴ մասին», Երևան, 1992, էջ 71-76: «Չայկական հարցը և ՀՀԴ-ն» (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.166, ց.1, գ.51, ք.1-21):

ծագումն արդեն 19-րդ դարի վերջերին այդ գործում սուլթաններին ընդդիմադիր սահմանադրականները «Նոր օսմաններ» շարժման (1865թ.) ներկայացուցիչները, իսկ հետագայում՝ 1889թ. Կ. Պոլսում հիմնադրված «Միություն և առաջադիմություն» («Իթթիհատ վե բերագգը») կուսակցության նրանց գաղափարակից երիտթուրքերը:² Ու թեև սուլթանը ամենադաժան միջոցներով վերացնում էր իրեն բնուղատողներին, որոնք վերջնահաշվում ցանկանում էին գալ «իշխանության գլուխ», այնուամենայնիվ «Իթթիհատի» շուրջ են համախմբվում հակահամիդյանները պարբերաբար աշխատավարձ չստացող զինվորականները, պաշտոններից հեռացված կամ պետական հիմնարկների ցածր վարձատրվող աշխատակիցները, երկրի աղքատ խավերը, գործազուրկները: Համիդի հալածանքներից արտասահմանում (առանձնապես Փարիզում) ապաստանած երիտթուրքերը կապեր են հաստատում այնտեղ գտնվող օսմանահպատակ ազգերի (այդ թվում և՛ հայերի) կուսակցությունների, նաև Աբդուլ Համիդի բռնապետության դեմ պայքարող թուրքական ընդդիմադիր ուժերի հետ և հաջողում են նրանց նույնպես օգտագործել բուն նպատակին՝ իշխանության հասնելու պայքարում ընդդեմ սուլթանի:³ ՀՀԴ - «Իթթիհատ» փոխհարաբերությունները, որոնք սկիզբ էին առել դեռևս 1890-ականների կեսերին ժնևում, վերաճում են սերտ համագործակցության 1907թ. դեկտեմբերի վերջերին Փարիզում զուգարված օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի համագումարում: Հնչակյանները գտնում էին, որ այդ համաժողովով երիտթուրքերը կամենում էին վերականգնել 1876թ. Սահմանադրությունը, օրակարգից հանել Հայկական հարցը և օսմանացնել կամ թուրքացնել հպատակ ժողովուրդներին: Նրանք դատապարտում են այն հայ քաղաքական կուսակցություններին, որոնք ստորագրել էին 1907թ. Փարիզի համագումարի որոշումների տակ:⁴ Ընդհանուր առմամբ համաժողովին մասնակցում էր շուրջ 10 կազմակերպություն: Բացի երիտթուրքերից ու դաշնակցականներից այնտեղ գտնվում էին, օրինակ՝ «Ապակենտրոնացման և նախաձեռնության օսմանյան լիգայի», արաբական «Հայֆեթի», հրեական «Լավերանի», հայկական «Արմենիա», «Հայրենիք» ու «Ռազմիկ» թերթերի խմբագրությունների ներկայացուցիչները: Երիտթուրքերը հաջողում են հասնել այդ համագործակցությանը, քանի որ նախ՝ ՀՀԴ-ի նման նրանք ևս պայքարում էին Համիդի բռնակալության դեմ, ապա՝ կարողանում են համոզել դաշնակցականներին, որ արևմտահայերին կշնորհվի վարչա-

2. Գ. Շահիրիկյան, «Բարենորոգումներու հարցը», Կ. Պոլիս, 1914, էջ 56-57, 69, 144: Մ. Հասրաթյան ..., նշվ. աշխ., էջ 170-174, 195-203:

3 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1981, հ. 6-րդ, էջ 484-512:

Ստ. Սապահ-Գյուլյան, նշվ. աշխ., էջ 10-20:

4 «Հնչակ», 1907, ք.2, էջ 14:

«ՀՀԴ 1907թ. Ընդհանուր ժողովում ընդունված ծրագիրը», 1917, (ՀՀ ՊԿՊԱ, ֆ.393, ց.1, գ.301, ք.1-30):

կան ինքնավարություն, եթե իրենք վերցնեն իշխանությունը: Թվարկենք այդ համագումարում ընդունված որոշումներից մի քանիսը.

1. գահընկեց անել սուլթան Աբդուլ Համիդին,
2. երկրում հաստատել ներկայացուցչական կառավարում,
3. գարկ տալ հեղափոխական քարոզչությանը:

Նշված համագործակցությունը իրականացվեց և՛ երիտթուրքերի, և՛ դաշնակցության Աբդուլ Համիդի բռնակալության դեմ պայքարելու ընդհանուր մտայնության հիման վրա: Բնականաբար, ՀՀԴ-ն միայնակ, զուտ սեփական ուժերով կամ ազգային այլ ուժերի հետ համագործակցելով չէր կարող վերացնել բռնակալությունը Թուրքիայում: ՀՀԴ-ն դիմում էր այդ համագործակցությանը իր որոշակի պայմանները առաջադրելով: Կուսակցության ներկայացուցչական խորհուրդը դրանք ձևակերպել է Կ. Պոլսում տարածած 1908թ. սեպտեմբերի 1-ի շրջաբեժնակերպել է Կ. Պոլսում մասնավորապես գրված է. «Համոզված, որ ամեն մեկ պետության և մասնավոր օսմանյան կայսրության նման բազմալեզու երկրի մը քաղաքական լավագույն կազմը ֆեդերատիվ-ապակեղորուցման ձևն է, ՀՀԴ-ն կառաջարկե ստորև թելադրված պահանջները.

1. օսմանյան կայսրությունը, քանի կունենա սահմանադրական, ռամկավար ռեժիմ, պիտի ճանաչվի անկախ ու ամբողջական,
2. Թուրքաց Հայաստանը կկազմե կայսրության անբաժան մասը և կվարե իր տեղական գործերը,
3. օսմանյան կեղրոնական կառավարությունը, հիմնված ժողովրդական ներկայացուցչության սիստեմի վրա, կվարե պետության ընդհանուր գործերը՝ տեղական մյուս գործերը թողնելով շրջաններում...»:⁵

Արդեն հասկանալի է, որ քաջատեղյակ լինելով հայ քաղաքական կուսակցությունների (կոնկրետ դեպքում՝ ՀՀԴ-ի) տեսակետներին ու նպատակներին, իրենց շահերից ելնելով՝ երիտթուրքերը կեղծ խոստումներով կարողանում են նրանց ներգրավել Աբդուլ Համիդից իշխանությունը խլելու գործընթացում: Լինելով ազգայնամուլ ու այլամերժ, չճանաչելով նվաճված ժողովուրդների ինքնուրույն գոյության իրավունքը, կամենալով արյան մեջ խեղդել նրանց ազատամարտը, խուսափել եվրոպական միջամտությունից պետության ներքին գործերին և պահպանել կայսրությունը՝ երիտասարդ թուրքերը դիմում են քաղաքական ձեռնածության: Նրանք առերույթ ձևանում են սահմանադրական պետության, համապետական, ընդհանուր բարենորոգումների, ազգերի իրավահավասարության, նույնիսկ ոչ թուրք ժողովուրդների ինքնավարության կողմնակիցներ, որոնց հաստատման համար են իբր թե ուզում գահընկեց անել Աբդուլ Համիդին: Սուլթանին տապալելու երիտթուրքերի մի քանի փորձերը անհաջողության են մատնվում (1896թ., 1897թ.):

5 Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 422-431:

Գ. Շահիրիկյան, «Մեր հավատամքը», Կ. Պոլիս, 1910, էջ 35-36:

Մահապատիժները ու հալածանքները ավելի կազմակերպված են դարձնում նրանց ձեռնարկումները: Երբ 1908թ. ամռանը Ռուսաստանը և Անգլիան համաձայնության են գալիս ստրկացված Մակեդոնիայում բարենորոգումներ անցկացնելու հարցում, երիտթուրքերը դրանում նկատում են պետության անդամահատման հերթական միտումը: Դրանից խուսափելու համար նրանք որոշում են այլևս չհապաղել: 1908թ. հուլիսի 10-ին իթթիհատականները հեղափոխության անվան տակ կատարում են հեղաշրջում՝ աշխարհին հավատացնելով, թե Թուրքիան վերածվում է քաղաքակիրթ, եվրոպական կառավարման մոդել ունեցող երկրի, որտեղ բացակայելու են այլազգիների նկատմամբ կիրառվող ճնշումները, անհրավությունները և ապահովվելու են անձի, նրա պատվի և ունեցվածքի անձեռնմխելիությունը, խոսքի, մամուլի, դավանանքի պաշտպանությունը և այլն: Նրանք Աբդուլ Յամիդին վերահաստատել են տալիս 1876 թ. Սահմանադրությունը ու Թուրքիան հայտարարում են սահմանադրական պետություն իր խորհրդարանով և վերջինիս առջև պատասխանատու կառավարությամբ: Սեպտեմբերին «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հրապարակում է իր քաղաքական ծրագիրը: Դրան ծանոթագրողների մեջ ձևավորվում էր այն թյուր կարծիքը, թե երիտթուրքերը ժողովրդավարներ են, որոնք երազում են ոչնչացնել բռնապետությունը և ստեղծել խորհրդարանային համակարգով կառավարվող օսմանյան իրավական պետություն: Ծրագիրը պահանջում էր ազատամիտ ոգով փոփոխել Սահմանադրությունը, ազդարարում էր բոլոր քաղաքացիների լիակատար հավասարությունը օրենքի առաջ՝ առանց ցեղի ու հավատի խտրականության, առաջադրում էր նախարարների պատասխանատվության, պալատներին օրենսդրական նախաձեռնության իրավունքի վերահաստատման, սենատի 2/5-ը ժողովրդից ընտրելու, ընդհանուր ծայնատվության պահանջները, խոստանում շրջանային իշխանությունների իրավագործությունների լայնացում:⁶

Սակայն որքան էլ որ դեմոկրատական էր երիտթուրքերի ծրագիրը, այն փաստը, որ նրանք Աբդուլ Յամիդին չեն վտարում պալատից, այլ սկսում են համագործակցել նրա հետ, իրենց կամքն են թելադրում կառավարությանը ու աստիճանաբար ներթափանցում են պետական շրջանակներ, խոսում է իթթիհատականների քաղաքական կեղծիքի, համիդյան գծից չչեղվելու և նրա կատարելագործված հետնորդները դառնալու հավակնության մասին: Նրանց կառավարման հետագա ընթացքը ապացուցեց, որ երիտթուրքերը ոչնչով չէին տարբերվում սուլթան Յամիդից: Ու թեպետ Թուրքիայում հնչում են հմայիչ կարգախոսները՝ ազատություն, եղբայրություն, հավասարություն, թեպետ տեղի են ունենում համերաշխության ցույցեր, հանրահավաքներ, ձեռնարկվում են մի

6 Ա. Մանդելշտամ, մշվ. աշխ., էջ 6-18:

շարք ժողովրդավարական քայլեր,⁷ ասենք՝ բանտերից ազատ են արձակվում քաղբանտարկյալները, Կ.Պոլսի դռները բացվում են մինչ այդ անլեզալ գործող քաղաքական կուսակցությունների, թուրքական հայասպան քաղաքականությունից հետապնդված և արտասահմանում ապաստանած արևմտահայ մտավորականների առջև, տրվում է խոսքի, մամուլի, երթևեկի ազատություն, 1908թ. դեկտեմբերի 4-ին բացված տաճկական խորհրդարանի 10 հայ պատգամավորների թվում ընդգրկվում են նախկին հեղափոխական գործիչներից, բայց շուտով պարզվում է, որ այդ ամենը աչքակապություն է: Երիտթուրքերը անտարբեր են մնում հպատակ ժողովուրդների կենսական պահանջների նկատմամբ: Նրանք անձեռնմխելիորեն պահպանում են երկրի հին դրվածքը:⁸

Մինևույն ժամանակ աչքի է զարնում հետևյալ հանգամանքը. իր դիրքերն ամրապնդելու համար «Միություն ու առաջադիմությունը» բախվում և աշխատում է վերացնել մի կողմից երկփեղկված կառավարումից դժգոհ ու միահեծանության ձգտող Աբդուլ Յամիդի, մյուս կողմից գանազան թուրք ընդդիմադիր կուսակցությունների հարուցած արգելապատնեշները: Այլախոհները «Իթթիհատին» քննադատում էին ոչ գաղափարական հողի վրա, քանզի նրանց ծրագրերը գրեթե նույնն էին երիտթուրքականի համեմատությամբ: «Միություն և առաջադիմություն» կուսակցության հակառակորդների միտումը պետության մեջ իշխող բարձունքների նվաճումն էր: Նրանց մեջ ինչ-որ չափով յուրօրինակ տեղ էին զբաղեցնում համիդյան քսորից Ֆրանսիայից վերադարձած արքայազն Սաբահ Էդ Դինի «Անհատական ձեռներեցության ու ապակենտրոնացման» կուսակցությունը, որը կողմ էր ազգությունների վարչական ապակենտրոնացմանը, նաև «Ախարների» («Ազատականների») միությունը:

Այս իշխանապայքարում Աբդուլ Յամիդին հաջողվում է 1909 թ. մարտի 31-ին հետ վերցնել խլված իշխանությունը 13 օրով: Ապրիլի 13-ին «Իթթիհատը» կրկին զինված հեղաշրջմամբ իր ձեռքն է վերցնում երկրի ղեկավարությունը՝ սուլթանին մեկուսացնելով Մակեդոնիայի գավառներից մեկում՝ Սալոնիկում ու նրա փոխարեն գահին նստեցնելով եղբորը

7. «ՀՀԴ Կ. Պոլսի պատասխանատու մարմնի շրջաբերականը», Կ. Պոլիս, 1908, (ՀՀ ՀԲԿԿ ԿՊԱ, ֆ.4047, ց.1, գ.61):

8 «ՀՀԴ Դաշտավայրի ենթակոմիտեի կողմ դաշնակցական խմբերին», 1909, (ՀՀ ՀԲԿԿ ԿՊԱ, ֆ.4047, ց.1, գ.64):

«Անհայտ հեղինակի հուշերը 1905-1908 թթ. իրադարձությունների մասին Արևմտյան Հայաստանում» (նույն տեղում, ֆ.4047, ց.2, գ.16, էջ 1-7):

Հ.Սիրունի, «Ազատամարտի» սերունդը («Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 5, էջ 93-97, թիվ 7, էջ 73-83):

«Սովետական գրականություն» ամսագիր, Երևան, 1966, թիվ 10, էջ 137-139:

Մի կողմ թողնելով կառավարությանը ուղղված իթքիհատականների սուբյեկտիվ ու շահախնդիր պախարակությունների բուն ուղղվածությունը հիշենք, որ իթքիյաֆականների վեցամսյա տիրապետությունն ընդհանուր առմամբ համընկնում էր երիտթուրքական շրջանին բնորոշ վարչահամակարգին, որ նրանք փաստորեն միայն խոսքով էին ընդունում այլազգիների իրավունքները և Սահմանադրության անհրաժեշտությունը, իսկ իրականում իշխանատենչ ազգայնամուլներ էին:¹⁸ Տապալված իթքիյաֆականները չեն դադարեցնում դավադրությունների կազմակերպումը, անցնում են բացահայտ ահաբեկումների ու պետական պաշտոնյաների սպանությունների: «Իթքիատը» իրականացնում է հակամիջոցառումներ՝ մահապատժի մատնելով, ձերբակալելով և արտասահման քստրելով քաղաքական պարտությունից հետո տարբեր խմբակների ստորաբաժանված ու մասնատումից թուլացած ընդդիմությանը: Երիտթուրքերը ամբողջովին գրավում են վարչական և օրենսդիր իշխանությունները՝ ամենուրեք տեղավորելով հավատարիմ գործակալներին ու չհանդուրժելով այլախոհների գոյությունը: Արյունոտ հաշվեհարդար տեսնելով հակաիթքիատականների հետ՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը առավել լայն թափով է իրականացնում թուրքիայի ներսում թուրքիզմի, արտաքինում՝ համաթրքության քաղաքական ուղեգիծը՝ արհամարհելով ոչ թուրքերի ազգային-ազատագրական խլրտումների օրըստօրե հզորացող ալիքը ու միմյանց հաջորդող ռազմական պարտությունները: Հիշյալ հանգամանքներում արևմտահայության առջև անմախաղեպորեն ծառանում է կենաց և մահվան հիմնախնդիրը: Պարզ էր, որ թեև թուրքիան հավակնում էր դառնալ համաթրքական կայսրություն, սակայն իրականությունը նրան այլ ապագա էր կանխագուշակում: Նա աստիճանաբար ձեռքից բաց էր թողնում գրեթե բոլոր նվաճումները ու հանում ինքնապահպանության կառուցում վերջին հողակտոր-հանգրվանին՝ ժամանակին (11-րդ դարում) Փոքր Ասիայում և Արևմտյան Հայաստանում զավթած ու աշխարհին իբր թուրքերի հայրենիք ներկայացրած տարածքներին, որոնցից հեռանալու տեղ չունեին այլևս: Երիտթուրքերը գիտեին, որ այդ բնակավայրերի բուն տերերը վաղ կամ ուշ փորձելու էին վերահաստատել իրենց իրավագորությունները՝ վտարելով եկվորներին: Ուրեմն ըստ թուրք քաղաքագետների հարկավոր էր իսպառ բնաջնջել արևմտահայերին, մանավանդ, որ նրանք կարող էին խոչընդոտել համաթրքական պլանները իրագործելիս: Թուրքերի հայաջինջ ծրագրերի վերջնական ձևավորմանը և ի կատար ածմանը նպաստում են պատմական որոշ իրադարձություններ. նախ՝ 1912-1914 թթ. Հայկական հարցի կրկին ասպարե-

18 X. Агамрян. "Об армянской социал-демократической партии Гнчак", Баку, 1925, стр. 20-36 (ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ.4045, ց.2, գ.22):

զում հայտնվելը, հետո այդ հիմնախնդրից ցեղասպանությամբ ու անպատժելիությամբ ազատվելու Առաջին համաշխարհային պատերազմի՝ թուրքիային ընծեռած հնարավորությունները:

Բալկանյան պատերազմների տարիներին Մերձավոր Արևելքում ազդեցությունն ուժեղացնել ձգտող Ռուսաստանը սլավոնական երկրների նկատմամբ բռնում է հովանավորողի դիրք. նաև ինքնավարություն է պահանջում թուրքիայի կազմում գտնվող մի շարք ազգությունների համար: Նշված իրողությունից ու օսմանյան կայսրության պարտությունից ելնելով եվրոպական դիվանագիտության կողմից դարձյալ առաջ են քաշվում կայսրության անդամահատման և դրա հետ սերտորեն կապված Հայկական հարցը: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը, հաշվի առնելով հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունների պահանջները, դիմում է ռուսաց կայսրին խնդրելով միջամտել: Նա միաժամանակ եզրափակալ հասարակական գործիչ Պողոս Նուբար փաշային համաբնույթ խնդրագրերով հանձնարարում է մեկնել Եվրոպա: 1913թ. հունիսին Ռուսաստանը երիտթուրքական կառավարությանն է ներկայացնում բարեփոխումների ծրագիրը, ըստ որի հայկական վեց մահաճգները (Էրզրումի, Վանի, Բաղեշի, Դիարբեքի, Խարբերդի, Սեբաստիայի) պետք է վարչապետ միանային ու ստանային ազգային ինքնավարություն: Սակայն դրանով հակասություններ են առաջանում թուրքիայի, Ռուսաստանի և եվրոպական տերությունների արտաքին քաղաքական շահերի միջև, որով հետև Արևմտահայաստանի թեկուզ ներքին ինքնավարությունը դիտվում էր որպես նրա անկախության պաշտոնական թույլտվություն, ինչը կարող էր խանգարել նրանց Արևելյան նվաճողական նկրտումներին: Երկարատև քննարկումները հետո 1914թ. հունվարի 26-ին թուրքիայի ու Ռուսաստանի միջև կնքվում է համաձայնություն և ընդունվում Արևմտյան Հայաստանում կիրառվելիք բարենորոգումների ուրիշ ծրագիր, որում խոսք չկար ազգային ինքնավարության մասին: Արևմտահայաստանը տրոհվելու էր երկու վարչական միավորի: Դրանցից յուրաքանչյուրի տրոհվելու էր երկու վարչական տեսուչներ, որոնք հսկելու էին համար նշանակվելու էին եվրոպական տեսուչներ, որոնք հսկելու էին պաշտոնյաների, դատական, ոստիկանական հիմնարկների գործունեությանը: Թուրքական կառավարությունը պարտավորվել էր կատարել ազգային, մշակութային, վարչական և այլ բարեփոխումներ: Դրանց կենսագործման ընդհանուր վերահսկումն ստանձնել էր Ռուսաստանը:¹⁹

Այս բարեփոխումների նախագիծը իր նախորդների նման անգոր-

19 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, քիվ 12, էջ 122-133: «ՀՀԳ Արևելյան բյուրոյի հայտարարությունը», 1914, էջ 1-2 (ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ.4047, ց.1, գ.89): «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1981, հ. 6-րդ, էջ 520-535: Հ. Սառիկյանց, նշվ. աշխ., 164-176:

ծաղրելի մնաց: Եվրոպացի կառավարիչներ նորվեգացի Ն.Յոֆն ու հոլանդացի Լ. Վեսթենենկը ժամանելով Կ.Պոլիս հազիվ ձեռնամուխ եղած իրենց գործին հետ են ուղարկվում, որովհետև 1914թ. հոկտեմբերի 16-ին Թուրքիան մասնակցում է Առաջին համաշխարհային պատերազմին գերմանա-ավստրիական բլոկի կազմում՝ չեղյալ հայտարարելով հունվարյան համաձայնագիրը: Գաղութների և շուկաների վերաբաժանման նպատակներով պետությունների երկու Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի ու գերմանա-ավստրիական խմբակցությունների միջև սանձազերծված և համաշխարհային վերածված այս պատերազմում Թուրքիան համագործակցում էր գերմանիայի հետ և նրա օգնությամբ աշխատում ստեղծել օսմանյան հսկայածավալ կայսրություն, որի սահմանները ձգվելու էին Ալթայի լեռներից մինչև Միջերկրական ծով՝ ընդգրկելով Կովկասը, Ղրիմը, Բաշկիրիան, Թաթարստանը, Միջին Ասիան, Պարսկաստանը, Աֆղանստանը, Սիբիրը ու Տիբեթը:

Առաջին համաշխարհային պատերազմը ազատ է արձակում թուրքերի ձեռքերը: Նրանք, որպեսզի վերջ տան Հայկական հարցին և կանխեն արևմտահայության հետագա ազգային-ազատագրական շարժումները, 1914 թ. վերջերից սկսում են իրականացնել հայերի Ցեղասպանությունը:

ՀՀԴ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԹՈՒՐԵՒԱՅՈՒՄ 1909-1915 ԹԹ.

1909-1915թթ. Թուրքիայի համար վերոհիշյալ բարդ ու խճողված ժամանակաշրջանում բավական ինքնատիպ դիրքորոշմամբ է հանդես եկել Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ հավատարիմ մնալով իր ծրագրի ոգուն և դրույթներին: ՀՀԴ-ն ժողովներում, համագումարներում մշտապես վերլուծել է «Իթթիհատի» ու նրա ղեկավարած պետության վարքագիծը, որից ելնելով որոշել է սեփական գործելակերպի ուղղությունները: Նա մերժել է «ազատականների» «բարեկամությունը» և գործակցել ազգայնամուլ, այլամերժ երիտթուրքերի հետ, բայց ոչ թե հանուն նրանց շահերի, այլ հայ ժողովրդի համար սահմանադրական պետություն կառուցելու ցանկությամբ, որը կերաշխավորեր հայության ինքնավար ու ապահով կյանքը:²⁰ Սա է ընկած եղել ՀՀԴ-ի գործունեության հիմքում և սա է 1908 թ. Թուրքիան սահմանադրական հռչակվելուց հետո Դաշնակցության թելադրել փոխել գործունեության եղանակները՝ մարտական կուսակցությունից դառնալով մշակութային միություն՝ հավատալով, թե Հայկական հարցը հնարավոր է լուծել առանց եվրոպական դիվանագիտության միջամտության, այսինքն՝ համապետական,

20 Ա.Համբարյան, նշվ. աշխ., էջ 334-382:

«Ազատամարտ», 1909, թիվ 97-99, 134, 135:

Հ. Շահիրիյան, «Մեր հավատամքը», Կ.Պոլիս, 1910, էջ 42-49:

ընդհանուր բարենորոգումների ճանապարհով, որոնց շարքում հերթը կհասներ նաև հայկականին:²¹

Արտաքին ու ներքին պատճառներով պայմանավորված այսպիսի մտայնությունը ՀՀԴ-ին դրդել է գործակցել իթթիհատականների հետ գաղափարական տեսակետից գտնվելով ընդդիմադիր դիրքում նրա նկատմամբ, քանի որ Դաշնակցությունը չէր հրաժարվել հիմնական պահանջից՝ վարչական և քաղաքական ապակենտրոնացումից: Գործնական կյանքում ՀՀԴ-ն հակառակ էր «Իթթիյաֆին» ու անկախություն կամ ինքնավարություն կամեցող կայսրության հպատակ մյուս ժողովուրդներին, սակայն հոգու խորքում, գաղափարապես նրանց հետ էր:²² Այս հակասությունը կուսակցությունը պատճառաբանել է նրանով, որ հայերը հոգնել, ուժասկզբաբերելու էին եղել համիդյան ջարդերից, կեղեքումներից ու հանգստի, հոգևոր և ֆիզիկական կազդուրման, բարգավաճման կարիք էին զգում: Դա նրանց կարող էր տալ սահմանադրական վարչակարգը: Բնականաբար, ՀՀԴ-ն պիտի աջակցեր այն վերահաստատողներին իթթիհատականներին ու խուսափեր «ազատականներից», քանզի նրանք միայն խոսքով էին այդպիսին, իսկ իրականում Համիդի հարազատ ժառանգորդներն էին: ՀՀԴ-ն ամնասն է մնացել արտաքին օգնությամբ կայսրությունից անջատվել ցանկացող բախտակից ազգերի քաղաքական պայքարին, որովհետև նրանք հաղթանակի դեպքում ունենալու էին իրենց անկախ պետությունները, իսկ արևմտահայը հավերժորեն ապրելու էր թուրքերի հետ կողք-կողքի: Արևմտահայի համար այլընտրանք չկար, քանի որ եթե ուզենար ապրել թուրքերից առանձին, ապա կամ պիտի նրանց դուրս վնդդեր հայրենի երկրից, ինչն, ըստ ՀՀԴ-ի, հայերի ուժերից վեր էր, կամ պիտի թուրքը հայերին դուրս քշեր, ինչը նրա համար դժվար բան չէր, մանավանդ որ եվրոպական պետությունները անտարբեր, չկամեցող էին հայի դատին:²³

Այսպիսով 1909-1915թթ. ՀՀԴ-ն որդեգրել է համապետական բարենորոգումներով բավարարվելու և Սահմանադրության շրջանակներում, ստեղծագործ ազգային, հասարակական աշխատանքով զբաղվելու մարտավարություն՝ այն զուգորդելով իր ծրագրին չհակասող ընդհանուր պետական կարևոր խնդիրներում «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը օժանդակողի և նրա ընդդիմադրի ու քննադատի

21 «ՀՀԴ Կ.Պոլիսի պատասխանատու մարմնի շրջաբերականը», Կ. Պոլիս, 1908 (ՀՀ ՀԲԿ ԿՊԱ, ֆ.4047, ց.1, գ.61):

«Ելութեր ՀՀԴ պատմության համար», Բեյրութ, 1984, հ.1-ին, էջ 174-178:

22 Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության նախահանգստի վարչության կողմ, 1907, էջ 1 (ՀՀ ՀԲԿ ԿՊԱ, ֆ.4045, ց.1, գ.126):

Նույն տեղում, ֆ. 4047, ց.1, գ.68 (“Докладная записка о деятельности партии Дашнакцүтюн за 1890-1908 г.г.”)

23 Ուրբեն (Տեր-Մինասյան), «Հայ յեղափոխականի մը յիշատակարանը», Երևան, 1990, հ.7, էջ 14-20, 125-127:

«Մայրենի» ամսագիր, Երևան, 1991, թիվ 4-5, էջ 90, Ա.Մանդելշտամ, նշվ. աշխ., էջ X-VII: Տես նաև տույն աշխատության էջ 26-30:

գործառույթին: Դաշնակցության ընտրած ուղեգիծը սա էր. ամրապնդել սահմանադրական կառավարումը, զոհանալ դրա տված իրավունքներով, որոնցով ջանալ բարձրացնել հայ ժողովրդի տնտեսական, մշակութային մակարդակը, ազգային ինքնագիտակցությունն ու ինքնապաշտպանական ոգին: Փաստորեն, կարծես յուրօրինակ գինադադար էր կնքվել ԶԳԴ-ի և երիտթուրքերի միջև, որը, սակայն, շահավետ դուրս եկավ «Իթթիհատի» համար: Ու թեև Ադանայի եղեռնից հետո արևմտահայությունն ու ԶԳԴ-ի անդամներն արդեն սկսել էին անվստահությամբ լցվել երիտթուրքերի քաղաքականության նկատմամբ, բայց Դաշնակցությունը 1909թ. սեպտեմբերին տեղի ունեցած 5-րդ Ընդհանուր ժողովում որոշում է ընդունում շարունակել համագործակցել «Իթթիհատի» հետ: ԶԳԴ-ի նման կեցվածքը շատերի համար անընդունելի և անհասկանալի է մնում առ այսօր: Իսկ թե ինչ խնդիրների իրականացման համար էր կնքվել նման համագործակցությունը, փորձում է բացատրել ԶԳԴ 5-րդ Ընդհանուր ժողովի հայտարարագիրը. «ԶԳԴ-ն պիտի շարունակի համագործակցել թուրք երիտասարդ կուսակցության հետ՝ ի պաշտպանություն Սահմանադրության և պիտի համախմբի այդ գործակցության շուրջ այն բոլոր ընդդիմադիր տարրերին (հայ և օտարազգի), որոնք նպատակ ունեն պաշտպանելու նոր կարգերն ու ժողովրդի կեղեքված դասի շահերը»: ԶԳԴ-ն գնում էր այդ համագործակցությանը՝ հավատարիմ մնալով իր հիմնական սկզբունքներին. նպաստել թուրքիայի Սահմանադրության ամրապնդմանը և պաշտպանելով պետական ամբողջության սկզբունքը՝ ապահովել հայ ժողովրդի ազգային, քաղաքական ու քաղաքացիական իրավունքները: Երիտթուրքերի հետ համագործակցելով՝ ԶԳԴ-ն կարծես ցանկացել է կանխել օսմանյան կայսրությունում նշմարվող հայկական եղեռնը: «Սկստի առնելով, որ առանց բոլոր սահմանադրական տարրերու համագործակցության շատ դժվար, նույնիսկ անհնար պիտի ըլլա սահմանադրական ռեժիմն ապահովել և որ թուրքիո վստահելի տարրերը (շահագործված իրավակարգը արմատավորելու գործին) համախմբված են «Իթթիհատ վե թերազգը» կազմակերպության մեջ» ԶԳԴ-ն որոշում է շարունակել համագործակցությունը:²⁴ 1909-1915 թթ. Զայ հեղափոխական դաշնակցության գործելակերպը միանշանակ քննադատելը ճիշտ չի լինի: Այն, իրոք, զերծ չի եղել թերություններից, հաճախ՝ սխալներից, բայց թուրքական պետությունում, որտեղ թագավորում էին պանօսմանիզմի, համաթրքության ու «Մեկ ազգ, մեկ հայրենիք» կարգախոսները, ԶԳԴ-ն զերադասել է տվյալ պարագաներում ամեն կերպ ազգի գոյատևումը ապահովող, կոտորածների առիթ չտվող, ընդհանուր առմամբ քաղաքական անարյուն ճանապարհի հիմնվելով Արևմտյան Զայաստանի պատմաաշխարհագրական դիրքից, հայ ժողովրդի քաղաքական, թուրքիայի և ժամանակակից աշխարհի հասարակական-քաղաքական իրավիճակից

24 «Ազատամարտ», 1909, թիվ 98, 134.

բխող հանգամանքներից: Դաշնակցությունը, ինչպես ցույց են տալիս պատմական իրողությունները, չեն կարող կամ ի վիճակի չէր կռահելու կամ պատկերացնելու իրադարձությունների այսպիսի ընթացքը, որի աննախընթաց ողբերգականությունը բոլոր դեպքերում առաջադրում է Դաշնակցության պատասխանատվության խնդիրը հայ ժողովրդի պատմության առջև: Այս հարցի գիտական բացատրությունը, սակայն, ամենևին էլ դուրին և միանշանակ գործ չէ, այլ պետք է հենվի գիտական խոր ու բազմակողմանի հետազոտության վրա, որի մասին թերևս այսօր դեռևս վաղ է վերջնական եզրակացություններ անելը: Ասենք, մեր նպատակից էլ դուրս է այդ և չենք հավակնում վերջնական կարծիքի՝ բավարարվելով հիմնահարցի գոյությամբ:

1909-1915 թթ. հաղթահարելով արտաքին ու ներքին դժվարությունները՝ ԶԳԴ-ն ծավալել է բեղմնավոր գործունեություն արևմտահայ կյանքի բոլոր բնագավառներում: Նա հնարավորին չափով խուսափել է 10-ական թվականներին արևմտահայ իրականությունը խաթարող ներազգային, դասակարգային ու կուսակցական տարբեր շահերի և հոգեբանությունների անհամատեղելիությունից, բախումներից առաջացած պայքարից, դրա հետևանքով հայրենի տրոհված միջավայրի անբարենպաստ ազդեցություններից: Զայ հեղափոխական դաշնակցությունը պատգամավորների միջոցով մասնակցել է Առաջնորդարանի, Ազգային ժողովի, օսմանյան խորհրդարանի աշխատանքներին: Նա դիմադրած է կանգնել «սահմանադրականացող» թուրքիայի պետական կառույցների շինության գործընթացը ձախողողներին ու խանգարողներին: Դաշնակցական պատգամավորները, Բյուրոյի անդամները մշտապես հանդես են եկել օսմանյան պետության առաջընթացին նպաստող խելացի աջարկերով, խորհուրդներով, որոնց հետ հաշվի են նստել կառավարության աշխատակիցները:²⁵ ԶԳԴ-ն երբեք մոռացության չի մատնել Զայկական հարցը՝ անդադրում փնտրելով փակուղուց դուրս գալու միջոցներ: Նա թեև մերժում էր մշված խնդրում եվրոպական դիվանագիտության միջամտությունը, սակայն երբ 1914թ. հունվարի 26-ին կնքվում է ռուս-թուրքական համաձայնագիրը և մշանակվում են արևմտահայ նահանգների տեսուչները, կուսակցության անդամներից երկուսը՝ Զ.Ջավրիևն ու Գ. Փաստուչյանը մեկնում են Եվրոպա՝ Զոֆին և Վեստենենկին հայոց ազգային-ազատագրական շարժմանը ծանոթացնելու համար:

Դաշնակցությունը չի տարվել անտեղի լավատեսությամբ ու հրա-հանգել, նաև գործնականորեն կազմակերպել է արևմտահայության ինքնապաշտպանությունը, թեպետ նրան չի հաջողվել դա պահանջվածի պես անել:²⁶ Երբ 1914 թ. օգոստոսի 5-ին Երզրումում բացված ԶԳԴ

25 «Փաստաթղթեր Պոլստ շրջանի հեղափոխական կուսակցական գործունեություններ (1890-1914թ.թ.)» («Նյութեր ԶԳԴ պատմության համար», Բեյրութ, 1984, հ.1-ին, էջ 138-197):

26. Ա.Յամբարյան, նշվ. աշխ., էջ 427-473:
«ԶԳԴ և Պոլսի ինքնապաշտպանության կենտրոնական մարմնի շրջաբերականները» («Նյութեր ԶԳԴ պատմության համար», նշվ. տեղում, էջ 182-185):

8-րդ Ընդհանուր ժողովում քննարկվում է կուսակցության դիրքորոշումը պատերազմի, իշխող իթթիհատական կառավարության և ռուսական ու եվրոպական դիվանագիտության նկատմամբ, որոշում է ընդունվում, որ «Իթթիհատ վե քերագգ»-ի հանդեպ ԶԳԴ-ն պիտի շարունակի մնալ ընդդիմադրի և անաչառ քննադատի դերում՝ պայքարելով նրա ազգայնական, վնասակար քաղաքականության դեմ ու չժխտելով գործակցության սկզբունքը այն համապետական խնդիրների համար, որոնք կհամապատասխանեն ԶԳԴ ծրագրին: Նշվում է, որ թեպետ Զայկական հարցը կրկին դրվում է ռուս-թուրքական դիվանագիտական քննարկումների սեղանին, Զոֆը ու Վեստենենկն էլ ոգևորում են շատերին, սակայն Դաշնակցությունը առայժմ չի ապավինում օտարի միջամտությանը, չի տարվում դիվանագիտական հույսերով չմերժելով համապետական բարենորոգումները և հայության քաղաքական պահանջների իրագործումը հետաձգելով պատերազմի վախճանին, ընդ որում՝ դրանք անվանելով պետական ներքին հարցեր:²⁷

1909-1915 թթ. ազգային ինքնավարությունից բացի ԶԳԴ-ի առաջ քաշած պահանջներն առավելապես առնչվել են հետևյալ հարցադրումներին. ազգային լեզվի գործածության թույլտվությանը, պատգամավորների ընտրությանը, հավասարության սկզբունքով պաշտոնյաների նշանակմանը, զինծառայության համընդհանուր բնույթին, զենք կրելու արտոնությանը, հողային, դպրոցական հարցերին:²⁸ Տեսնենք, թե ի՞նչ մոտեցում էր ցուցաբերում Դաշնակցությունը սրանցից յուրաքանչյուրին և ինչպե՞ս է այն արտացոլվել ու վերհանվել «Ազատամարտ» օրաթերթում, «Ուսանող» և «Երկունք» ամսաթերթերում:

ԶԳԴ-ն ցանկանում էր, որ չարգելվի մայրենի լեզվի դասավանդումը ու գործածությունը ազգային դպրոցներում, իսկ պետական լեզուն ուսուցանվի չորրորդ տարվանից սկսած: Լեզվի հիմնախնդրին սերտորեն առնչվում էր դպրոցներին: Երիտթուրքերը հաստատել էին այնպիսի օրենքներ, որոնցով կկարողանային իրավապես անընդունելի համարել օսմանահպատակների ազգային կրթօջախները: ԶԳԴ-ն դեմ էր նման մոտեցմանը և պահանջում էր, որպեսզի թվաքանակով ու որակով թուրքականներին գերազանցող հայկական դպրոցներին շնորհվեր պե-

տական կարգավիճակ և դրանք ենթարկվեին ոչ թե Թուրքիայի լուսավորության նախարարությանը, այլ Ազգային վարչությանը, ստանային պետական դպրոցներին հատուկ նպաստ, իսկ շրջանավարտների համար մուտքը համալսարան ապահովվեր առանց քննությունների: Կառավարությունը քննում էր հայկական դպրոցներից ամեն մեկի ծրագրերը, դասակարգում էր ըստ թուրքական դպրոցների ու նոր դրանց իրավաբանորեն ճանաչում՝ վարչական կառավարման հոգսերը թողնելով հայերի տնօրինությանը և որոշակի գումար հատկացնելով իբրև նպաստ:

ԶԳԴ-ն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում երեսփոխանների ընտրությանը որպես պետության ղեկավարմանը հպատակ ազգությունների մասնակցության միջոցի:²⁹ Թուրքիայում սահմանված կարգով 10000 բնակչին բաժին էր ընկնում մեկ պատգամավոր: Սրանից ելնելով արևմտահայերը խորհրդարանում պետք է ունենային 20 երեսփոխան: Բայց այդպես չի լինում թե՛ 1908թ., թե՛ 1912թ. ընտրություններում: Երիտասարդ թուրքերը չէին ընդունում ազգային ընտրությունները, որովհետև այդ պարագայում օսմանյան խորհրդարանում թուրք երեսփոխանները փոքրամասնություն կկազմեին արաբների, հույների, բուլղարների, հայերի ու այլազգիների նկատմամբ, որոնք, հույների, բուլղարների, հայերի ու այլազգիների նկատմամբ, որոնք, փաստորեն, օրինական ճանապարհով կկառավարեին երկիրը: «Իթթի-փաստորեն, օրինական ճանապարհով կկառավարեին երկիրը» այնպես էր բաժանում ընտրատարածքները, որ հայաբնակ գահատը» այնպես էր բաժանում ընտրատարածքներով բնակեցված շրջաններին: Ընտրողների կեսից ավելին այդպիսով կազմում էին մահմեդականները, Ընտրողների կեսից ավելին այդպիսով կազմում էին թուրքերից կամ քրդերից: ԶԳԴ-ն ուստի երեսփոխաններն ընտրվում էին թուրքերից կամ քրդերից: ԶԳԴ-ն պահանջում էր, որ ընտրության գործը ամեն ազգ ինքը կատարեր: Մասնավորապես, արևմտահայության համար դաշնակցականներն ասում էին, որ հասանելիք 20 պատգամավորի ընտրությունը թող իրականացնեն հայերը իրենց գավառներում ստորաբաշխելով ընտրատարածքները ու ձայները տալով լավագույն թեկնածուներին:

ԶԳԴ-ն գտնում էր, որ սահմանադրական պետությունում պաշտոնները պետք է հավասարաչափ բաշխվեին առանց ազգային, կրոնական խտրականության՝ հաշվի առնելով անհատական արժանիքները: Երիտթուրքերը դիմում էին որոշակի զիջումների՝ տեղ-տեղ պաշտոններ հատկացնելով, անգամ երկու նախարար նշանակելով արևմտահայերից:

Թուրքիայում քրիստոնյաներին չէր թույլատրվում զենք կրել և ծառայել բանակում որպես զինվոր: Սա թուլացնում էր նրանց մարտական

27 Մ.Վարանդյան, նշվ. աշխ., էջ 438-443, 450-452:

Ռուբեն, նույն տեղում, էջ 54-57:

Ռուբեն, «Զայ-թրքական կնճիռը», Կահիրե, 1924, էջ 49-52:

«Քաղվածքներ ԶԳԴ 8-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից», 1914, էջ 12-14 (ԶԳ ԶԲԿՓ ԿՊԱ, ֆ.4047, ց.1, գ.88):

«ԶԳԴ Արևելյան բյուրոյի հայտարարությունը», 1914, էջ 1-4 (նույն տեղում, ֆ.4047, ց.1, գ.89): Նույն տեղում, ֆ.4047, ց.1, գ.90 («Կարսի կոմիտեի կոչը»):

28 «Դրոշակ», 1908, թիվ 9-10, «ԶԳԴ պաշտոնական պահանջները սահմանադրական Թուրքիայի կառավարությունից» («Նյութեր ԶԳԴ պատմության համար», նշվ. աշխ., էջ 176-180):

29 «Հնչակյան և ռանկավար կուսակցությունների ընտրական հանձնաժողովի հայտարարությունը «Դաշնակցության» նախընտրական գործելակերպի մասին», Վան, 1910, էջ 1 (ԶԳ ԶԲԿՓ ԿՊԱ, ֆ.4045, ց.1, գ.169): «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Երևան, 1979, էջ 111-136:

ՀՀԳ Կ.ՊՈԼՍԻ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԻՔԲԵՎ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ

Յուրաքանչյուր կուսակցություն ստեղծվում է սեփական պատկերացումների ու մտածելակերպի հիման վրա իր ժողովրդի գոյատևմանը սպառնացող ցանկացած տեսակի վտանգներից նրան անվնաս դուրս բերելու, նրա ներկայի կյանքը բարվոքելու և դեպի բարեկեցիկ ապագան առաջնորդելու նպատակով: Դա, անշուշտ, կոնկրետանում է որոշակի ծրագրում, որով էլ կուսակցությունը, ստանձնելով ղեկավարի դեր, պիտի կարողանա համախմբել, կազմակերպել ազգակիցներին՝ միավորված ջանքերով նախագծված դրույթները կենսագործելու համար: Պարզ է, որ այդ գործընթացում գաղափարաքարոզչական լավագույն օժանդակող ազդակը կուսակցական մամուլն է: Այն ոչ միայն չոր ու ցամաք, մերկապարանոց շարադրանքով ներկայացնում է տվյալ կազմակերպության հավատամքը, այլև դրա լույսի տակ վերլուծում է երկրի հասարակական-քաղաքական անցուդարձը՝ այդպիսով փորձելով վեր հանել այդ ոլորտների հիվանդագին երևույթները, հիմնախնդիրները և դրանց պատճառները՝ առաջարկելով ձերբազատման միջոցներ ու ապագայակառույց մտահղացումներ:

Ինչ վերաբերում է ՀՀԳ-ին, ապա նա բավական տքնաջան աշխատանք է կատարել դավանած գաղափարները հայությանը հասցնելու ուղղությամբ: ՀՀԳ-ն մշտապես գիտակցել է քաղաքական պայքարում քաղաքականորեն ազդեցիկ պարբերական մամուլի կարևորությունը: Արդեն 1891թ. հիմնադրվում է կուսակցության անսաթերթ «Դրոշակը»: Նույն տասնամյակում Ֆրեզդոյում տպագրվում է «Ասպարեզ» թերթը, Վառնայում «Շարժումը», Բոստոնում «Հայրենիքը»: Դաշնակցական մամուլը ծաղկում է ապրում 1900-ական թվականներին: Իրար են հաջորդում մեկ տասնյակից ավել թերթեր, անսագրեր, ընդ որում՝ հաճախ միևնույն լրագիրը տպագրվում էր տարբեր խորագրերով, քանի որ կառավարական համապատասխան մարմիններն արգելում էին դրանցից շատերի հրատարակումը:¹

1 Թվարկենք մինչև 1914 թ. տպագրված դաշնակցական թերթերից մի քանիսը: Մեկը մյուսին փոխարինելով՝ Թիֆլիսում լույս են տեսել «Հառաջը» (1905թ.), «Ալիքը» (1906թ.), «Երկիրը» (1906թ.), «Ձանգը» (1906թ.), «Ժամանակը» (1906-1907թթ.), իսկ 1907 թվականին «Փայլակը», «Խարիսխը», «Ժայռը», «Արորը», «Կուկասի առավոտը», «Նոր ալիքը», «Վտակը» (1907-1908թթ.), «Ձանգակը» (1908թ.), «Գործը» (1908-1909թթ.), «Դորիզոնը» (1909-1918թթ.), «Նոր ուժը» (1914թ.): «Գրոհ» (1906-1907թթ.) և «Թռուցիկ» (1906թ.) թերթերը հրատարակվել են Բաքվում, «Ժայռը» (1909-1911թթ.) Ալեքսանդրապոլում, «Ուզմիկը» (1905-1910թթ.) Ֆիլիպետն (այժմ Պոլովիվ), «Հառաջը» (1909-1914թթ.), «Ալիքը» (1914թ.) և «Երկիրը» (1914թ.) Կարինում, «Արորը» (1910-1911թթ.) Երզնկայում, «Պիծակը» (1911-1912թթ.) Տրապիզոնում, «Այգը» (1912-1922թթ.) Թավրիզում: Ի դեպ, Կ.Պոլսում 1908-1909 թթ. լույս է տեսել «Ազգակ» շաբաթաթերթը, որը չի եղել ՀՀԳ-ի պաշտոնաթերթ, այլ դաշնակցականների ուժերով է հրատարակվել: «Հայոց պարբերական մամուլը», Երևան, 1934, Մ.Վարանդյան, «ՀՀԳ պատմություն», Երևան, 1992, էջ 389, 396-397, «Հուշապատում ՀՀԳ», Բոստոն, 1950, էջ 562-579):

Շարունակելով դաշնակցական մամուլի ավանդույթները Թուրքիայի մայրաքաղաք Կ.Պոլսում 1909-1915թթ. լույս են տեսնում «Ազատամարտ» օրաթերթը և «Ուսանող» ու «Երկունք» անսաթերթերը: ՀՀԳ-ի հասարակական-քաղաքական հայացքների մասին ընդհանուր պատկերացում ունենալուց հետո, երբ ընթերցում ենք այդ 3 պարբերականները, համոզվում ենք, որ նրանք Դաշնակցության գաղափարախոսներն էին ու հիմնվել էին նրան ծառայելու, նրա դավանանքը ժողովրդին զանգվածաբար ներկայացնելու և հայությանը ազգապահպան ուղից տալու ցանկությամբ: «Ազատամարտը», «Ուսանողը» ու «Երկունքը» խմբագրականներում, առաջնորդող հոդվածներում պարզորոշ և անթաքույց խոսում են այս մասին՝ շեշտելով քաղաքական կուսակցության համոզմունքների հարազատ անդրադարձը լինելու պարագան: Նրանք կարևոր լիազորություններ են հատկացնում կուսակցական մամուլին և այն տարբերակում մամուլից առհասարակ՝ բնութագրելով նրա դերը, հատկանիշները, անցյալի փորձը և ներկայում նշնարվող թերությունները: Թերթերը կարծում են, որ հասարակության վրա որևէ կուսակցության ազդեցությունը որոշվում է ոչ միայն անդամների թվով, այլև մամուլով: Եթե կազմակերպության քանակական կողմը մատնանշում է որոշակի շրջանակներում նրա ունեցած ուժը, ապա մամուլը, սրանից բացի, տեղեկացնում է նաև, թե որքան մեծ է այն մարդկանց խմբակցությունը, որոնք թեև առերույթ չեն ընդունում տվյալ կուսակցության սկզբունքները, բայց որպես համակիրներ, քաղաքական շատ հարցերում նրա հետ են, նրա թեկնածուներին են ձայն տալիս ընտրություններում, կարդում են նրա հրատարակած գրականությունը և այլն: Ուրեմն ըստ ՀՀԳ Կ.Պոլսի թերթերի՝ մամուլի ծավալը կամ տպաքանակը հասարակական կյանքում կուսակցության ազդեցության աստիճանացույցն է: Հիշյալ տեսանկյունով են նրանք գնահատում դաշնակցական պարբերականները ու գրում, թե քանի որ դրանք լույս աշխարհ գալով ընդարձակում են տպաքանակը, ուստի դրանով ապացուցում են, որ կուսակցությունն աստիճանաբար իր ազդեցության ոլորտն է ներգրավում նորանոր զանգվածների:²

Մամուլի նկատմամբ այսպիսի տեսակետով է բացատրվում նրանց նախընտրած բնաբանը. «Կուսակցական ըլլանք»: Նրանք որևիցե կուսակցության պատկանելը համարում են դարի քաղաքական մեծագույն առաքինությունը, որն անհրաժեշտ է հանրության առաջադիմությանը:³ Այսուհանդերձ, գաղափարական հիմքի վրա ստեղծված այս երեք պարբերականները մեղ կուսակցական չեն եղել:

2 «Ազատամարտ», 1909, թիվ 7: «Ուսանող», 1909, թիվ 2, էջ 119-123: «Երկունք», 1912, թիվ 1, էջ 27-30, 1912, թիվ 2, էջ 50-53, 56:

3 «Երկունք», 1912, թիվ 3, էջ 57-58:

կան, գրական որոշակի ուղղություն, լինելու էր հայ մտավորականության ժամադրավայրն ու նրանց հուզող խնդիրների արտահայտիչը:¹⁶ «Ազատամարտի» վեցամյա գործունեությունը մեզ համոզում է, թե նա որքան հավատարիմ է մնացել իր սկզբունքներին, հնարավորին չափով կատարել ծրագրած նպատակները. համապարփակ պատկերացում է տվել ժամանակաշրջանի համաշխարհային հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի մասին, ճշմարտապես արտացոլել է թուրքական իրականությունը, աշխատել է բարձրացնել արևմտահայերի հոգևոր և քաղաքական պատրաստվածությունը, բացել նրանց աչքերը ու ներգրավել հայրենիքի ինքնավարության նվաճման գործընթացին:¹⁷ ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթի տեսադաշտից չի վրիպել որևէ հրատապ հարց, որի վերաբերյալ նա հստակորեն դրսևորել է համապատասխան վերաբերմունք: «Ազատամարտը» ընթացել է ճշմարտության և ազգային համերաշխության ճանապարհով, հաղթահարել է գաղափարի ու գրչի առջև թուրքիայում կանգնեցված պատնեշները և հանդես է բերել քաղաքական մարտադաշտում զենքը վայր չդնելու ունակություն:¹⁸ Այս հատկանիշների շնորհիվ օրաթերթը վաստակել է ընթերցողների համակրանքը: Այն եղել է սիրված ու գնահատված թերթ՝ ուրույն դիմագծով: Դրանում, անշուշտ, դեր է խաղացել ՀՀԴ-ի գործելակերպը: Այդ տարիներին Դաշնակցությունը հայ ժողովրդի ամենաազդեցիկ կուսակցությունն էր. ուներ պատգամավորներ օսմանյան խորհրդարանում, ներկայացուցիչներ Ազգային ժողովում: Բնական է, որ իբրև ՀՀԴ պաշտոնաթերթ՝ «Ազատամարտը» գտնվել է կառավարական շրջանների ուշադրության կենտրոնում, որոնք հաշվի են առել նրա կարծիքը պետական կարևորության հիմնախնդիրներով զբաղվելիս:¹⁹ Թուրքական թերթերը հաճախ են թարգմանաբար արտատպել «Ազատամարտի» խմբագրականները: Իսկ թուրք հասարակությանը Դաշնակցության տեսակետերին ծանոթացնելու միտումով 1911 թվականի թիվ 525-ից թերթում անգամ բացվել է թուրքերեն լեզվով բաժին: Այդտեղ տպագրել են «Ազատամարտի» նախորդող օրվա խմբագրականները, կարևոր հրապարակումներից մեկն ու մեկը, թուրքերին հետաքրքրող լուրեր և այլն: Օրաթերթին բաժանորդագրվել են բազմաթիվ այլազգիներ, հատկապես թուրք բարձրաստիճան պաշտոնյաները, պալատական ապարատի անդամները, որոնց ուղարկված օրինակները տպագրվել են ավելի որակյալ թղթի վրա:²⁰ «Ազատամարտը» հրատարակվել է նաև այլ առումներով՝ «Առաջամարտ» (1912թ.), «Բյուրանիա» (1912-1913թթ.), «Ազդակ» (1912-1913թթ.), «Բազին» (1912թ.), «Մեղու» (1913թ.), «Շանթ»

16 «Ազատամարտ», 1909, թիվ 3:

17 «Ազատամարտ», 1909, թիվ 7, թիվ 8:

18 «Ազատամարտ», 1909, թիվ 1:

19 Մ. Վարանդյան, «ՀՀԴ պատմություն», Կահիրե, 1950, հ. 2-րդ, էջ 22:

20 «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, թիվ 12, էջ 116-121:

(1913-1914թթ.) և «Ճակատամարտ» (1914թ.):²¹

Հրատարակման տարիներին «Ազատամարտը» ընթերցողների մեջ արթնացրել ու ամրապնդել է ազգային ինքնագիտակցության և ազատ կյանքի համար ծավալվող պայքարի ոգին, հանուն արդարության հաղթանակի չի երկնչել կառավարության հալածանքներից, պատժիչ տուգանքներից և նույնաբնույթ, հանիրավի դատական գործընթացներից: Օրաթերթը զարկ է տվել հայրենի գրականության բարգավաճմանը ու հայ գիրը հասցրել է Հայկական գավառի կամ Արևմտյան Հայաստանի ամենախուլ անկյունները՝ երբեմն որպես դասագիրք օգտագործվելով հեռավոր գյուղերում:²²

ՈՒՍԱՆՈՂԸ՝ ԵՎ «ԵՐԿՈՒՆՔԸ» ՀՀԴ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՄՆԱԿՆԵՐ

1909-1915թթ. «Ազատամարտը» եղել է ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնական խոսնակը Թուրքիայում, իսկ նույն թվականներին Կ. Պոլսում տպագրված «Ուսանողը» և «Երկունքը»՝ ՀՀԴ մասնաճյուղերը հանդիսացող Եվրոպայի ու Պոլսի ուսանողական միությունների ամսաթերթերը: «Ուսանող» և «Երկունք» ամսագրերի աշխատակազմի մասին սկզբնաղբյուրների բացակայության, կամ գրեթե բացակայության պատճառներով կարելի է միայն պնդել, որ դրանք ունեցել են խմբագրական մարմին և աշխատակիցների փոքրաթիվ շրջանակ (հիմնականում երիտասարդ մտավորականներ և ուսանողներ):²³ Նրանք նույնիսկ խուսափել են հրատարակվող նյութերի մեծ մասի վերջում կամ սկզբում գրել իրենց անունը ու մեծամասնությամբ (չնչին բացառություններով) հանդես են եկել կամ կեղծանվամբ, կամ անուն-ազգանվան սկզբնատառերով: Ի դեպ, դրանց իսկությունը պարզե-

21 «Հայոց պարբերական մամուլը», Երևան, 1934, էջ 57: «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն», Երևան, 1970, էջ 34: Մեր կազմած մատենագիտական ցանկը նույնիսկ է. 1909 թ. հունիսի 10-1912թ. նոյեմբերի 5 «Ազատամարտ», 1912 թ. այսպիսին է. 1909 թ. հունիսի 10-1912թ. նոյեմբերի 5 «Առաջամարտ», 1912թ. թիվ 1052-1062 նոյեմբերի 5-ից թիվ 1,2,3,4 (թիվ 1051) «Առաջամարտ», 1912թ. թիվ 1052-1062 «Բյուրանիա», 1912թ. նոյեմբերի 18-ից (թիվ 1063) մինչև դեկտեմբերի 23-ը (թիվ 1093) «Առաջամարտ», 1912թ. դեկտեմբերի 24-ին (թիվ 1094) «Ազդակ», 1912թ. դեկտեմբերի 25-ից (թիվ 1095) մինչև 1913թ. հունվարի 12-ը «Բյուրանիա», 1913թ. հունվարի 12-15-ը «Ազդակ», 1913թ. հունվարի 15-ից «Ազատամարտ»:

22 «Հայրենիք», 1924, թիվ 9, էջ 118:

23 «Ուսանող», Փարիզ, 1909, թիվ 1, էջ 1-3, 45-48, «Երկունք», Կ. Պոլիս, 1912, թիվ 1, էջ 30-31, «Ուսանող», Ժնև, 1909, թիվ 3, էջ 129-132, նույն տեղում, 1911, թիվ 6, էջ 3-8, «Ուսանող», Կ. Պոլիս, 1912, թիվ 7, էջ 280-288:

լը դժվարանում է արդեն նշված պատճառով: «Երկունք» նախնական խմորատիպ ամսագրի հրատարակմանը մասնակցել են Վանի Երանյան եւ Կենտրոնական վարժարանների շրջանավարտներ Գալուստ Էյ-նաթյանը, Մանվել և Բարունակ Կապուտիկյանները, Արամ Սաֆրաստյանը, Խոսրով Խանջյանը, Պարզև Պանիրյանը, Մանուկ Ասլանյանը, Տիգրան Ջրբաշյանը և ուրիշներ:²⁴

«Ուսանողի» առաջին համարը տպագրության է նախապատրաստվել Բեռլինում Եվրոպայի ԶՅԴ ուսանողական միության Գերագույն մարմնի երեք անդամների նախաձեռնությամբ, որոնք միաժամանակ եղել են ամսագրի խմբագրական մարմնի ներկայացուցիչները: Նրանց ջանքերով է, որ 1909 թ. փետրվարին և ապրիլին Փարիզում հաջորդաբար լույս են տեսել «Ուսանողի» 1-ին և 2-րդ համարները: Տպագրվել է ընդամենը 660 օրինակ: Դրանք ուղարկվել են Կ. Պոլիս (200 օրինակ), Տրապիզոն (10 օրինակ), Ջնյուռնիա (50 օրինակ), Կարին (20 օրինակ), Վան (20 օրինակ), Թավրիզ (20 օրինակ), Սալմաստ (10 օրինակ), Թեհրան (15 օրինակ), Տյուրիխ և Ժնև (80 օրինակ), Բեռլին (100 օրինակ), Լոզան (20 օրինակ), Բուլղարիա (30 օրինակ), Բոստոն (35 օրինակ), Կովկաս (50 օրինակ):²⁵

1909 թ. ապրիլի 10-15-ին Գերմանիայում տեղի է ունենում Եվրոպայի ԶՅԴ ուսանողական միության 2-րդ համագումարը: Այնտեղ քննարկվում են նաև «Ուսանողի» հրատարակությանը առնչվող խնդիրներ: Որոշվում է, որ ամսագրի խմբագրական մարմինը պետք է ունենա 3 կամ 5 անդամ և 2 փոխարինող անդամ: Նրանք պիտի ընտրվեին Եվրոպայի ԶՅԴ ուսանողական միության համագումարի մասնակիցների կողմից ու պատասխանատու լինեին նրանց առաջ: Խմբագրական մարմինը աշխատելու էր Գերմանիայում, իսկ ամսագիրը հրատարակվելու էր Ժնևում, Փարիզում, Կ. Պոլսում, Ջնյուռնիայում: Այսինքն՝ այնտեղ, որտեղ հնարավոր էր իրականացնել «Ուսանողի» լույս ընծայումը: Նշված համագումարում գաղտնի քվեարկությամբ ընտրվում են ամսագրի խմբագրական մարմնի անդամները (Վ. Վ., Ս. Ն., Բ. Կ.) և նրանց փոխարինողները (Ա. Բ., Ս. Բ.):²⁶ Տարիների ընթացքում այդ կազմը փոփոխության է ենթարկվել: Ասենք՝ 1912 թ. ապրիլին Ժնևում կայացած Եվրոպայի ուսանողական միության 4-րդ համագումարն ընտրել է գործադիր խմբագրական մարմին հետևյալ կազմով՝ Մ. Ղ., Լ. Բ., Ե. Տ.-Ս., Դ. Խ., Ս. Թ., իսկ փոխարինողներն էին Ե.-ն ու Շ.-ն:²⁷ «Ուսանողին» աշխատակցել

են Ե. Ֆրանկյանը, Վ. Խորենին, Ա. Շիրակունին, Ս. Վաթուրը, Վանիկը, Արմենը, Տրդատը, Արման, Մենելը, Ֆելիքսը և այլք: Իսկ «Երկունք» ամսագրում իրենց նյութերն են հրատարակել հիմնականում հետևյալ անձինք. Ա. Վտակյանը, Խ. Աստուրյանը, Կ. Թանտրջյանը, Գ. Մխիթարյանը, Մ. Չիլյանը, Ա. Սաֆրաստյանը, Ռիվարեցը, Ասլանը, Ասաֆը, Նելլան, Շահիրիմանը, Զ. Մ.-ն, Մ. Ա.-ն, Խ. Մ. Ա.-ն, Կ. Ս.-ն, Ս.-ն, Շ.-ն, Իքսը և այլն:²⁸ «Երկունք» ամսագրի արտոնատերն ու պատասխանատու տնօրենն էր Գալուստ Էյնաթյանը: Այն տպագրվել է Կ. Պոլսում, նախ՝ Օ. Արզումանի, ապա՝ Զ. Թիրյաքյանի տպարաններում:

«Ուսանողի» և «Երկունքի» ծննդյան գլխավոր դրդապատճառը և գործունեության անկյունաքարը իրենց մայր կուսակցության հիմնադրույթները ներկայացնելը, լուսաբանելը ու տարածելն էր, նաև Կ. Պոլսում և Եվրոպայի քաղաքներում սովորող դաշնակցական ուսանողների համախմբմանը և համագործակցությանը նպաստելը: Ամսաթերթերը պիտի աջակցեին ուսանողության (լայն իմաստով՝ երիտասարդության) ինքնակրթությանն ու ինքնազարգացմանը և ազգի մտավոր սերունցքի հարատևությանը: Ըստ «Ուսանողի» ու «Երկունքի» սրանք են ուսանողական թերթերի և ժողովածուների առջև դրված խնդիրները, որոնցով դրանք պետք է օժանդակեն կուսակցական մամուլի դաստիարակչական ու քարոզչական ձեռնարկին՝ այն դյուրացնելով և լրացնելով նախապատրաստական աշխատանքով:²⁹ Ամսաթերթերը պարզորոշ գրում են, որ իբրև ընդհանուր կուսակցության մի մասնիկը իրենք հավատարիմ են ԶՅԴ-ի հավատամքին ու կրում են նրա բնորոշ գծերը և դրոշմը:³⁰ Ապա ավելացնում են, թե կտպագրեն այնպիսի նյութեր, որոնք չեն հակասի դաշնակցության աշխարհընկալմանը ու կունենան գիտական (գրական) արժեք: «Ուսանողը» և «Երկունքը» միայն կուսակցական հիմնահարցերով չեն տարվել: Նրանց էջերում տեղ են գտել իմաստասիրական, գրական գեղարվեստական, հասարակագիտական զանազան աշխատություններ, ուսումնասիրություններ, հողվածներ: Ընդհանուր առմամբ, հիշյալ ամսաթերթերը դաշնակցական երիտասարդ մտավորականների տենչերի ու գաղափարների ամփոփ խտացումներն են: Իրենց հրապարակումներով նրանք դրսևորել են սեփացումներն են: Իրենց հրապարակումներով նրանք դրսևորել են սեփական արժեքավորող հայեցակետը երիտասարդությանը հետաքրքրող կան արժեքավորող հայեցակետը երիտասարդությանը հետաքրքրող հարցերի, ժամանակի կարևորագույն հիմնախնդիրների, հայ ժողովրդի ճակատագրի, ներազգային կյանքի դրական ու բացասական երևույթ-

24 «Չայ ժողովրդի պատմություն», Երևան, 1981, էջ 486:

25 «Ուսանող», ԺՆ, 1909, թիվ 3, էջ 199-210:

26 Նույն տեղում, էջ 213-216, «Ուսանող», Փարիզ, թիվ 2, էջ 65-67:

27 Նույն տեղում, Կ. Պոլիս, 1912, թիվ 7, էջ 273-288, Ժնև, 1911, թիվ 6, էջ 257-263:

28 «Երկունք», Կ. Պոլիս, 1914, թիվ 7, էջ 183-187, 1912, թիվ 6-7, էջ 187-192:

29 «Ուսանող», Կ. Պոլիս, 1912, թիվ 7, էջ 254-260: «Երկունք», 1912, թիվ 1, էջ 30-31, թիվ 4, էջ 96-99:

30 «Ուսանող», Փարիզ, 1909, թիվ 2, էջ 65-67:

ների նկատմամբ: «Ուսանողը» և «Երկունքը» կարողալիս անմիջապես զգացվում է, որ դրանք գրվել են ջահել, եռանդուն ու ինքնահաստատման ձգտմամբ համակված մարդկանց ձեռքով, որոնք որպես արդեն պատրաստված և լուրջ քաղաքական գործիչներ ներկայացնում էին հասարակական վերափոխմանը մասնակցելու անհերքելի ունակություններ:

«Ուսանողին» և «Երկունքին» բնորոշ է բանավիճային բնույթը: Ամսաթերթերը գաղափարակիցներին հնարավորություն են ընձեռել, որպեսզի նրանք անաչառորեն անդրադառնան ՀՀԴ տեսական ու գործնական մարտավարությանը, որով պիտի ինչ-որ չափով ջրի երես հանեին կուսակցության մեջ գլուխ բարձրացրած տարածայնությունները, փորձեին հասկանալ ու հարթել դրանք: Շատ դեպքերում «Ուսանողը» և «Երկունքը» ծայրահեղ են իրենց կարծիքներում, շատ դեպքերում՝ անհանդուրժող ու անվերապահորեն միակ ճշմարիտը երևալու հավակնող: «Ուսանողը» ու «Երկունքը» արտահայտվել են նաև մեկը մյուսի մասին, միմյանց դիտողություններ են արել, համագործակցության եզրեր որոնել և աշխատել օգտակար լինել թե՛ Դաշնակցությանը, թե՛ հայ ժողովրդին:³¹ Իսկ օգտակար դառնալու համար նրանք պիտի հաղթահարեին բավականաչափ դժվարություններ: Թվարկենք մի քանիսը՝ միջավայրը, նյութականի բացակայությունը և տպարանային անհարմարությունները: Ամսաթերթերը լույս են տեսել հասարակական հիմունքներով, դաշնակցական ուսանողների աղքատիկ նյութական միջոցների ու դասերից խլված ժամերի հաշվին, մասնավոր տպարանի, ֆինանսավորող հովանավորի, կայուն բաժանորդագրության բացակայության և պատրաստի համարների իրացման խիստ դժվարին պայմաններում: Դրանք տպագրվել են ազգային պետականությունից զուրկ ժողովրդի քաղաքական ընթրումներով բազմաշերտ ուսանողական միջավայրում: Ընդ որում, եթե «Երկունքը» հրատարակվել է օսմանյան կայսրության մայրաքաղաքում՝ քաղաքական պայքարը դեկավարող կուսակցությունների բուն կենտրոնում ու հնարավորություն է ունեցել անմիջականորեն և ուղղակիորեն մասնակցել դրան, ապա «Ուսանողը» կտրված էր հայրենիքից, տպագրվել ու տարածվել է Եվրոպայի քաղաքներում և, ասես, եղել է հարազատ եզերքից ժամանակավորապես բաժանված, հեղափոխական գործունեությանը խթանող հայկական իրականությունից կտրված տարագիր, որը մի տեսակ լսողի, վերլուծողի ու խորհրդատուի գործառույթ է կատարել: «Ուսանողի» կարծիքով այս հանգամանքը

31 «Ուսանող», Կ.Պոլիս, 1912, թիվ 7, էջ 268-272, 254-260, «Երկունք», 1912, թիվ 1, էջ 1-2, «Երկունք», 1912, թիվ 2, էջ 50-53, 56, «Երկունք», 1912, թիվ 4, էջ 96-99, «Երկունք», 1913, թիվ 10-11, էջ 281-284:

թուլացրել է Եվրոպայում սովորող հայ ուսանողների (մասնավորապես դաշնակցականների) հետաքրքրությունը Հայաստանում ծավալվող իրողությունների հանդեպ: Նրանց քաղաքացիական և քաղաքական անտարբերությունը հատկապես մեծացել է տեղի ուսանողական համայնքի բացասական ազդեցությամբ:

Եվրոպայի ուսանողներից շատերը հեզմանքով են նայել քաղաքականությամբ զբաղվողներին՝ նախընտրելով մշակութային կամ գիտական պրպտումները: Մյուսները օրերը սպանել են սրճարաններում, զվարճարաններում: «Ուսանողը» ու «Երկունքը» հրատարակվել են ահա այսպիսի արգելքներին կուլ չգնալով և դիմադարձ կանգնելով: Նրանք իրավամբ կարծել են, որ իրենց գոյությունը անհրաժեշտ է ժողովրդին: Ամսաթերթերը պետք է այնպես անեին, որ ՀՀԴ ուսանողական միությունները չվերածվեին կղզիացած, կյանքից կապերը խզած կազմակերպության, իսկ նրանց անդամները՝ պահպանեին բարոյական ու մտավոր ուժերը գալիք հասարակական ու քաղաքական տեղաշարժերի համար:³²

«Ուսանողը» ՀՀԴ Եվրոպայի ուսանողական միության ամսաթերթն էր: Այն հիմնադրվել էր այդ միության 1908թ. կայացած առաջին համագումարի որոշման համաձայն նախ և առաջ՝ նրա երեք նպատակներն իրագործելու համար.

ա) զրջով և խոսքով լուսաբանել ու տարածել ՀՀԴ ծրագիրը իբրև ՀՀԴ Եվրոպայի ուսանողական միության ոչ պաշտոնական օրգան,

բ) նպաստել հայ ժողովրդով բնակված տարածաշրջանների և երկրների (Կովկաս, Տաճկաստան, Պարսկաստան) հասարակական-քաղաքական, տնտեսական հիմնախնդիրների, դրանց պատճառների ուսումնասիրությանը ու լուծմանը,

գ) ծանոթացնել և ընթերցողին իրազեկ պահել եվրոպական ընկերվարական տարբեր ուղղություններին, սրանց սկզբունքներին, ընտրած գործելակերպին, հաղթանակներին ու պարտություններին՝ դրանով ավելացնելով ՀՀԴ-ի ընկերվարական փորձը:³³

Մեր ձեռքի տակ Հայաստանում կա «Ուսանողի» 8 համար՝ հրատարակված 1909-1914 թթ. Փարիզում (թիվ 1,2,5), Ժնևում (թիվ 3,4,6,8) և Կ.Պոլսում (1912թ., թիվ 7): Այն հրատարակվել է սկզբում որպես ոչ պարբերական (թիվ 1,2), իսկ միության երկրորդ համագումարից (1909թ.) հետո՝ որպես պարբերական հանդես, որը պետք է տպագրվեր երկու անգամ:

32 «Ուսանող», Կ.Պոլիս, 1912, թիվ 7, էջ 273-288, 254-260, 268-272, «Ուսանող», Ժնև, 1909, թիվ 3, էջ 119-220, «Երկունք», 1912, թիվ 1, էջ 30-31: «Манифест соц.-демократических делегатов и членов участвовавших на 6-ом конгрессе "Союза студентов армян Европы..."», 1905, стр. 1-2 (ՀՀ ՀԲԿԳ ԿՊԱ, ֆ. 4007, ց. 4, գ. 4):

33 «Ուսանող», Փարիզ, 1909, թիվ 1, էջ 1-3:

միսը մեկ: Սակայն նյութական, տեխնիկական միջոցների բացակայությամբ ու խմբագրական աշխատանքներին ուսանողների ցուցաբերած անպատասխանատու վերաբերմունքը խանգարում են իրականացնել մտահղացումը. «Ուսանողը» ուշ-ուշ է հրատարակում հերթական համարը: Յուրաքանչյուր թվի խմբագրականում թվարկվում են խանգարիչ, բայց օբյեկտիվ հանգամանքները, որոնց հետևանքով արդեն թիվ 6-ում տեղեկացվում է, թե ամսաթերթը կհրատարակվի տարին երկու անգամ:³⁴ Թիվ 7-ում «Ուսանողը» այլևս ՀՀԴ Եվրոպայի ուսանողական միության ամսաթերթը չէ, այլ՝ նույնաբնույթ ժողովածու: Նրա խմբագրականից պարզվում է, որ «Ուսանողի» կայուն հաճախականությունը աներաշխիք է, ուստի կտպագրվի միայն այն դեպքում, երբ հնարավորությունները կներեն:³⁵

ՀՀԴ Եվրոպայի ուսանողական միությունը «Ուսանողը» համարել է իր պարբերական օրգանը և ամենազխտավոր ձեռնարկը: Մեծ ուշադրություն է դարձրել նրա որակական առաջընթացին ու ամսաթերթի միջոցով կազմակերպության անդամների հետ անցկացվող կազմակերպական և դաստիարակչական գործառույթի ապահովմանը: Թիվ 3-ի խմբագրականում «Ուսանողի» աշխատակիցները հայտարարում են, թե նախորդ երկու թվերը հավանության են արժանացել ընթերցողների կողմից ու լիովին սպառվել են, իսկ թիվ 6-ում գրում են, որ հրատարակված թվերի 85%-ը վաճառվել է: Նրանք դա և ամսաթերթի նկատմամբ դրսևորված բարձր պահանջարկը բացատրում են այն իրողությամբ, որ «Ուսանողը» գուշակել ու պատասխանել է հասարակության որոշակի շրջանակներին հուզող հարցերին: Խմբագրությունը ավելացնում է, թե ներդրած ջանքերի արդյունքը գովելի է, քանզի ամսաթերթը իր տածած սպասելիքների վստահելի գրավականն է³⁶ ու գրվում է կուսակցական և կուսակցությանը հարող շերտավորված մտավորականության համար՝ աշխատելով բավարարել նրանց ամենքին:³⁷ Աշխատակազմը գոհ էր «Ուսանողից», թեև որոշ ուսանողներ առաջարկել են դադարեցնել, մյուսները՝ հրատարակել ՀՀԴ Կ.Պոլսի ուսանողական միության «Երկունքի» ամսաթերթի հետ համատեղ: Երկարատև բանավեճերից հետո երրորդ համագումարում (1912թ.) որոշում են «Ուսանողը» լույս ընծայել իբրև ՀՀԴ Եվրոպայի ուսանողական միության հրատարակություն (400-600 էջով, մեկ տարվա համար): Որոշումը հիմնավորվում է ամսա-

34 «Ուսանող», Ժնև, 1911, թիվ 6, էջ 3-8:

35 «Ուսանող», Ժնև, 1911, թիվ 7, էջ 3-6, «Ուսանող», Ժնև, 1909, թիվ 3, էջ 213-216:

36 «Ուսանող», Փարիզ, 1909, թիվ 1, էջ 45-48, «Ուսանող», Ժնև, 1911, թիվ 6, էջ 3-8, «Ուսանող», Ժնև, 1909, թիվ 3, էջ 129-132, 210-216:

37 «Ուսանող», Կ.Պոլիս, 1912, թիվ 7, էջ 3-6:

թերթի հրատարակության անհրաժեշտությամբ: Համագումարի կարծիքով, հարկավոր էր տպագրել «Ուսանողը», որովհետև այն արտահայտում էր եվրոպական քաղաքներում ցրված դաշնակցական ուսանողների կուսակցական հավատամքը, կապ էր հաստատում նրանց միջև, օգնում ընդունակ, բայց անվարժ գրիչների կատարելագործմանը: Այս ամենից բացի, ամսաթերթը իր բանավեճային թեքվածությամբ ընթերցողների մեջ առաջ էր բերում կուսակցական աշխատանք կատարելու տրամադրություն, նախաձեռնողական ջիղ, հոգատարություն Հայաստանի կենսական խնդիրների նկատմամբ: ՀՀԴ Եվրոպայի ուսանողների միության կարծիքով «Ուսանողը» պետք է ամսայան լույս տեսներ նաև այն պատճառով, որ ամսաթերթը դեռ չէր ավարտել ստանձնած առաքելությունը, այն է՝ զարգացնել երիտասարդ հայրենակիցների բնատուր ընդունակությունները, ձևավորել նրանց աշխարհայացքը՝ առաջացնելով հայրենիքի վերածնությանը պիտանի հոսանք:³⁸

Պատահական չէ, որ դրվել է «Ուսանողը» «Երկունքի» հետ համատեղ կամ միասին հրատարակելու պահանջը, որովհետև դրանք երկուսն էլ հիմնադրվել էին գրեթե նույն նպատակներով՝ ընդգծված ընկերվարական ուղղվածությամբ: «Ուսանողը» «Երկունքին» համարել է իր մանրանկարը՝ խորախուսելով նրա ծնունդը և մաղթելով, որ այն աջակցի կուսակցական մամուլի միջոցով ՀՀԴ-ի ընկերվարական տեսակետները տարածելուն ու ամրապնդելուն: Իհարկե, «Ուսանողը» որոշ չափով ծայրահեղության գիրկն է ընկել, երբ եզրակացրել է, թե «Երկունքը» ավելորդ է հասարակության համար, քանզի նրանում արծարծվում են արդեն ստեղծված դաշնակցական պարբերականներում բարձրացված հիմնահարցերը:³⁹

Յուրաքանչյուր թերթ կամ ամսագիր հիմնվում է, որպեսզի առաջին հերթին պատասխանի հրատարակիչների տեսանկյունից հասարակության կյանքի լուծման սպասող խնդիրներին՝ փորձելով օգնել պետական քաղաքականության մեջ նկատվող բացերի, թերացումների վերացմանը: Այսպիսի մոտեցման դեպքում լիովին հասկացվում է «Երկունքի» հրատարակման պատճառը: «Ուսանողի» և «Երկունքի» համար վերը թվարկված ընդհանուր նպատակներից բացի ՀՀԴ Կ. Պոլսի ուսանողական միության ամսաթերթը հրապարակ էր իջել, որ հնչեցներ դաշնակցության կողմից «սկանջի հետև օգված» ընկերվարական սկզբունքները, որպես երիտասարդ և թարմ մարմին օժանդակել կուսակցության կազմակերպական, քարոզչական աշխատանքներին, կապության կազմակերպական, քարոզչական աշխատանքներին, կապ պահպանել Պոլսի և Արևմտահայաստանի դաշնակցական ուսանողներին:

38 «Ուսանող», Կ.Պոլիս, 1912, թիվ 7, էջ 273-288, Ժնև, 1911, թիվ 6, էջ 3-8:

39 «Ուսանող», Կ.Պոլիս, 1912, թիվ 7, էջ 254-260, 268-272

րի միջև՝ ձգտելով թե՛ նրանց, թե կուսակցության անդամներին տանել ընկերվարական ճանապարհով:⁴⁰ Մի շարք հողվածներում «Երկունքը» մանրամասն թվարկում է հիմնարկեքի շարժառիթները՝ դրանք բխեցնելով առաջնայինից. լսելի դարձնել երիտասարդության ծայնը: Ըստ ամսաթերթի՝ երիտասարդ սերնդի ծայնը և պահանջներն ընկերվարական են ու քանի որ իբրև այդպիսին հարկ և պատշաճ ձևով չեն երևացել դաշնակցական նախընթաց մամուլում, ուստի դրանց հնչեցման համար է ասպարեզ գալիս «Երկունքը»:⁴¹ Ամսաթերթի հոգածության գլխավոր առարկան ուսանողությունը ու երիտասարդությունն են, որոնց ընկերային-քաղաքական համոզմունքների կառուցմանը և ազգի ապագան հղացող ուսանողության երկունքին են միտելու «Երկունքի» հրապարակումները: Ամսաթերթը ավելացնում է, թե ինքը գալիք կարգերը երկնելու ունակ ուսանող սերնդի մտահղացումների ու երազների արծագանքն է:⁴² Սերունդ, որն, ըստ ամսաթերթի, ուսումը ավարտելուց հետո պետք է անպայման վերադառնա գավառ, որպեսզի կուտակած գիտելիքների պաշարով նպաստի Արևմտյան Հայաստանի վերածննդին:⁴³

«Երկունքը», ինչպես ասվեց, եղել է 1911 թ. կազմավորված ՀՀԴ Կ.Պոլսի ուսանողական միության հասարակական, գիտական և գրական ամսաթերթը:⁴⁴ Հրատարակվել է 1912-1914 թթ. Կ.Պոլսում, ամիսը մեկ անգամ: Հիշյալ կազմակերպությունը ցանկացել է, որ «Երկունքը» դառնա իր հարազատ արտահայտիչը ու համագումարներում քննարկել է ամսաթերթի հրապարակության, բովանդակության և նախընտրած ուղղությանը առնչվող դժվարությունները, ասել թերությունները, բացթողումները ու սխալները: Եթե ՀՀԴ Կ.Պոլսի ուսանողական միության տարեկան առաջին համագումարում (1912թ.) գովեստով են խոսել «Երկունքի» մասին, ապա երկրորդում (1913 թ.), չուրանալով նրա խաղացած բարոյական շաղկապող օղակի դերը Արևմտահայաստանի և Կ. Պոլսի դաշնակցական ուսանողների միությունների միջև, չանտեսելով ընթերցողներին իբրև հասարակագիտական ամսաթերթ որոշ չափով գոհացնելու պարագան, հանգում են այն հետևությանը, թե «Երկունքը» նախ չի կատարել բուն նպատակը, որովհետև համարյա տեղ չի հատկացրել կուսակցության ծրագրի պարզաբանումներին, քիչ է տպագրել գիտական հողվածներ կամ գիտական թարգմանական աշխատություններ, երկրի տնտեսական, կրթական, մշակութային հիմ-

40 «Երկունք», 1912, թիվ 1, էջ 30-31:

41 «Երկունք», 1912, թիվ 2, էջ 56:

42 «Երկունք», 1912, թիվ 1, էջ 1-2, «Երկունք», 1913, թիվ 10-11, էջ 281-284:

43 «Երկունք», 1912, թիվ 2, էջ 33-34:

44 «Երկունք», 1912, թիվ 1, էջ 30-31:

նախնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններ, ապա՝ եղել է ոչ թե Կ.Պոլսի ուսանողական միության մեծամասնության, այլ նեղ խմբակի խմբագրության դիրքորոշումների արտահայտիչը: Թերությունները վերացնելու համար որոշվում են «Երկունքի» հետագա գործելակերպի ուղիները: Մասնավորապես առաջարկվում են հետևյալ բովանդակությամբ նյութեր. ՀՀԴ-ի ծրագրային-տեսական հարցերի, պետության տնտեսական, կրթամշակութային վիճակների շուրջ գրված հասարակագիտական ու բանավիճային հողվածներ, վիճակագրական ուսումնասիրություններ, գիտական ինքնուրույն կամ թարգմանական աշխատություններ, գրական գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններ, հայ և օտարազգի ուսանողների առօրյային ու միջազգային ընկերվարական շարժմանը անդրադարձող լուրեր, տեղեկություններ:⁴⁵

Այսպիսով՝ «Երկունքը», «Ուսանողը» և «Ազատամարտը» ծնվել են գաղափարական, կուսակցական հիմունքներով՝ որպես ՀՀԴ-ի գաղափարաքարոզչական պայքարի միջոց ու մինչև վերջին համարը մնացել են Դաշնակցության, նրա հայեցակետերի և քաղաքական կուրսի գաղափարախոսներ:

45 «Երկունք», 1912, թիվ 6-8, էջ 187-192, 1914, թիվ 7, էջ 183-187:

ՀՀԴ Կ.ՊՈԼՍԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՍԱՄՈՒԼԸ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱՆՆԵՐԻ ԿՐԻՆՈՒՄԸ

1909-1915 թթ. արևմտահայ (մասնավորապես պոլսահայ) իրականությունը, նրա կարևոր հիմնահարցերը, հայ-թուրքական փոխհարաբերությունները ու դրանց վերաբերյալ Հայ հեղափոխական դաշնակցության վերաբերմունքը, տեսակետները ու գործունեությունը արտացոլվել են այդ շրջանի ՀՀԴ Կ.Պոլսի պարբերական մամուլում՝ ձևավորելով նրա թեմատիկան ու բաժինները: Դրանք հիմնականում ամփոփվում են Դաշնակցության՝ վերը նշած պահանջ-հարցադրումների շրջանակներում: Հետագա շարադրանքում ընդհանուր գծերով պատկերացում կտրվի ՀՀԴ Կ. Պոլսի պարբերական մամուլի թեմատիկ պայմանական ստորաբաժանումների մասին՝ առանձնապես ծանրանալով «Ազատամարտի» վրա, որը ամենօրյա հրապարակումներով ՀՀԴ Արևմտյան բյուրոյի մամուլի պաշտոնական ներկայացուցիչն էր և կուսակցության հավատամքի, նրա մտահոգությունների և ուղեգծի անդավաճան արտահայտիչը:¹

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ «ԱԶԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ

Երբ ծանոթանում ենք ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթ «Ազատամարտի» ծրագրային հոդվածներին, խմբագրականներին, գավառներից ուղարկված թղթակցություններին, տեսնում ենք, որ այն երբեք չի շեղվում կուսակցության հասարակական-քաղաքական հիմնական ուղեգծից՝ լրագրողական բարձր վարպետությամբ լուսաբանելով, հայելու պես անսխալ անդրադարձնելով դաշնակցության քաղաքականությունը: Թերթը նույնպես կողմնակից է, որ արևմտահայությունը 1908թ. հետո պետք է հրաժարվի հատուկ հայկական բարենորոգումների անցկացման, Հայկական հարցի նկատմամբ միջազգային վերահսկողության հաստատումից ու պիտի ներքին ինքնավարությամբ ապրի նոր Թուրքիայում: 1909 թ. «Ազատամարտը» համոզված է, որ Թուրքիան կանգնած է սահմանադրական տիրակալություն

1 Հասկանալի է, որ տվյալ աշխատության շրջանակներում չի քննարկվի մշակութային հարցադրումների արտացոլումը ու վերհանումը «Ազատամարտում», «Երկունքում», «Ուսանողում», քանի որ դա առանձին ու մանրակրկիտ ուսումնասիրության թեմա է:

դառնալու շեմին և քաղաքական ու ընկերային դժվարին վերածնության առջև:² Գլխատվել է բռնապետությունը: Սերմանվում է սահմանադրական վարչակարգը: Երկրում անցումային, հնից նորին փոխանցման շրջան է:³ Հնարավոր են սխալներ, ոչ ճշմարիտ քաղաքական ուղու որդեգրում: Օրաթերթի կարծիքով, Թուրքիայի առաջընթացի միակ երաշխիքը Սահմանադրություն ընդունելն է. «Սահմանադրական ռեժիմը պետք է ըլլայ ազդակ բոլորին համար. այժմ չի կրնար և պետք չէ ըլլայ տիրող և տիրուող...Հաւասար քաղաքացիներ, հաւասար արդարութիւն»:⁴

«Ազատամարտը» անհրաժեշտ է համարում, որ սահմանադրական տարրերը համախմբվեն, օգնեն միմյանց, մատնանշեն ոտքի կանգնող, վերակազմավորվող պետությունը կառավարող մարմինների թերությունները, սայթաքումները, նպաստեն պետական ապարատի վերածնվածությանը, մի խոսքով՝ աջակցեն Թուրքիային՝ ընտրած ճանապարհով ընթանալուն: Սակայն, ինչպես հավաստիացնում է թերթը, անգամ միասնականորեն գործելու դեպքում խոչընդոտներն անպակաս են լինելու որոշակի պատճառներով: Նախ՝ թեև ընկել էր սուլթան Համիդը, բայց մնացել էին նրա հետնորդները, իսկ Համիդը՝ միայնակ ոչինչ էր, եթե գոյություն չունենար բյուրգլխանի համիդականությունը:⁵ Երկրորդ՝ «Ազատամարտը» կարծում է, որ ժողովրդավարական պետություն ստեղծելու համար պարտադիր է 5 գործոն. քաղաքական կուսակցություններ, էապես փոխված ժողովուրդ, խորհրդարան, կառավարություն, բանակ: Ըստ թերթի՝ դրանցից վերջին չորսը Օսմանյան Թուրքիայում չեն փոխվել բնությամբ, այսինքն՝ ներարկված են բռնապետական ոգով:⁶ Դրանք անկարող են ծառայել իրենց կոչմանը, եթե չդառնան սահմանադրական: Թվարկված 5 գործոնից միայն քաղաքական կուսակցություններն են, որ ունակ են վերափոխել մնացած չորսին՝ հանդիսանալով 1908 թվականի հեղաշրջման մասնակիցների երազած ժողովրդապետության միակ կայուն հիմքը: «Ազատամարտը» հողվածներում հիմնավորում է իր կարծիքը այս հարցում՝ նախապես բացատրելով, որ բռնության մեջ դարերով ապրած օսմանյան կայսրության ժողովուրդներն ստրկամիտ են: Նրանք, եթե նույնիսկ ենթադրվեն սահմանադրասեր, այնուամենայնիվ այդպիսին չեն, որովհետև բռնապետական բարքերը խառնվել են նրանց արյանը:⁷ Թուրքական «դժոխային

2 «Ազատամարտ», 1909, թիվ 1:

3 «Ազատամարտ», 1909, թիվ 23, 24:

4 «Ազատամարտ», 1909, թիվ 170:

5 «Ազատամարտ», 1909, թիվ 170:

6 «Ազատամարտ», 1909, թիվ 6:

7 «Ազատամարտ», 1909, թիվ 170:

վորդին համար և ժողովուրդին միջոցով» նշանաբանով՝ զարկ է տալու պետության արմատական բարենորոգմանը, ձգտելու է օսմանյան ազգերի արդար, իրավահավասար գործակցությանը, հայոց մտավոր, քաղաքակրթական մակարդակի բարձրացմանը: Հարկ եղած դեպքում բողոքելու է կառավարության խտտոր գործելակերպի, անարդարությունների դեմ³²: չելենելով զուտ հայաստակար նկատառումներից, «որովհետև պետութեան մէջ ուրոյն, առանձնակի շահեր» չի ճանաչում և ընդունում է, որ պետական շահերը «ուրոյն, անձնական շահերի համախմբումով» ընդհանուրի բաղադրությունն են³³:

«Ազատամարտը» քննում է Թուրքիայի անցուդարձը, անկողմնակալորեն վերլուծում խորհրդարանի աշխատանքացը, փորձում գործնական ավանդ բերել պետության դիմափոխմանը՝ հրապարակային քննարկումների դատին հանձնելով ընդհանուր հայրենիքի վերստեղծման համար խմբագրության առաջարկները: Առաջին համարներից սկսած՝ «Ազատամարտը» հողվածներում ներկայացնում է սահմանադրական երկրի մասին իր պատկերացումները: Կարծում ենք՝ հետաքրքիր է իմանալ, թե թերթը, օրինակ, ինչպե՞ս է գնահատել թուրքական հեղափոխությունը, զո՞հ է եղել արդյոք սահմանադրական ուժերի գործելակերպից: Այստեղ, անշուշտ, պետք է արծարծվի այն հարցը, թե ՀՀԴ պաշտոնաթերթը արևմտահայերի անվտանգությունը ապահովող ի՞նչ միջոցներ է առաջ քաշել:

Դեռևս անդրանիկ հողվածներում թերթը դժգոհում էր իրերի տիրող դրվածքից. «Այսօր արդեօք համարե՞նք... վտանգը անցած և երկիրը ազատութեան ճշմարիտ ճանապարհի վրայ»³⁴: «Ազատամարտի» վկայությամբ օսմանյան պետությունը շատ աննշան փոփոխութիւն էր կրել չհաշված առատ խոստումները ու «ինշալլահները»³⁵: Կացությունը անվստահելի էր: Կառավարությունը բնակիչների նկատմամբ վարում էր հալածանքի քաղաքականություն, բորբոքում էր ազգամիջյան ընդհարումներ, զանազան հնարքներով արգելում կյանքի բնականոն ընթացքը, կազմակերպում ջարդեր, կոտորածներ, ավեր ու թալան, զենքի միջոցով «խելոքացնում» ապստամբներին: Խորհրդարանն էլ «կամաց-կամաց սկսած էր ինքզինք բացասել»³⁶: Այն օրեցօր ընդունում էր մեկը մյուսից՝ հակասահմանադրական օրենքներ, որոնցով սահմանափակում էր քաղաքական կուսակցությունների, հասարակական միություն-

ների, կազմակերպությունների իրավասությունները, ոտնահարում խոսքի, մամուլի, խղճի ազատությունը, անում ամենավտանգավոր կործանվող վարչակարգի վերադարձը հեշտացնող քայլը, այսինքն՝ 1909թ. ընդունած որոշմամբ միապետին հնարավորություն էր տալիս ըստ կամեցողության հրաժարականի միջոցով լուծարել խորհրդարանը:³⁷ Թերթը հաղորդում է, որ հեղափոխությանը հաջորդած ամիսներին «կատարուեցան յետադարձ շարժումներ», սառեց դեպի «իսկական ժողովրդապետութիւն տանող տաք շունչը», գլուխ բարձրացրեց պահպանողականությունը, որի հետևանքով ուշանում էր սահմանադրությունը:³⁸

1909թ. թիվ 104-ի «Այսօր» բաժնում տպագրված հողվածը կրում է «Գրաքննությունը վերահաստատված» անվանումը: Տեղեկացվում է, որ Ռոդոսթյուն և գավառներում մաքսային պաշտոնյաները սկսել են կատարել գրաքննություն: Նրանք ամիսներ առաջ բռնագրավել են տեղի հայ վարժարանների աշակերտների համար ուղարկված դասագրքերը՝ իբր ստուգելու նպատակով և դեռևս չեն վերադարձրել հասցեատերերին: Դրա հետևանքով Ռոդոսթյոյի հայ վարժարանի սաները մնացել են առանց դասագրքերի: Փաստորեն սկսվել է հին խաղը՝ «ա լա Համիդ»:³⁹ Թերթը ուզում է իմանալ նախ՝ ո՞ր օրենքով, ի՞նչ իրավասությամբ է կատարվել այդ արարքը, ապա՝ մի՞թե նորից հաստատվել է գրաքննությունը: Ուսնծություններ են ձեռնարկվում մամուլի ազատության դեմ, իսկ ըստ թերթի՝ առանց մամուլի ազատության չկա հասարակական կարծիք: «Ազատամարտը» չի ընդունում նախարարների խորհրդի այն որոշումը, որի համաձայն՝ անձինք, ովքեր ուզում են նոր թերթ հրատարակելու արտոնություն խնդրել, կամ ովքեր ունեն այդ արտոնությունը, բայց դեռևս չեն սկսել հրատարակությունը, կամ ովքեր ցանկանում են վերահրատարակել որոշ ժամանակով չտպագրված իրենց թերթը, պետք է 500 ոսկի մուծեն կառավարության գանձանակին դրպես ավանդ: Օրաթերթը այս որոշումը որակում է իբրև մամուլի սահմանափակում և մենաշնորհ ունևորների համար⁴⁰: «Ազատամարտը» տեղեկացնում է Բ. դաան նոր հրահանգների մասին, որոնք ջնջում են ոչ թուրքերի ազգային իրավունքները: Օրինակ՝ քրիստոնյաների տարիքը ճշտելիս այլևս չեն ընդունվում մկրտության տոմարները:⁴¹ Մամուլի ազատության սահմանափակումը ու գրաքննությունը առավել խստանում

37 «Ազատամարտ», թիվ 5, 9:

38 «Ազատամարտ», թիվ 9:

39 «Ազատամարտ», 1911, թիվ 730:

40 «Ազատամարտ», 1912, թիվ 838:

41 «Ազատամարտ», 1912, թիվ 839, «Ազդակ», 1912, թիվ 1094:

32 «Ազատամարտ», թիվ 1:

33 «Ազատամարտ», թիվ 7:

34 «Ազատամարտ», թիվ 5:

35 «Ազատամարտ», թիվ 7:

36 «Ազատամարտ», թիվ 9:

են 1913 թվականի վերջերից սկսած⁴²: 1914 թ. թիվ 1508-ի «Չայ գրքերի դեմ հալածանք» հոդվածում ասվում է, որ Պոլսում և գավառներում ոստիկանությունը վերադարձել է համիդյան օրերի աշխատակերպին: Պատմվում է, որ օրեր առաջ Սկյուտարի հայկական սրճարաններից մեկի պատից ոստիկանը ցած է իջեցրել «Մայր Չայաստանի» նկարը: Իսկ Բեյրութի մաքսատանը գրաքննիչը ստուգում է Պոլսից ուղարկված յուրաքանչյուր հայերեն գիրք կամ նկար՝ բռնագրավելով այն ամենը, ինչը վնասակար է համարում: Նույնը կատարվում է Չալեպում: «Ազատամարտը» նշում է, որ կատարվածի մասին իրենք տեղյակ են պահել թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային, սակայն այդ դեպքերը շարունակում են կրկնվել: «Նշանակում է, որ կա մեզ համար անձանոթ ու գաղտնի կարգադրություն: Եթե այդպես է, մենք պահանջում ենք, որ այն հրապարակավ հայտարարվի: Պահանջում ենք, որ գիտնանք, թե հայ ժողովուրդը դուրս է ձգվել սահմանադրական ազատություններից: Պետք է վերջ տալ կառավարության երկդիմի ընթացքին», - գրում է օրաթերթը:

Արդեն 1910թ. հուլիսի 10-ի խմբագրականում վերլուծելով այդ համապետական տոնը՝ արվում է հետևություն. ծայր են առել հիասթափություններ, մոռացության են մատնվել իշխող և հպատակ ազգերի համագործակցության խոստումները: «Ազատամարտը» համոզված է, որ ելքը երկրի Սահմանադրությունը կիրառելն է, քանզի այն միայն թղթի վրա գրված օրենքների հավաքածու է: Սահմանադրության բերած հավասարություն և շատ ուրիշ գեղեցիկ բառերը մեռած տառերի կվերածվեն, եթե չօգտագործվեն կյանքում, եթե պետական պաշտոնավարության բոլոր ճյուղերում, կառավարության բոլոր բնագավառներում օսմանյան կայսրության ժողովուրդները իրենց թվին համեմատ ներկայացուցիչներ չունենան⁴³: Սակայն օրաթերթի նման պահանջ-առաջարկները, պարզ է, որ ոչ միայն անտեսվում են, այլև հետագա տարիներին, հատկապես 1912թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներից սկսած՝ առկա դժգոհությունները գնալով խորանում են՝ վերածվելով ինքնապաշտպանական բնույթի մտահոգության: Որպեսզի ասվածը ապացուցվի, բավական է թերթել «Ազատամարտի» այդ տարիների հավաքածուն: Չկա մի համար, որտեղ չլինեն թեկուզ բազմաթիվ լուրեր արևմտահայերի տարրական իրավունքների ոտնահարումների, նաև՝ կոտորածների, մասին: 1911թ. թիվ 679-ի «Չայոց ազգային ժողովը և կառավարությունը» հոդվածում, օրինակ՝ տեղեկացվում է, որ շուտով հայոց ազգային ժողովի վարչու-

թյունը կառավարությանը ներկայացնելու է բողոք-հիշատակագիր, որը պարունակում է այսպիսի հարցեր. հայկական գավառների ընդհանուր ապահովություն, հողային վեճ, վարչական բարենորոգումներ, ապօրինի հարկեր, բռնի առևանգում և նմանօրինակ այլ հակասահմանադրական անիրավություններ: «Ազատամարտի» կարծիքով կառավարությունը վերջապես պետք է ընդունի, թե մինչև հիմա պարտազանց է գտնվել հայկական գավառների ծանր վիճակի հանդեպ, վիճակ, որը կարող է անհետաձգելի հոգածության: Կառավարությունը անկարող է ժխտել գանգատի նյութը կազմող իրողությունները և լրջորեն ինքն իրեն արդարացնել սեփական անգործության ու անտարբեր հանդիսատեսի դերի համար: Այնուամենայնիվ, օրաթերթը գտնում է, որ կառավարությունը, բացի խոստումից, ուրիշ ոչինչ չի տալու բողոք-հիշատակագիրը ներկայացնողներին: «Մենք հոռետես ենք, որովհետև ունենք մեկից ավելի պատճառներ մեր աչքի առջև»: Կառավարության գործելակերպը բավական է, որ մեզ հեռու պահի որևէ լավատեսությունից: Չնայած դրան հիշատակագիրը պետք է ներկայացնել կառավարությանը», - կարդում ենք թերթում:⁴⁴ Թիվ 680-ի «Չայկական կյանք» բաժնում բերված են (գրեթե մեկ էջի սահմաններում) տասնյակից շատ օրինակներ գանազան գավառներից ստացված լուրեր սպանությունների, թալանի, հարստահարությունների մասին: Դրանք միայն բավարար են, որ «Ազատամարտը» կարողանա պնդել, թե Չայաստանի ապահովությունը վտանգված է:⁴⁵ Մեղավորն, ըստ թերթի, կառավարությունը ու նրա վարած քաղաքականությունն է. «Վա՛յ տկարին, քանի որ իրավունքը նրանն է, ով ուժեղ է»:⁴⁶

Այս դրությունը աստիճանաբար հանգեցնում է մտահոգության: 1912 թվականի կեսերին «Ազատամարտը» գրում է, որ Ադանայի շարդերից հետո սահմանադրական շրջանում հայ ժողովրդի քաղաքական ապահովությունը երբեք այսքան լուրջ վտանգի և սպառնալիքի տակ չի գտնվել: Այլևս կասկած չկա, թե գործում է հայահալած ու հայասպան համակարգ, որը անտես է մնում կառավարության աչքին և անպատիժ իշխանության ձեռքերից: Արևմտահայը արդեն մազաչափ անգամ չի հավատում պաշտոնական խոստումներին: Նա իր պատրիարքարանի ու քաղաքական կուսակցությունների միջնորդությամբ սպառել է օրենսդրական ամեն տեսակ միջոցները՝ կառավարությունից խնդրելով արդարություն և իրավունքների երաշխավորություն: Բայց իրականությունը նրան համոզել է, թե հայկական գավառները դուրս են ձգված օ-

42 «Ազատամարտ», 1913, թիվ 1159:

43 «Ազատամարտ», 1910, թիվ 330:

44 «Ազատամարտ», 1911, թիվ 679:

45 «Ազատամարտ», 1911, թիվ 680:

46 «Ազատամարտ», 1911, թիվ 682:

րենքի և իշխանության պաշտպանությունից:⁴⁷ Իսկ 1912թ. նոյեմբերի 15-ի «Օուռ նստենք, շիտակ խոսենք» խմբագրականում, որը ուղղված է թուրք ազգայնական կուսակցության պաշտոնաթերթ «Իֆիամի» հողվածներից մեկի դեմ, պարզաբանում են, թե վերջին 4 տարում արևմտահայերը և «Ազատամարտը» նույնպես առաջնորդվել են համերաշխության, եղբայրության, հավասարության գաղափարներով: Սահմանադրությունից հետո իրենք վայր էին դրել հեղափոխական պայքարի միջոցները և նվիրվել ընդհանուր հայրենիքի վերածնության գործին: Սակայն այսօր այդ զգացումը ճղակոտոր է եղել, լավատեսությանը հաջորդել է վիատությունը, վստահությանը՝ կատարյալ հիասթափությունը:

«Ազատամարտը» առանց վերապահության, առանց վախենալու, բացեփքաց, խստորեն և անաչառ դատապարտում է պետության բռնարքները ու հավատարիմ մնալով ելակետային կարծիքին, թե օսմանյան կայսրությանը ժամանակ է հարկավոր հռչակածն իրականացնելու, հետևողականորեն պնդում է Սահմանադրության անհրաժեշտությունը. «Օսմանեան արիւնոտ երկիրը ամենէն առաջ կը պահանջէ Սահմանադրութիւն որ կայ անունով, բայց իրօք գոյութիւն չունի»:⁴⁸ Թերթը վստահեցնում է, որ եթե իրադրությունը չփոխվի, ապա մշտապես շարունակվելու են քաղաքական խմորումները, կենտրոնախույս տրամադրությունները:⁴⁹ Արձանագրում է, որ նման վարվելակերպը արդեն բողոքի և դժգոհության ցույցերի ցանկություն է արթնացրել մարդկանց մեջ: Ըստ թերթի, այդ երևույթը բնական է, քանզի դրա համար «հող կայ, առիթ կայ»: Առիթը վերը նշված հիասթափության ալիքն է: «Սահմանադրական լաւագոյն տարրը՝ հայ ժողովուրդը՝ յուսախաբ, սրտաբեկ, նոյն իսկ ահաբեկ այն բոլորի հանդէպ, որ կը կատարուի Ատանա, Յալէպ և այլուր»: «Ազատամարտի» կարծիքով ցույցերի աղբյուրը ժողովրդական դժգոհությունն է՝ իբրև «արդիւնք անարդար, երերուն, անհամաստ քաղաքականութեան»⁵⁰: Առանձնապես հայերի նկատմամբ իրագործվող ոճրագործությունները, մեղավորներին չդատապարտելը ու անտարբերությունն են շատացնում արևմտահայերի տրտունջները: Թուրքը, հույնը, հայը, բուլղարը տրտնջում են, թե «րեաքսիօնը նորէն» մտնում է ասպարեզ, տրտնջում են, թե չի անցնի երկու ամիս, և ամեն ինչ տակնուվրա կլինի. «Մի՛ հաւատաք, եղբայր, մի՛, դուք չէք ճանչնար այս մարդիկը... Ի՛նչ ազատություն, ի՛նչ բան, այօշ խոսքեր են»:⁵¹ 1909 թվականի հավաքածուի գրեթե բոլոր համարներում «Ազատամարտը» անդրադառնում է Ադանայի կոտորածին, քննիչ հանձնաժողովների

գործունեությանը, նրանց կազմած գեկուցագրերին և ընդհանրապես ՅՅԴ-ի դիրքորոշմանը այս խնդրում: Թեև Դաշնակցությունը շահագրգռված էր Ադանայի եղեռնի մեղավորներին պատժելու հարցում, այնուհանդերձ շարունակում է համագործակցել այդ կոտորածը իրագործած կառավարող կուսակցության «Իթքիատ վե թերագգի» հետ: «Ազատամարտը» խուսափում է նեղ կուսակցական թերթերին բնորոշ պահվածքից: ՅՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը անգամ շատ դեպքերում հեռու է մնում այդ համագործակցությունը գնահատելուց և Դաշնակցության այդ քաղաքական քայլից դժգոհ պոլսահայ որոշ պարբերականների («Բյուզանդիոն», «Արևելք», «Ժամանակ» և այլն) հետ բանավեճի մեջ մտնելուց:⁵² «Ազատամարտը» նախ՝ մշտապես պատկերացում է տալիս Ադանայում կատարվածի, կոտորածից հետո քաղաքում ստեղծված վիճակի (աղքատություն, որբեր, արտագաղթ, հուսալքություն), հետաքննության արդյունքների մասին, ապա՝ կառավարության և երիտթուրքերի Սալոնիկի մասնաճյուղի մոտեցումն է փորձում ճշգրտել՝ ջարդի կազմակերպիչներին գտնելու գործում, աշխատում է հստակեցնել ՅՅԴ- Իթքիատ համագործակցության եզրերը՝ արձանագրելով նաև մյուս կուսակցությունների մոտեցումը այդ խնդրում: Թերևս կարելի է փաստել, որ ՅՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը Ադանայի եղեռնից հետո ի պաշտոն է ընդունել Դաշնակցության դիրքորոշումը երիտթուրքերի հանդեպ և հնարավորինս զուսպ է եղել գնահատականների ու լուսաբանումների մեջ:⁵³

Առաջին համարից «Ազատամարտը» հատուկ խորագրեր է հատկացնում Ադանայի ջարդերի վերլուծություններին (ասենք՝ «Նոր տեղեկություններ Կիլիկիայեն»): Տպագրված են լուրեր Ադանայից. «Գրեթե բոլոր կալվածքները թալանվեցան, տուները հրկիզվեցան: Չափահաս այր մարդոցմե միայն կեսը ողջ մնացած է: Յանցապարտներն ազատ կը մնան»: Նույն օրվա «Գավառական կյանք» բաժնում Ինժիրլիք գյուղից վերադարձած մի քանի մարդու տպավորություններն են ներկայացվում ընթերցողներին. «Ահա և գյուղը՝ ամայի և ավերակ: Ոչ ոք կա: Եկեղեցին 4 փլփլած պատերով միայն կարտահայտե իր գոյությունը: Ամբողջ գյուղին մեջ տեսանք միայն մեկ հայ կին մը՝ ոտքեն վիրավորված և անոր հետ՝ փոքրիկ մը՝ ազատված եկեղեցիի հրդեհեն: Մյուսները բոլորը, հայր թե զավակներ՝ ողջ-ողջ այրված էին եկեղեցիին մեջ: Կինը կատարյալ ապուշ մըն էր դարձած: Գյուղի ընդարձակ ջրհորներն մեկուն մեջ կար 65 դիակ՝ վրանին ծածկված խոտով»:⁵⁴

52 «Ազատամարտ», 1909, թիվ 63, 71, 75, 81, 83, 86, 93, 98, 151:
53 «Ազատամարտը» 1909թ. թիվ 4-ից սկսած տպագրում է Սիամանթոյի «Կարմիր լուրեր բարեկամիս» շարքը (թիվ 4, 8, 16, 27, 45 և այլն):
54 «Ազատամարտ», 1909, թիվ 3:

47 §Ազատամարտ», 1912, թիվ 981:
48 «Ազատամարտ», 1909, թիվ 3:
49 «Ազատամարտ», 1909, թիվ 2
50 «Ազատամարտ», 1909, թիվ 7:
51 «Ազատամարտ», 1909, թիվ 131:

«Ազատամարտը» տպագրում է նաև Ադանա, Թարսուս, Մերսին, Դյորթյուլ քաղաքներում ԶԳԴ բժշկական և փաստաբանական մասնախմբերի զեկուցագրերը,⁵⁵ որոնք ահազանգում են կատարված ուժիղների, եղեռնից փրկվածների անմխիթար կացության մասին: ԶԳԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը քննադատում է Ադանայի զինվորական ատյանի աշխատանքը. «Անոնք ևս, ինչպես եղած է մինչև հիմա, կը քննեն գործերն ու անծերն ո՛չ թե արդարության, այլ՝ քաղաքական պարագաներու տեսակետով: Ծանր ու ցավալի է այս իրողությունը»:⁵⁶ «Ազատամարտի» թղթակիցը Կիլիկիայից նաև տեղեկացնում է քննիչ մարմնի ապօրինի ձեռնարկներից մեկի մասին: Ձինվորական ատյանի հարցաքննիչ մարմինը Չոզակ գյուղի ջարդից ազատված մի հայ տղամարդու ստիպում է ծանուցագիր տալ, թե իրենց գյուղում ոչինչ չի պատահել: Թերթը հարցնում է. «35 ընտանիքե բաղկացած հայ գյուղ մը այսօր մոխրակույտ դարձած է, և բան մը չէ՞ պատահած»:⁵⁷

Ձինվորական ատյանի գործելակերպից դժգոհելու պատճառը այն էր, որ Ադանա են ուղարկվում օսմանյան խորհրդարանի և կառավարության հանձնաժողովները: «Ազատամարտը» հայտնում է, որ խորհրդարանական հանձնաժողովի նախագահ «Հակոբ էֆենդի Պապիկյանը կարգ մը պատճառներով, որոնց մեջ նաև՝ առողջական, թողուցած է Ատանան և ճամբա ընկած դեպի Պոլիս»:⁵⁸ Մեկ-երկու օրից «Ազատամարտը» թարգմանաբար արտատպում է «Իթթիհատի» թղթակցի հարցազրույցը Զ. Պապիկյանի հետ: Հայ պատգամավորը նրան ասում է, որ հանձնաժողովը այլևս անելիք չունի. «Ըստ իս՝ քննվելիք բան չմնաց»: Լրագրողի հարցին, թե կոտորածի կազմակերպիչն ո՞վ է, նա պատասխանում է. «Բռնապետության կուսակիցները: Թեև կեղրոնի կառավարությունը մասնակցություն չունի, սակայն ամեն պարագայի մեջ ինք պատճառ տված է: Ամեն պարագայի մեջ տեղական կառավարությունը մասնակցություն ունի»: Թվարկում է նաև կոնկրետ անուններ՝ նշելով. «Քրիստոնյա ցեղերը պատճառ տված չեն»:⁵⁹ Նույն օրերին տարածվում է Ադանայի կոտորածի հետաքննության զինվորական ատյանի կազմած տեղեկագիրը: «Ազատամարտը» այն որակում է որպես զրպարտություն հայերի դեմ. «Մեղավորը հայերն են: Այսպես կըստ զինվորական ատյանը: Բայց այդպես չեն ըսեր փաստերը»:⁶⁰ Թերթը թիվ 25-ի «Անարդար վճիռներ» խմբագրականում կառավարությունից պա-

55 Նույն տեղում, 1909, թիվ 8, 9, 10, 83:

56 Նույն տեղում, 1909, թիվ 8:

57 Նույն տեղում, 1909, թիվ 42:

58 Նույն տեղում, 1909, թիվ 11:

59 Նույն տեղում, 1909, թիվ 13, 48:

60 Նույն տեղում, 1909, թիվ 22:

հանջում է պաշտոնական զեկուցագրով հերքել զինվորական ատյանի տեղեկագիրը և սկսել դատական գործընթաց մեղավորներին պատժելու նպատակով, քանի որ արդեն կան քննիչ հանձնաժողովների արդյունքների ամփոփումները:⁶¹ Եվ հենց այստեղ է, որ երիտթուրքերը, ասես, քաղաքական խաղի մեջ են ներքաշում Դաշնակցությանը: «Իթթիհատը» առերես հրապարակավ հատուկ շրջաբերականով հայտարարում է, որ հայերը անմեղ են, և Ադանայի կոտորածի մեղքն ընկնում է հակասահմանադրական տարրերի ու տեղի կառավարող մարմինների վրա:⁶² Ադանայի նորընտիր կուսակալ Ջեմալ բեյը իր հերթին խճճում է խաղի կանոնները: Նա «Ազատամարտին» տված հարցազրույցում դատապարտում է Ադանայի կոտորածի կազմակերպիչներին. «Այդ բոլորը հետևանք էր 32 տարվա բռնակալության վարչության, ինչպես նաև հուլիսի 10-են մինչև մարտի 31-ը տիրող կառավարական անիշխանության»:⁶³ Արդեն օգոստոսի 24-ին «Ազատամարտը» տպագրում է ԶԳԴ «Իթթիհատ» համագործակցության շրջաբերականի հայերեն բնագիրը և խմբագրության խոսքը այդ առթիվ: Համագործակցության նպատակներն էին.

ա. օսմանյան տարրերի միջև լավագույն հարաբերությունների հաստատում,

բ. ԶԳԴ-ն և «Իթթիհատը» պետք է միացյալ ուժերով պայքարեին Սահմանադրությունը կիրառելու և Թուրքիայի առաջընթացի համար,

գ. պայքար «ռեաքսիոներական շարժումներուն դեմ»,

դ. պիտի հերքեին այն սուտ լուրերը, թե հայերն անկախության են ձգտում,

ե. համամիտ են նահանգների իրավունքների ընդլայնման (ինքնավարության՝ Մ.Հ.) գաղափարին և այլն:

«Ազատամարտը» նույն համարում հրատարակում է ԶԳԴ Կ. Պոլսի պատասխանատու մարմնի շրջաբերականը, որում նշվում էր պոլսահայ թերթերի («Բյուզանդիոն», «Հայրենիք», «Ժամանակ», «Արևելք», «Ծիաթան») քննադատական վերաբերմունքը ԶԳԴ-«Իթթիհատ» համագործակցության նկատմամբ: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ԶԳԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը շարունակ բանավիճում է պոլսահայ պարբերականների հետ՝ հերքելով նրանց տպագրած և իր համոզող հայ պարբերականների հետ՝ հերքելով նրանց տպագրած և իր համոզող մամբ սխալ տեղեկությունները նշված համագործակցության մասին:⁶⁴ «Ազատամարտը» կոչ է անում «դաշնակցական ընկերներուն և օրկաններուն անտես առնել հրապարակային հայիոյությունները, ըլլալ սառ-

61 Նույն տեղում, 1909, թիվ 18, 25:

62 Նույն տեղում, 1909, թիվ 29, 42:

63 Նույն տեղում, 1909, թիվ 38:

64 Նույն տեղում, 1909, թիվ 63, 71, 75, 81-83, 86, 93, 142:

զի ուժին է պատկանում մարդկային «ամեն ենթակայական ճշմարտութիւն, ամեն արդարութիւն, ամեն իրաւունք»:⁷¹

Հարատւման ու հզորանալու վճռականությունն սերմանելով՝ «Ազատամարտը» հարազատ ժողովրդին խորհուրդ է տալիս հրաժարվել ներքին երկպառակություններից, անձնական փառքի և օգուտի մասին անդադրում խորհելուց: Թերթը անարգանքի սյունին է գամում հայազգի այն անձնավորություններին, ովքեր «ազգին ցաւերի» մասին մտածողի ծիրանին հազած՝ երկփեղկման որոնն են առատորեն սերմանում շրջապատում: Արդյունքում «իրարու միս ուտելու» վտանգավոր հակումն էր բնավորվում մարդկանց հոգիներում: «Ազատամարտին» հուզում է ազգի միասնությունը սասանող նաև այն փաստը, որ «Պոլիսը կը մոռնայ գնվառը»: Մայրաքաղաքում կենտրոնացած հայոց սերուցքը զգալիորեն կտրվել էր բնիկ հայրենիքից՝ Գավառից կամ Արևմտահայաստանից, տարվել անհատական մանր-մունր, ինչ-որ տեղ համազգային հնչեղությունը կորցրած մտազբաղումներով ⁷²:

Օրաթերթը ժամանակակիցներին առաջարկում է օգտվել Սահմանադրության ընծեռած ամենաաննշան հնարավորությունից, խուսափել, հրաժարվել ներքին կռվից, գավառը ականջի ետև գցելուց և անտեսելուց, քանի որ հայ ժողովուրդը առավել, քան երբևէ ենթակա է հուսաբեկման, շատ վայրերում՝ գաղթի, սովի, կրոնափոխման, պանդխտության կորստաբեր հոսանքներին:

Համիդյան պաշտոնյաները, «րեաքսիօնըն» էլ իրենց հերթին սրում են ժանիքներն ու առիթ փնտրում՝ վերսկսելու հին արիեստը՝ հայակուլ խլրտումները: «Ազատամարտը» համախմբման է հրավիրում արևմտահայերին՝ թագավորող «ահաւոր կացութեան հանդէպ»՝ բացատրելով, թե հարկ է ձեռք քաշել այնպիսի սիրուց, երբ սիրում ես ազգդ, սակայն՝ ատում ազգակցիդ,⁷³ երբ հայ հարուստը անտարբեր է կարիքավորների, աղետյալների ճակատագրի նկատմամբ, երբ հայ պատգամավորներն ըստ պատշաճի չեն ծառայում ժողովրդին՝ զբաղվելով ժամավաճառությամբ, երբ կրոնավորները խճճվել են անսպառելի վիճաբանությունների լաբիրինթոսում, իսկ լրագրերը, արվեստի աշխարհի քրմերը չեն կարողանում դուրս պրծնել բամբասանքի պտտահողմից:⁷⁴ «Ազատամարտը» չի դնում արևմտահայերի անկախանալու խնդիրը: Ընդհակառակը, հիմք ընդունելով սկզբնական հայեցակետը՝ (այսինքն՝ Թուրքիայում ծլարծակվում են Սահմանադրության սածիլները, և այն «վերջ

71 Նույն տեղում, թիվ 11, 12:
72 Նույն տեղում, թիվ 104:
73 Նույն տեղում, թիվ 126:
74 Նույն տեղում, 1909, թիվ 96, 122:

ի վերջո պիտի ոտք դնի արդարության և ճշմարտության շավիղի վրայ»),⁷⁵ ասում է, թե տաճկահայը արդեն ունի պետականություն՝ օսմանյան վերանվանված կայսրությունը: Տաճկահայը այդ պետական ամբողջության «հավասարակից» տերն է մյուսների հետ և լիովին իրավագոր ու պարտավոր է աշխատելու նրա բարեշրջման, աստիճանաբար ռամկավարացման, աշխարհականացման, ապակենտրոնացման համար:⁷⁶ ՀՀԴ պաշտոնաթերթը հավատալով, թե նախկին կայսրության բաղադրամասերը «կարող պիտի ըլլան» պատրաստել վաղվա հաղթանակը՝ ժողովրդապետությունը,⁷⁷ պաշտոնատար անձանց, կառավարող շրջանակների, մեծամասնության համակրանքը վայելող «Իթթի-հատ վե թերագգը» կուսակցության հետ համագործակցության ու փոխադարձ օգնության ոչ միայն դիմումներով է հանդես գալիս, այլև կենդանի օրինակ է տալիս ժամանակակիցներին: «Ազատամարտը» շատ և շատ հողվածներում պարզորոշ, անթաքույց հիշատակում է իր (լայն առումով՝ ՀՀԴ-ի) հասարակական-քաղաքական մոտեցումը:⁷⁸ Մեջբերումներ անենք 1909 թ. սեպտեմբերին գումարված ՀՀԴ 5-րդ Ընդհանուր ժողովի՝ թերթում տպագրված հայտարարագրից: Դրանում Դաշնակցությունը հայտնում է ի գիտություն ամենքի, թե վայր է դնում բռնակալական վարչակարգի դեմ պայքարելու դավադրական միջոցները, որով հետև Թուրքիայում քարուքանդված կայսրության ավերակների վրա ձևավորվում է ազատության շենքը: Սակայն նա խոստանում է կրկին դիմել դրանց, եթե փորձ արվի վերահաստատել հին վիճակը: Կուսակցությունը գաղտնի չի պահում, որ կողմնակից է սահմանադրապետությանը, քանզի այն «մերձավոր և լավագույն» հանգրվանն է իր «ծրագրին և սկզբունքներուն մշակման ու գործադրութեան համար»: Նա նշում է նաև, որ ի պաշտպանություն Սահմանադրության շարունակելու է միասնական գործել երիտթուրքերի, թուրք մտավորականության, ինչպես և՛ հայ ու օտար ազգերի ընդդիմության համակիր ներկայացուցիչների հետ: ՀՀԴ-ն հայտարարում է, թե թողնելով անջատողական նկրտումները՝ տքնելու է հաստատել օսմանյան կայսրության այնպիսի քաղաքական և տնտեսական կարգեր, որոնք, պահպանելով թուրքական պետության տարածքային անձեռնմխելիությունը, կհիմնվեն ազգությունների տեղական լայն ինքնավարության վրա՝ ու կամրապնդվեն նրանց միջև հաստատված դաշնակցային կապերով:⁷⁹

75 Նույն տեղում, 1909, թիվ 33:
76 Նույն տեղում, թիվ 81:
77 Նույն տեղում, թիվ 97:
78 Նույն տեղում, թիվ 97-98:
79 Նույն տեղում, 1909թ., թիվ 97:

«Ազատամարտի» այս դիրքորոշումը բացատրվում է հետևյալ պատճառներով: Առաջին օրաթերթը, որպես ՀՀԴ-ի օրգանապաշտոնաթերթ, ոչ թե չի երազում, չի ցանկանում Արևմտյան Հայաստանի անկախությունը (այդ առումով բավական է վերհիշել ՀՀԴ-ի սկզբնավորման տարիների ծրագրային դրույթները, օրինակ՝ ապստամբության միջոցով ազատագրել Թուրքաց Հայաստանը), այլ ելնելով օրվա հրամայականից, քաղաքական իրավիճակից, ուժերի գուգադրումից՝ որպես նվազագույն պահանջ է առաջադրել Հայաստանի ներքին ինքնավարությունը օսմանյան պետության կազմում: «Ազատամարտը» բռնապետական Թուրքիայում առայժմ դժվարալույծ կամ գրեթե անլուծելի է համարում հայության նվիրական տենչի իրականացումը, հետևաբար հանուն անկախանալու մղվող պայքարով չի կամենում առավել մեծացնել թուրքերի հայաջինջ միտումները: Եվ քանի որ 1908թ. երիտթուրքերը թեկուզ արտաքուստ կայսրությունը հռչակել էին սահմանադրական և ենթակա ժողովուրդների հետ վարում էին բարի, դրացիական հարաբերություններ՝ ի լուր աշխարհի տարփողելով, թե իրենք հարգում են միջազգային (այդ թվում՝ Բեռլինի համաժողովի) դաշնագրերը ու պատրաստ են բարենորոգումներ անցկացնել բոլոր գավառներում, ապա հասկանալի է, որ «Ազատամարտը» ուզում էր թուրքական արյունոտ երկրում ապահովել արևմտահայերի գեթ ներքին կյանքի, կենսապայմանների կարգավորման հնարավորությունները: Ահա թե ինչ ենք կարդում «Թուրքական տագնապը» հոդվածում. «Ան...կը պահանջեր ապագայի համար ոչ թե անիրականանալի անկախություն մը, և կամ, ինչպես որ հիմարօրէն կը սենին՝ հայկական թագավորութեան յարութիւնը, այլ վարչական ինքնուրույնութիւն, ճիշտը ինչպես որ կանխատեսած էր Միտիաթեան Սահմանադրութեան մեջ»: 80

Նույն ժամանակաշրջանում Դաշնակցության վարած քաղաքականության մասին Մ. Վարանդյանը գրում է. «ՀՀԴ ռահվիրանները իրենց հրապարակախոսութեան մեջ ոչ միայն չէին արտասաներ անկախութիւն բառը, այլ չէին ընդուներ անկախութիւնը որպես պահանջ... ՀՀԴ-ն պարզեր էր կռիւ դրոշը յանուն Տաճկահայաստանի քաղաքական ու տնտեսական ազատութեան... Մերիմները գուցէ և բնաւ յոյս չունէին, թե Թուրքաց Հայաստանի աշխարհագրական և տեղագրական... այն օրերու պայմաններուն մեջ երբևիցէ կարենայ ստեղծիլ անկախ Հայաստան մը»: Դաշնակցության առաջին քաղաքագետները լավ են ըմբռնել, թե որքան գրգռիչ ու վանող է լինելու «հայ յեղափոխականներու ընթացքը յաչս իսլամ ազգաբնակութեան», եթե նրանք անկախություն պահանջեն այն «վիլայեթներուն մեջ», որոնցում մեծամասնություն էին

80 Նույն տեղում, 1909թ., թիվ 9:

կազմում մուսուլմանները: «Լավ կըմբռնէին մեր հին ընկերները, թե որքան յանդուգն ու ցնորական պիտի երևեր անկախ Հայաստանի պահանջը նման զարհուրելի պայմաններու մեջ»: 81

1912թ. նոյեմբերին հրատարակված խմբագրականներից մեկում Հայկական հարցը բնութագրվում է որպես Արևելյան Անատոլիայի վերափոխման ու բարենորոգման արդար և հասուն խնդիր, որի մասին նույնիսկ խոսելը համարվում է պետությանն ուղղված թշնամություն: 82 Այդ ժամանակահատվածից սկսած՝ «Ազատամարտը» մշտապես անդրադառնում է Հայկական հարցին, անգամ հենց այդ անունով բաժին է բացում: Այստեղ զետեղված տվյալ խնդրին առնչվող հոդվածների, հրատարակումների պատճառով նա պարբերաբար կամ դատի է տրվում, կամ փակվում իշխանությունների հրամանով, կամ փոխում սեփական անվանումը: Օրինակ՝ 1912թ. թիվ 1077-ի խմբագրականը ուղղված է իթթիհատական «Թերճենանը Հագիգաթ» թերթի խմբագրականի դեմ: Վերջինս դիմում էր արևմտահայ ընթերցողներին կոչով. թե մի՛ պահանջեք հայկական նահանգների առանձին բարենորոգումներ, այլ՝ ընդհանուր բարեկարգություն ամբողջ երկրի ու նրա բոլոր նահանգների համար: ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը վերլուծելով այս հարցադրումները՝ գալիս է այն եզրակացության, թե օսմանյան բարեկարգ պետությունը իրականություն կդառնա, երբ նրա բաղկացուցիչ յուրապետությունը իրականություն կդառնա, երբ նրա բաղկացուցիչ յուրապետությունը իրականություն կդառնա ինքնահատուկ բարենորոգում: 83 Իսկ քանչյուր երկրամաս ստանա ինքնահատուկ բարենորոգում: 84 Իսկ «Ո՞րն է ճիշտ, որը ոչ» հոդվածում է. Ակնունին հիշատակելով, որ Բալկանյան պատերազմի տարիներին Եվրոպայի կողմից բազմաթիվ կարծիքներ ու առաջարկներ եղան Հայկական հարցի առնչությամբ, ընդհուպ մինչև Հայաստանի անկախության, բայց դրանք ճիշտ մոտեցումներ չեն: ճիշտ է այն, որ օսմանյան Հայաստանն անկարող է մնալ առկա կացության մեջ՝ ապրելով մի կյանք, որը մահ է: ճիշտ է նաև այն, որ հայկական շրջանը կարոտ է հատուկ վարչաձևի, ապակենտրոնացման վարությունը թշնամանք չէ Թուրքիայի դեմ, այլ՝ լավագույն բարեկամություն, դավ չէ պետության դեմ, այլ՝ աջակցություն նրա վերակազմությանը: «Պի՛նդ գրկենք Հայկական հարցի լուծումը: Սա պետության օրվա վերքն է, որի բուժմամբ պետք է զբաղվեն պետական քաղաքական բժիշկները», -ասվում է հոդվածի վերջաբանում: 84 Այդ նպատակով է կարծես, որ 1912թ. դեկտեմբերի կեսերից ամեն համարում անդրադարձ է կատարվում Թուրքիայի ներքին գործերի նախարարության հայկա-

81 Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 104-105:

82 «Բյուրանիա», 1912թ., թիվ 1062:

83 «Ազատամարտ», 1912թ., թիվ 1077:

84 Նույն տեղում, 1912թ., թիվ 1078:

կան 4 նահանգների բարենորոգումների համար կազմած նախագծին: Այն գնահատվում է՝ նակերեսային: Նշվում է, որ իրենք պաշտպանում են հայկական նահանգների բարեկարգման անհրաժեշտությունը՝ դրա տակ հասկանալով լուրջ, արմատական ձեռնարկ, որը պիտի բարգավաճման առաջնորդի տեղի բնակչությանը: Սակայն «Ազատամարտը» վստահ չէ, որ «այսօրվա թուրքիայում կիրականանա հայկական բարենորոգումների որևէ նախագիծ կամ ծրագիր՝ հիմնվելով վերջինիս անցյալի ու ներկայի պետական գործունեության վրա:»⁸⁵

«Ազատամարտի» հասարակական-քաղաքական հայացքները ձևավորվել են իրականության թելադրանքով: ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը համագործակցությունը իթթիհատականների հետ համարել է չարյաց փոքրագույնը, փրկության միակ խարիսխը: Դրա պատճառը այն էր, որ այդ կուսակցությունը «ես արիւն թափեր էր ազատութեան համար և կուզէր թուրքիոյ խաղաղ բարգաւաճումը սահմանադրական կարգերու մեջ»: ⁸⁶ 1910թ. «Իթթիհատի և Դաշնակցության համաձայնության շուրջ» հոդվածաշարում Ռ.Դարբինյանը քննարկում է այդ համաձայնության կնքման ու ներկայումս գործակցության պայմանները: Նրա կարծիքով դա կարևոր քաղաքական քայլ էր՝ արևմտահայերի ֆիզիկական գոյությունը ապահովելու համար: Հոդվածագիրը շեշտում է, որ ՀՀԴ-ն շատ լավ է գիտակցում, թե որքան քիչ են իր շփման կետերը իթթիհատականների հետ, և թե որքան մեծ է այդ կուսակցությունների ընկերային-քաղաքական հորիզոնների տարբերությունը: Այնուհանդերձ այդ համաձայնությունը պիտի ծավալվի ու կենսագործվի երկու էական կետի շուրջ.

1. ներդաշնակ գործակցություն սահմանադրական վարչակարգի պահպանման և ամրապնդման համար,
2. նահանգային ու գավառային ինքնավարությունների իրականացման համար:

Հրատարակման տարիների ընթացքում ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը հավատարիմ է մնացել ՀՀԴ «Իթթիհատ» համագործակցությանը և հարկ եղած դեպքում քաղաքական իշխանապայքարում գրեթե մշտապես աջակցել է «Իթթիհատին»՝ չխուսափելով անհրաժեշտության թելադրանքով քննադատել նկատած սխալները ու մատնանշել թերությունները: Օրինակ՝ 1912թ. 787-ի խմբագրականում նշվում է, որ «Իթթիհատը» 4 տարի եղել է տիրող, կառավարական կուսակցություն, բայց «ոչինչ ըրավ լուրջ ու տեմոկրատիք՝ գրավելու համար հասարակական լայն շերտերը»: ⁸⁷ Եթե ասվածին ավելացնենք պար-

զաբանման սպասող երկրորդ պատճառը, լիովին ըմբռնելի կդառնա թերթի ՀՀԴ-«Իթթիհատ» համագործակցությանը պատրաստ լինելու հակումը: Դա այն հայանապատ կեղծ մթնոլորտն էր, որ անգերազանցելի վարպետությամբ ստեղծել էին թուրք քաղաքագետները: Վերջինս էլ ինչ-որ չափով, ինչ-որ տեղ թուլացնում էր արևմտահայերի զգոնությունը, խանգարում կողմնորոշվել քաղաքական կենսամշուշում: Բերենք ասվածը համոզող օրինակներ «Ազատամարտից»: Թերթում մեջընդմեջ կարդում ենք երիտթուրքերի ու դաշնակցականների, հնչակյանների և իթթիյաֆականների, հայկական և քրդական կուսակցությունների համաձայնագրերը, համատեղ դիմումները ողջ բնակչությանը՝ Սահմանադրության կիրարկումը նորմալ ձևով կազմակերպելու նպատակով: ⁸⁸ Կարդում ենք նաև դեպի արևմտահայերը իթթիհատականների տածած «համակրանաց հավաստիք»-ի մասին: ⁸⁹ «Իթթիհատ վե թերագրի» պատգամավորներից ոմանք կազմել էին «Չափավոր ազատական» կուսակցությունը, որը միաբանություն էր հաստատելու կայսրության ազգությունների միջև՝ պահպանելով յուրաքանչյուրի ինքնավարությունը: ⁹⁰ Հոդվածներից մեկում նկարագրվում են հայերի պատրիարքին կայսերական պալատ ուղեկցելու և այնտեղ երիտթուրքերից հյուրընկալվելու այնպիսի ջերմ ու շքեղ արարողություններ, որ երկընտրանկալվելու այնպիսի ջերմ ու շքեղ արարողություններ, որ երկընտրանքի առջև ես կանգնում. մի՞թե նրանք հայերին կկոտորեն: ⁹¹ Բնութագրական են, անշուշտ, օրաթերթում թուրքական մամուլից արտատպված հետևյալ փաստերը. «Ե՛էնի կազեթա»-ն տպագրում է Ադանայի փոխկուսակալի խնդրանքը՝ տեղում որքանոց կառուցելու համար, և դիմումը թուրք ու այլ ազգերի մարդասերներին՝ արծազանքելու հորդորանքով, «վասնզի կառուցուելիք որքանոցը բարենպատակ հաստատութիւն «վասնզի կառուցուելիք որքանոցը բարենպատակ իմաստ և հնչեղուչափտի ըլլայ», այլև պետք է ունենա քաղաքական իմաստ և հնչեղություն, որովհետև պիտի ցույց տա, թե «որչափ է երիտասարդ թուրքիան հարգում ազգերի միաբանութիւնն ու համերաշխութիւնը»: Իսկ «Աթամ-կնուին վայր գցված վարչակարգի օրերի նրանց տառապանքները»: ⁹²

Թուրքիայի հասարակական-քաղաքական հանելուկային և անորոշ խարխափումներում անչափորեն գնահատելի է «Ազատամարտի» քաղաքական ճկունությունը, որով նա դիմել է զանազան հնարանների՝ ի շահ հայ ժողովրդի ազատագրության և ֆիզիկական ու հոգևոր եղեռնի գործընթացի չեզոքացման:

88 Նույն տեղում, 1909թ., թիվ 22, 63:
89 Նույն տեղում, 1909թ., թիվ 4:
90 Նույն տեղում, 1909թ., թիվ 129:
91 Նույն տեղում, 1909թ., թիվ 3:
92 Նույն տեղում, 1909թ., թիվ 73:

85 Նույն տեղում, 1912թ., թիվ 1085:
86 Մ.Վարանդյան, նշվ. աշխ., էջ 435:
87 «Ազատամարտ», 1910թ., թիվ 383, 386, 388:

ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ
«ԱԶԱՍԱՍԱՐՏԻ» ԷԶԵՐՈՒՄ

«Ազատամարտը» բոլոր համարներում անխտիր անդրադառնում է արևմտահայերի ներքին կյանքի հիմնախնդիրներին, ազգային խորհրդի, թաղապետարանների, Պատրիարքարանի, օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությանը: Ընդ որում, վերլուծությունները արվում են անկողմնակալ և միմիայն ժողովրդի շահերի պաշտպանության տեսանկյունից: Սա եղել է օրաթերթի գործելակերպի անկյունաքարը: Իր հիմնադրման տարեդարձին նվիրված խմբագրականում «Ազատամարտը» հայտնում է, թե մեկ տարվա ընթացքում երկար շարք կազմող հարցերը քննարկել է անկեղծությամբ, հետևողականորեն, սկզբունքայնությամբ: Քննադատությունը լոկ հարվածելու միջոց չի եղել, այլ ուղղություն արձատավորելու ճիգ ընդհանուր պետական ու ազգային գործերում: «Պաշտպանեցինք ոչ թե մարդկանց, այլ սկզբունքները, այն էլ իրենց կիրառության մեջ: Մեկ սկզբունք կա մեզ համար ամեն բանից վեր. աշխատավոր մեծամասնության շահերը: Այս լույսով է, որ քննեցինք, դատապարտեցինք կամ գովեցինք: Ով ժողովրդի հետ է, մեր բարեկամն է, իսկ ով ժողովրդի դեմ է, մեր թշնամին է: Ահա սա է մեր նշանաբանը», - ասվում է հոդվածում⁹³:

Այսպիսի մոտեցումների տեր օրաթերթը բոլորամյակ պաշտպանում է ժողովրդի շահերը, քննադատորեն վեր հանում ներազգային հիմնահարցերը դրանցից ձերբազատվելու նպատակով: Ասենք՝ «Մեր ազգային վարչական մեքենան» հոդվածում Յարություն Շահրիկյանը գրում է, որ վարչական մեքենայի կենտրոնական ու գավառական մարմինների անդամները սովորաբար ընտրվում են պատահականությամբ: Նրանց մեջ չեն լինում որոշակի ծրագրեր ունեցող խմբակցությունների ներկայացուցիչներ, որպեսզի գործունեության ընթացքում աշխատեն իրականացնել այս կամ այն ծրագիրը: Հողվածագիրը պարսավում է նրանց աշխատակերպը՝ նշելով, որ մեծ մասը իր առօրյա բան ու գործը գերադասում է նիստերին ներկա գտնվելուց: Քվորումի բացակայության պատճառով շաբաթական 2-3 նիստ գումարելու փոխարեն, կայանում է երկշաբաթյա մեկ նիստ, որը սպառվում է գրանցման, քննարկվելիք հարցերի ընթերցման, վիճաբանությունների վրա: Նիստը փակվում է՝ սեղանի վրա թողնելով բազմաթիվ թղթեր, խնդիրներ, որոնք ամիսներ շարունակ սպասում են իրենց լուծմանը: Հողվածի հեղինակը կարծում է, որ անհրաժեշտ է ճիշտ ընթացք տալ ազգային վարչական մեքենային: Թեև դժվար, բայց անհնարին չէ գտնել նման միջոցներ:⁹⁴ Կյանքում հա-

կառակն է կատարվում: Օրաթերթը տարիներ շարունակ դատապարտում է Ազգային ժողովի արածները, նրա գործունեությունը գնահատում ամուլ: Եվ դա այնպիսի ժամանակահատվածում, երբ մանավանդ 1911 թ. վերջերից սկսած ուժեղանում է հայահալած քաղաքականությունը և կարիք է զգացվում ազգային ուժերը համախմբելու և միասնականորեն պայքարելու: Թերթը հարց է տալիս ընթերցողներին. «Ասացեք, խնդրեմ, մենք իրավունք ունե՞նք կառավարությունից դժգոհելու՞ մեր խնդիրների հանդեպ անտարբերության համար, երբ ազգային ներկայացուցիչները ցույց չեն տալիս անհրաժեշտ շահագրգռություն»: ⁹⁵ Նույնիսկ երբ 1912թ. թիվ 888-ում «Ազգային գործունեության մեկ տարվա հաշվեկշիռը» խմբագրականում վերլուծվում են Ազգային ժողովի աշխատանքները՝ մայիսին նոր տարեշրջանի բացման առիթով, նշվում է, որ իրենք համոզված են, թե Ազգային ժողովի անկենդանությունը պիտի շարունակվի մեկ տարի ևս:⁹⁶

«Ազատամարտը», այնուհանդերձ, մշտապես ողջունել է դրական տեղաշարժերը այս ոլորտում: Օրինակ՝ անդրադարձ կա 1912թ. օգոստոս-սեպտեմբերյան հայկական ջարդերը կանխելու մտահոգությամբ գումարված Ազգային ժողովի բացառիկ նիստին, դրան հաջորդած իրադարձություններին, Պատրիարքի ու Ազգային ժողովի վարչության հրաժարականներին:⁹⁷ Թերթը արձանագրում է, թե քիչ է պատահել, որ Ազգային ժողովի հոսանքները այդքան միական համերաշխությամբ արտահայտվեին հայկական գավառների քաղաքական ապահովության մասին: Այս խնդրի դիմաց ազգի բոլոր խավերի, դասակարգերի, կուսակցությունների շահերը հավասար են: Ընդհանուր վտանգի հանդեպ հարկավոր է ընդհանուր ծակատ: «Ազատամարտի» կարծիքով, հայ ժողովրդի համար այդ ծանր շրջանում Ազգային ժողովի վարչությունը պիտի կարողանա լինել ազգային բոլոր հոսանքների շահերի արտահայտիչը: Բերենք ուրիշ օրինակ: Օրաթերթը դրական է գնահատել 1912թ. հունվարի 21-ին Ազգային ժողովի մեծամասնության ընդունած որոշումը, որով ազգային կյանքում այլևս մեծ դեր էր հատկացվում կուսակցություններին:⁹⁸ Իսկ, ինչպես հայտնի է, 1910-1911թթ. արևմտահայ կղերական ուժերը ամեն կերպ ջանում էին հասարակական կյանքում չեզոքացնել, փոքրացնել կուսակցությունների խաղացած դերը: Խոսքը ի մասնավորի վերաբերում է «Բաց ու գոցի» խնդրին, որին այդ տարիներին պարբերաբար անդրադարձել է Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը: Կռվախնձորը քաղաքական թեմաներով բանախոսությունների համար եկեղեցիներից օգտվելու իրավունքն էր: «Բացեք կամ փա-

95 Նույն տեղում, 1911, թիվ 683, 684, 689:

96 Նույն տեղում, 1912, թիվ 888:

97 Նույն տեղում, 1912, թիվ 981, 983, 1002:

98 Նույն տեղում, 1912, թիվ 786:

93 Նույն տեղում, 1910, թիվ 304:

94 Նույն տեղում, 1909, թիվ 4:

կեք եկեղեցու դռները բանախոսությունների համար, բայց վերջ տվեք այդ աննպատակ վեճին, որը ազգավնաս ըլլալու հանգամանքը առավ»,-զայրանում է ընթերցողներից մեկը իր անձնական կարծիքում այս հարցի առնչությամբ:⁹⁹

Ռ.Դարբինյանը «Սոցիալ-դեմոկրատ հնչակյանները և «Բաց ու գոցի» խնդիրը» հոդվածում պարզաբանում է, որ նման վեճ երբեք չի եղել Գերմանիայում, Ֆրանսիայում, որովհետև տեղի սահմանադրական կարգերը ժողովրդի քաղաքացիական դաստիարակության համար թույլ են տալիս հատկացնել շինություններ: Մեզանում չկան այդպիսիք պատմական հանգամանքների բերումով: Նա իր մտորումները ամփոփում է այն պնդմամբ, թե վերջնահաշվում ամենքին հայտնի է, որ «բաց ու գոցի» հարցը ոչ եկեղեցական, ոչ էլ կրոնական հանգամանք ունի, այլ պարզապես քաղաքական խնդիր է:¹⁰⁰ Գաղափարական այս երկու «բանակները» պայքարի բովում հասկանում են (ինչը երևում է «Ազատամարտի» այդ տարիների հավաքածուներից), որ ազգային գործունեության բնագավառը չի կարող ոչ մեկի մենաշնորհը լինել: Օրաթերթը գտնում է, որ ազգային յուրաքանչյուր հաստատություն ու կուսակցություններազգային կյանքում ունի իր դերը: Եվ եթե նրանք նույնիսկ օսմանյան կայսրության վարած քաղաքականության նկատմամբ հանդես են բերում գաղափարական հակառակություններ, այնուամենայնիվ հանում համագային ընդհանուր կարիքների պիտի աջակցեն իրար»:¹⁰¹

ՀՀԴ պաշտոնաթերթը գտնում է, որ ազգային ճակատում միասնականապես բացի արևմտահայերը պետք է համագործակցեն, «քաղաքական բլոկ» կազմեն կայսրության բոլոր սահմանադրական տարրերի, կուսակցությունների հետ առանց կրոնի և ցեղի խտրության սահմանադրական վարչակարգի ամրապնդման, կառավարական ապարատի մաքրագործման, ժողովրդապետական օրենքների ընդունման նպատակով: Ճշմարիտը սա է, քանի որ ուժերի մեկտեղմամբ են հաջողությամբ պսակվելու արևմտահայերի ներքին առաջընթացի ծրագրերը:¹⁰²

«Ազատամարտը» ընթերցողների ուշադրությունը մշտապես բևեռում է առաջնահերթ հիմնահարցի վրա, առանց որի լուծման անպտուղ են մնալու նրանց գործադրած ջանքն ու եռանդը: Դա բնօրրանի հայաթափումը, հայության ուժացումը հետապնդող գաղթի ալիքն էր: Թերթը թվարկում է գաղթականության դրդապատճառները, դրանից ծնվող անցանկալի հետևանքները և հորդորում ժողովրդին «մնալ իր հողին վրայ», քանզի «գաղթը սպաննիչ» է:¹⁰³ Ինչքան էլ անտանելի տնտե-

99 Նույն տեղում, 1910, թիվ 373:

100 Նույն տեղում, 1910, թիվ 378:

101 Նույն տեղում, 1912, թիվ 786:

102 Նույն տեղում, թիվ 23,24:

103 Նույն տեղում, թիվ 6:

սական, քաղաքական հանգամանքները հարկադրեն, հայը չպիտի լքի հայրենիքը, որովհետև առանց հայի չկա Հայաստան: Նա պիտի մնա և մտածված գործելակերպով, ինքնուրույնաբար կառավարի ինքն իրեն:¹⁰⁴

ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթի համոզմամբ գաղթի դրդապատճառների հիմքում ընկած է հողային հարցը: Չենք կարող մատնացույց անել որևիցե համար, որում «Ազատամարտը» զոհն մեկ հողված կամ լուր տպագրած չլինի այս խնդրին առնչվող: Դրանք արծարծվում ու վերլուծվում են ելնելով կուսակցության տեսակետներից: Այս հարցը այնքան էական ու կարևոր է համարվել, որ հենց հրատարակման առաջին տարում 118-143-րդ թվերում ստվարածավալ հոդվածաշար է տպագրվել «Պետական վերանորոգությունն ու հողային հարցը» խորագրով: Հեղինակը Ատոմը գրում է, որ Թուրքիայի վերածննդի ու Սահմանադրության ամրապնդումը կարող է կայանալ ավատականության ջնջմամբ և հողային հարցի լուծմամբ: Նշվում է, որ բռնության և հալածանքի հետևանքով հայկական շատ ու շատ գավառներ դատարկվել են և հողերը անցել են քուրդ ու թուրք ազգաբնակչությանը: Թվարկվում են այդպիսի գավառներից Վանի վիլայեթում Նորտուզը, Աղբակը, Գավառը, Բիթլիսի վիլայեթում՝ Սղերդը, Խիզանը, Մոտկանը, Խոյթը, Մանազկերտը, Էրզրումի վիլայեթում՝ Խնուսը, Ալաշկերտը և այլն: Ասվում է, որ հողային գրավումները լայն չափեր են ստացել հատկապես համիրյան վարչակարգի օրոք: Ներկայացվում են դրանց կատարման միջոցները և կերպերը: Թվարկենք մի քանիսը.

1. անհատական բռնություններ

քուրդ աղաները հաճախ կառավարական պաշտոնյաների աջակցությամբ, թույլտվությամբ բռնի ուժով արևմտահայերին քշել են իրենց սեփական հողերից ու տիրացել դրանց, իսկ ունեզրկված հայ ընտանիքը կամ համայնքը դիմել է գաղթականության,

2. կառավարական բռնություններ

առանց փոխարժեքը վճարելու՝ կառավարությունը բռնությամբ գրավել է արևմտահայերի ընդարձակ հողաբաժինները և դրանք տվել դրսից Թուրքիա եկող մահմեդական մուհաճիրներին, ու արդյունքում նախկին հողատերը կամ հայ գյուղացին դարձել է գաղթական կամ հողազուրկ վարձու մշակ,

3. պաշտպանության անհրաժեշտությունը

այլազգի հարստահարիչներից որոշ չափով պաշտպանվելու համար արևմտահայ գյուղացին ուրիշ այլազգու պաշտպանությանն է ապավինել՝ նրան տալով իր հողերի լավագույն մասը՝ միաժամանակ դառնալով պաշտպանի հպատակը ու հարկատուն,

104 Նույն տեղում, թիվ 13:

4. Կեղծիքը

քուրդ բեկերը ու աղաները կարողացել են փաստաթղթերի կեղծմամբ իրենց անունով դարձնել այն հողերը, որոնց տերերը բացակայել ու գաղթել են երկար տարիներով.

5. **առեւի չափերի հասնող պարտատուները**, որոնց դիմաց հայ գյուղացին սովորաբար վերջնահաշվում տվել է իր հողակտորը: Այս և այլ պատճառներով կատարված հողագրավումների հետևանքը հողային հարցի ծագումն էր, ինչը, հողվածագրի կարծիքով, անհնար էր լուծել գործադրության մեջ գտնվող հողային օրենքով:

«Ազատամարտը» ներկայացնում է կառավարության ձեռնարկումները՝ խնդիրը լուծելու ուղղությամբ, բայց հասկացնում է, որ դրանք՝ այդ մեկ-երկու քայլերը, պարզապես աչքակապություն են: Ասենք՝ 1912թ. թիվ 815-ում տեղյակ է պահվում, թե կառավարությունը որոշել է 100 հազար ոսկի ծախսել քրդերի և հայերի միջև առաջացած հողային վեճը կարգավորելու համար: Դրա համաձայն, եթե հայերը կարողանան վավերաթղթերով ապացուցել սեփականատիրոջ իրենց իրավունքը, ապա հափշտակված հողերը կվերադարձվեն նրանց, իսկ քրդերին կտրվի վնասի փոխհատուցում: «Ազատամարտը» իշխանությունների այս քայլը մեկնաբանում է վերջաբան եզրակացությունում. այս կարգի կարգադրությունների նպատակն է՝ շահել հայ ընտրողների համակրանքը և ՀՀԴ-ի քարոզչական նախաձեռնությամբ ընտրաքվեները տալ ի նպաստ «Իթիհատի» կողմից առաջարկված պատգամավորության թեկնածուներին: Ասվածը ապացուցող օրինակ է 1910 թ. թիվ 325-ում տպագրված լուրը այն մասին, որ հայ պատգամավորները Բ. դուռ են դիմում հայկական նահանգների հողային և ուրիշ կենսական հիմնախնդիրների լուծման նպատակով: Վարչապետը նրանց խնդրում է սպասել որոշ ժամանակ, ապա հանդիպել և խորհրդակցել:¹⁰⁵ Նաև լուր է տպագրված, ըստ որի Վանի նահանգում հողավեճը հարթվել է և Արծկե և Ականցի գավառակներում գրավված հողերը վերադարձվել են օրինական հայ տերերին: Սակայն մի քանի օրից Մալաթիայից «Ազատամարտի» սեփական թղթակիցը հայտնում է, որ Անտուտ գյուղի 30 հայ ընտանիք, հուսահատվելով դրացի քուրդ և թուրք բնակիչների հողային գրավումներից, պատրաստվում են վերջնականապես լքել իրենց գյուղը, որը Մուշովկայի հետ տվյալ տարածքի միակ հայաբնակ վայրն էր:¹⁰⁶

Բերենք ևս մեկ օրինակ: «Հողային հարցի շուրջ» խմբագրականում բարձրացվում է նմանաբնույթ խնդիր. կառավարությունը մի կողմից ընդունում է հողավեճը «հարթող» որոշումներ, մյուս կողմից աչքը փակում, չտեսնելու է տալիս դրանց կեղծումները:¹⁰⁷ Խոսքը վերաբերում էր Վանի և Բիթլիսի վիլայեթներին, որտեղ օրըստօրե խորանում էր ծա-

գած հողային վեճը: Նախորդ վարչակարգի թուլությունները բռնությամբ հայերից գավթել էին ընդարձակ հողատարածություններ և այժմ փորձում էին օրինականացնել այդ հափշտակումները: Ներքին գործերի նախարարությունը հրահանգել էր, որ Վանի և Բիթլիսի վիլայեթներում ամենահին փաստաթղթեր՝ «թափու-սեմետի» ունեցողները նկատվելին իրավատեր, իսկ մնացած դեպքերում հարցը պիտի լուծվեր դատարաններում: Իրականում հողահափշտակիչները համագործակցելով տեղի պաշտոնյաների հետ՝ կաշառքով, սպառնալիքով ու բռնությամբ ձեռք էին բերում հին կամ նոր «թափու-սեմետի» և դառնում վիճահարույց հողատարածքի օրինական տերերը: Նման գործարքների հետևանքով Մուշի ու Բուլանուղի շրջաններում լցվել էին 30 հազարից ավելի հայ գաղթականներ: Նրանք այս կամ այն գյուղի նախկին բնակիչներն էին, որոնք համիդյան ջարդերից ապաստանել էին արտերկրում: Այդ ընթացքում քրդերը և թուրքերը խլել էին նրանց հողերը, տուն ու տեղը և հայթայթելով կալվածագրեր վերածվել էին այդ գյուղերի տեր ու տնօրենների: Նույն վիճակում էին Սասունի Կելիկեման և Կելիեկուզան գյուղերը: Եվ արդեն հասկանալի է, որ նման վիճակում գտնվող ազգակիցներին ձգտում է օգտակար լինել ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնյաներին՝ ներկայացնելով և՛ ստեղծված թնջուկը, և՛ պատճառները, և՛ դրությունը շտկելու համար մշակված առաջարկները: Ասենք՝ 1912 թ. թիվ 792-ում «Ազատամարտը» տպագրում է կուսակցության 6-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից քաղվածքներ, որոնք առնչվում են հողային հարցին: Տեղեկացվում է, որ այդ ժողովում որոշվել է հողավեճի լուծումը ձեռնարկելիս իբրև ղեկավար սկզբունք նկատի առնել հետևյալ կետերը.

1. 1890 թվականից հետո կատարված հողային ու հարակից գրավումները հռչակել որպես արդյունք հայության դեմ ուղղված բռնությունների և քաղաքական բացառիկ հալածանքների,
2. հողավեճը լուծել վարչական եղանակով՝ խառը հանձնաժողովի միջոցով՝ հիմնվելով օսմանյան հողային օրենքների վրա, իսկ վիճելի հողերի ու ջրերի նկատմամբ սեփականության իրավունքը տալ հին վավերաթղթեր ներկայացնողին՝ համաձայն 1909թ. օտոստոսի 27-ի պետական խորհրդի որոշման,
3. հավածանքների պատճառով արտասահման փախած ու Սահմանադրությունից հետո իրենց բնակավայրերը վերադարձող հայերին ընծայել դրամական այն օժանդակությունները և ապահարկության արտոնությունները, որոնք մինչ այժմ վերապահված են եղել իսլամ գաղթականներին,
4. 1890 թվականից հետո հայկական հողերի վրա հաստատված իսլամ գաղթականներին փոխադրել ուրիշ ազատ բնակավայրեր, որոնք հայկական գյուղերից 8 ժամվա հեռավորության վրա պիտի գտնվեն,
5. վերաբնել 1890 թվականից հետո հարստահարիչների կատարած յուրաջուրները վերադարձնելու հարցը:

105 Նույն տեղում, 1910, թիվ 327:
106 Նույն տեղում, 1910, թիվ 337:
107 Նույն տեղում, 1909, թիվ 128:

«Շիտակ խոսքը ե՞րբ պիտի լսվի» խմբագրականում «Ազատամարտը» բացատրում է, ու վերոհիշյալ որոշումը ՀՀԴ 6-րդ Ընդհանուր ժողովը կայացրել է առաջնորդվելով մի կողմից՝ գոյություն ունեցող իրողությունների, մյուս կողմից՝ արդարության ու հավասարության իր սահմանադրական հավատքի վրա: Իրողությունը այն է, որ առանձնապես վերջին 25 տարվա ընթացքում բռնակալական վարչակարգը գործադրել է հայ ժողովրդի բնաջնջման ծրագիր: Անցել է 4 տարի, և «այսօր ցավով արձանագրում ենք, որ թե՛ սահմանադրական, թե՛ թուրքական մամուլի մեծամասնությունը մնացին անտարբեր ու անբարեհաճ հայերի իրավունքների հանդեպ»: ¹⁰⁸ Օրաթերթը հողային և մնացած հիմնահարցերի, ի թիվս որոնց մասնավորապես կրթական ու զինվորական խնդիրների համար մեղադրում է կառավարությանը ու իշխանություններին:

1912 թվականի թիվ 822-ում «Ազատամարտը» տպագրել է ՀՀԴ-ի ծրագիրը առաջիկա տարիների գործունեության ոլորտների ուղեգծով: ¹⁰⁹ Հատուկ ուշադրություն է դարձված բանակի և կրթության բնագավառի հիմնահարցերի լուծման ուղղությամբ կուսակցության մշակած մարտավարությանը: ՀՀԴ-ն պահանջում էր.

1. հավասար և միևնույն պայմաններում կատարվող զինվորագրություն պետության բոլոր ազգերի ու խավերի համար,
2. ավելացնել զինվորների նպաստ-թոշակը,
3. աստիճանաբար կրճատել զինվորագրության ժամանակահատվածը,
4. վերացնել զինվորական փրկանքը,
5. սահմանել թոշակ զինծառայության ընթացքում մահացող զինվորի ընտանիքի համար,
6. նշանակել առողջապահական հատուկ հանձնախմբեր զորանոցների ու զինվորական հիվանդանոցների համար,
7. պարտադիր զինվորական մարզանք դադարեցնել:

Թվարկված և հարակից առաջարկներով է 1909-1915թթ. ՀՀԴ-ն փորձել նպաստել զինվորագրության խնդրի բարեշրջմանը, մի խնդիր, որը պատմաբաղադրական հանգամանքների բերումով լրջորեն անհանգստացնում էր զինված ինքնապաշտպանության հնարավորությունից զրկված արևմտահայերին: Օրաթերթը հրատարակման տարիներին ոչ միայն պաշտպանում է մայր կուսակցության քաղաքականությունը, այլև մշտապես անդրադառնում է այդ հարցին, գտնելով, որ զինվորագրությունը անհրաժեշտություն է հենց արևմտահայի համար: ¹¹⁰ Հողվածներից մեկում վերլուծելով ոչ իսլամների զինվորագրության օրինագծի խորհրդարանական քննարկումները՝ այն միտքն է առաջ քաշվում, որ տվյալ օրենքի ընդունման գործում մեծ դեր է խաղացել հայ պատգամավորներ

րի բռնած դիրքը: Մինչ այդ օրենքի ընդունումը օսմանյան խորհրդարանը որոշում էր ընդունել 1909 թ. սկսած զինվորագրել նաև քրիստոնյաներին: ¹¹¹ Այս որոշումը «Ազատամարտը» բնութագրում է խելացի և ողջունելի: Նա կարծում է, թե սա արդարացված գործնական քայլ է, որը թուրքիայում բնակվող ժողովուրդներին դարձնում է ենթակա նույն պարտականությունների ու տեր՝ նույն իրավունքների:

«Ազատամարտը» վստահ է, որ մոտ ապագան կհաստատի փաստը, թե հայ երիտասարդներն ընդունակ են զինվորական կարգապահության և ռազմական անվտանգության: Մեջբերենք 1912թ. «Ազատամարտի» թիվ 1078-ում տպագրված թուրքիայի պատերազմական նախարար Նազմփաշայի կարծիքը հայ զինվորների ռազմական ծառայության մասին. «Հայ զինվորները պետք եղածից ավելին արեցին: Ծայր աստիճան զոհ են նրանց գործունեությունից: Նրանք օսմանյան բանակի մյուս զինվորների չափ, նույնիսկ՝ նրանցից ավելի են կատարել իրենց զինվորական պարտականությունները: Օսմանյան բանակից խույս տված զինվորների մեջ հայեր գրեթե չկան»: ¹¹² Ընդհանրապես Բալկանյան պատերազմում հայ և քրիստոնյա դասալիք դարձած զինվորներին ընդհանուր ներում չնորհելու հարցն էլ է բարձրացնում «Ազատամարտը» արդեն 1914 թվականին դժգոհելով, որ կան հայազգի երիտասարդներ, որոնք խուսափում են զինծառայությունից, որը նրանց և՛ պարտականությունն է, և՛ ազգային ինքնապաշտպանական անհրաժեշտությունը: ¹¹³

1914թ. ՀՀԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը ապրիլյան համարներում տպագրելով թուրքիայի զինվորագրության նոր օրենքը՝ անում է մի շարք բարեփոխիչ առաջարկություններ, օրինակ՝ ուսուցիչների զինծառայության խնդրում: ¹¹⁴ «Առաջարկներ զինվորական ծառայության համար» հողվածի հեղինակները սխալ են համարում ուսուցիչներին մեկ տարով զինվորական ծառայության վերցնելը: Բերվում է եվրոպական առաջադեմ երկրներում կիրառվող միջոցը. այնտեղ ուսուցիչները իրենց զինծառայությունը անցկացնում են դպրոցական արձակուրդի ամիսներին: Խնդրո առարկա հարցի առնչությամբ ՀՀԴ Արևմտյան բյուրոյի օրաթերթի հրապարակումների նպատակն է եղել կարելվույնս աջակցել արևմտահայերի զինվորական պատրաստվածությանը և մարտունակության բարձրացմանը, ինչը կնպաստեր նրանց ինքնապաշտպանության ու ֆիզիկական զոյատևման ապահովմանը:

Թվարկված էական հիմնախնդիրներին զուգահեռ «Ազատամարտը» բարձրացնում է հայեցի դաստիարակության ու կրթության ազգապահպան հարցերը՝ հատկապես հայկական դպրոցների բարեկարգումը համարելով արևմտահայերի ազգային գործունեության առաջնակա

108 Նույն տեղում, 1912, թիվ 803:
109 Նույն տեղում, 1912, թիվ 822:
110 Նույն տեղում, 1909, թիվ 80:

111 Նույն տեղում, 1909, թիվ 19:
112 Նույն տեղում, 1912, թիվ 1078:
113 Նույն տեղում, 1914, թիվ 1522, 1533:
114 Նույն տեղում, 1914, թիվ 1521, 1522:

նպատակը:¹¹⁵ Օրաթերթի դիրքորոշումը հասկանալ են օգնում համարյա բոլոր համարներում (առանձնապես 1911-1912 թթ.) տպագրված հոդվածները ու նյութերը, նաև ԶՅԴ-ի ծրագրային դրույթները, որոնք յուրաքանչյուր ժողովից և համագումարից հետո հրապարակվում և լուսաբանվում էին «Ազատամարտի» էջերում: Մեջբերենք 1912թ. ԶՅԴ ծրագրից այս հարցադրումներին նվիրված հատվածները.

1. ապահովել օսմանահպատակ ազգերի կրթական-մշակութային գործի ազատությունը և ինքնավարությունը, ինչպես նաև բոլոր ազգերի դպրոցների իրավահավասարությունը, պարտադիր, ընդհանուր, ծրի տարրական կրթությունը, դասավանդումը մայրենի լեզվով, ոչ թուրքական դպրոցներում պետական թուրքերեն լեզվի ուսուցումն սկսել 4-րդ դասարանից, իսկ թուրքական դպրոցներում տեղական լեզուների ուսուցումը իրականացնել կրկին 4-րդ դասարանից,

2. տեղերում (գավառներում) պաշտոնյաները թուրքերենից բացի պիտի իմանան նաև տեղական բնակչության լեզուն,

3. պետական լեզվի հետ տեղական լեզուների գործածում դատարանների, վարչական հիմնարկությունների, պաշտոնական հայտարարությունների և ազդերի մեջ,

4. մշակութային-դպրոցական նպատակներին հատկացված պետական բյուջեն բաժանել օսմանյան ազգությունների միջև՝ նրանց ներկայացրած թվի համաձայն,

5. խափանել միայն հողագործությունից գանձվող կրթական տուրքը կամ այն տրամադրել ամեն մի ազգության ինքնավար մարմիններին՝ գործածելու ի նպաստ գյուղական դպրոցների,

6. իրավունք տալ ազգային-կրթական վարչություններին՝ պետական տուրքերի վրա ավելացնելով գանձել ազգային կրթության բաժին,

7. կրթական գործի վրա հսկող պետական կենտրոնական մարմինը կազմել ազգային-կրթական մարմինների ներկայացուցիչներից, իսկ դպրոցների վրա հսկող պաշտոնյաներին՝ նշանակել նույն ազգությանը պատկանող և մայրենի լեզվին քաջատեղյակ անձանցից:¹¹⁶

Ահա գործելակերպի նման մոտեցումներ է որդեգրում ԶՅԴ-ի Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը: Օրաթերթը հրապարակումներով պատկերացում տալով թուրքիայում կատարվող իրադարձությունների, իրականացվող պետական կրթական քաղաքականության մասին, կրթության հարցի բացթողումների համար մեղադրում է նախ՝ ղեկավարներին, ապա՝ Ազգային ժողովին, այդ բնագավառում գործելու կոչված ազգային կառույցներին և նրանց աշխատակիցներին:¹¹⁷ Կառավարությունը ոչ միայն չի աջակցում հայկական դպրոցների բարեկարգման գործընթա-

ցին, այլև ամեն կերպ խանգարում է խոչընդոտելով դրանց նորմալ աշխատանքներին: Օրինակ՝ 1912 թ. ղեկտեմբերի 23-ի համարում տեղեկացվում է, որ համաձայն Բ. դռան նոր հրահանգի՝ վերացվում են հայկական դպրոցների պետական վճարները. «Կառավարությունը ներկա տարվա բյուջեից ջնջել է ոչ իսլամների կրթության հատուկ բաժինը»:¹¹⁸

1911 թ. թիվ 481-ի խմբագրականում մտահոգություն է հայտնվում ազգային վարժարանների նկատմամբ պետական վերաբերմունքի առնչությամբ: Գավառներից բողոքում էին, որ կրթական տեսուչները վարժարաններին հատկացված պետության կրթական վճարները վերջիններին (վարժարանների հոգաբարձուներին, առաջնորդարաններին) տալու փոխարեն պահանջում են անձամբ վճարել ուսուցիչներին և գրաքննության են ենթարկում հայ վարժարանների դասագրքերը: «Ազատամարտը» այս երևույթը որակում է որպես մեր վարժարանների ներքին ինքնավարության խախտման հակապետական ուղի:

«Գահավեժ քաղաքականություն» հոդվածից պարզվում է, որ ըստ օսմանյան խորհրդարանի որոշման ազգային վարժարանները զրկվում են ներքին ինքնավարությունից:¹¹⁹ Նրանց վկայականները արժեզրկվում են, և նրանք պարտավորվում են կառավարության վաճառված ենթարկել իրենց ծրագրերը, կառավարական նախնական քննության անցկացնել ուսուցիչներին, որտեղ ստացած վկայականներով կվավերացվի նրանց պաշտոնավարությունը: «Սա պետական անբավելի հանցանք է, որը արթնացնելու է միջցեղային թշնամու-թյուն», - գրում է «Ազատամարտը»: Մի քանի օրից ԶՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթը լուր է տպագրում խորհրդարանի որոշման մասին, որով օրենքները հրատարակվելու էին միայն պաշտոնական լեզվով՝ թուրքերենով: «Որո՞ւ համար են օրենքները», - հարց է տալիս «Ազատամարտը»:¹²⁰ Օրաթերթը նաև պահանջ է առաջ քաշում, որ վերջ տրվի պետական այն քաղաքականությանը, որը դժվարացնում կամ անհնար էր դարձնում պետական վարժարաններում (հատկապես մասնագիտական ուղղվածություն ունեցողներում) ոչ իսլամների մուտքը և ընդունելությունը: «Անշուշտ, իրավունք ունինք պահանջելու, որ պետական բոլոր վարժարաններն օգտվին անխտորոտ ամենքն ալ: Իրավունք ունինք պահանջելու, որ մասնավորաբար մասնագիտական վարժարաններու մեջ նվազագույն տոկոս մը միշտ տեղ պահվի ոչ իսլամներուն, համեմատական չափով»:¹²¹

Հույս դնել, թե պաշտոնական մարմինները կբարեկարգեն դպրոցները, ինքնախաբեություն է. այս կարծիքն է ձևավորում ընթերցողների շրջանում «Ազատամարտը»:¹²² Դա է պատճառներից մեկը, որ ինքը շա-

118 «Ազգակ», 1912, թիվ 1094:

119 «Ազատամարտ», 1911, թիվ 482:

120 Նույն տեղում, 1911, թիվ 507:

121 Նույն տեղում, 1910, թիվ 362:

122 Նույն տեղում, 1912, թիվ 937:

115 Նույն տեղում, 1912, թիվ 937:

116 Նույն տեղում, 1912, թիվ 822:

117 «Ազատամարտ», 1910, թիվ 362, 367, 368, 1911, թիվ 481, 482, «Բյուրանիս», 1913, թիվ 1103:

մագումարին առնչվող այդ խմբագրականում ասված է, որ դաշնակցական ուսանողները, լինելով ընդհանուր կուսակցության չհիմնադրված, կրում են ԶՅԴ-ի արդի տրամադրության դրոշմը, հասարակական-քաղաքական մոտեցումների կմիջը: «Դաշնակցական ուսանողությունն իր քաղաքական տեսակետներով մայր կուսակցության հարազատ պատկերի արտացոլումն է»,- կարդում ենք հոդվածում: Գետազա շարադրանքում նշվում է, թե ԶՅԴ ուսանողական միությունը ստեղծվել է կուսակցության ծրագրի և սկզբունքների լուսաբանման ու տարածման համար, որն էլ լինելու է նրա գործունեության հիմնաքարը: Իսկ «Երկունքի» 1912թ. 2-րդ համարը լրացնում է. «Եթե մամուլը միայն արծազանք լիներ, այն պիտի դառնար լուրերի պարկ: Մեզ հարկավոր եղողը միայն երևութների և դեպքերի ցուցադրությունը չէ, այլ՝ դրանց պատճառների խոր վերլուծությունն ու դարձանը մատնացույց անելը: Մամուլը եղածով չպետք է գոհանա: Այն պիտի ցույց տա նոր ճանապարհներ և ժողովրդին առաջնորդի դրանցով: Եթե ժողովուրդը չի հետաքրքրվում այդ ամենով, մամուլի պարտականությունը հետաքրքրություն ստեղծելն է»: Ուրեմն՝ ամսաթերթերը ոչ միայն արտացոլել են կուսակցության մեկնակետերը, այլև վերլուծել, պարզաբանել են դրանք, փորձել են ճշտել ԶՅԴ-ի բռնելիք դիրքը Թուրքիայի հասարակական-քաղաքական անցուդարձի նկատմամբ:

Այդ հարցերի վերհանմանն է նվիրված Ասլան Շիրակունու հոդվածը:¹²⁷ Գեղինակը գտնում է, որ 1908թ. հուլիսի 10-ի հեղափոխությունից հետո Թուրքիայում ստեղծվել են նոր պայմաններ, բացվել են գործունեության նոր բնագավառներ, նաև առաջացել են բազմաթիվ խնդիրներ: Բնական է, որ իրականության այս փոփոխությունների նկատմամբ վերաբերմունք մշակելը, այն քննարկելը ու պարզաբանելը ԶՅԴ-ի համար առաջնային և խիստ կարևոր գործ է: Եվ դա պետք է արվի կուսակցության հրավիրվելիք 5-րդ համագումարում, որտեղ պիտի գտնվեն հետևյալ հարցերի պատասխանները. « Ի՞նչ դիրք բռնել և ի՞նչ անել »:

Ինչպես արդեն ներկայացրել ենք, այդ տարիներին (1908-1909թթ.) ԶՅԴ-ն ճշգրտում է իր մոտեցումները թուրքական կուսակցությունների հետ համագործակցելու առումով և ի վերջո որոշում փոխհամագործակցել երիտթուրքերի հետ: Եվ ահա հենց այս էական հարցերն են արծարծում նաև «Ուսանողը» ու «Երկունքը»: Նրանք լավ են հասկանում, որ Թուրքիայում ամենևին էլ դրական տեղաշարժեր չեն սպասվում ոչ թուրքերի համար, և 1908 թ. հեղափոխությունից հետո երիտթուրքերը չեն դադարեցնում հարստահարությունները հայկական գավառներում, չեն հեռացնում հին պաշտոնյաներին և պահանջում են հայերից հրա-

127 Նույն տեղում, 1909, թիվ 1, էջ 4-18:

ժարվել 61-րդ հոդվածից: Վերը նշված նյութում Ասլան Շիրակունին գրում է, թե իրենք գիտակցում են, որ «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնական սկզբունքները (ապահովել Թուրքիայի անբողջությունը ուժեղ, կենտրոնաձիգ սահմանադրական կառավարության միջոցով, ազատ եվրոպական հսկողությունից, թուրք տարրի գերիշխանություն, թուրքերենի պարտադիր և առաջնային ուսուցում և այլն) քիչ են համապատասխանում ԶՅԴ-ի դավանանքին, որում առաջնակարգ են ապակենտրոն վարչությունը, բոլոր ազգերի, կրոնների, լեզուների հավասարությունը: Այնուհանդերձ, ԶՅԴ-ն որոշել է գործակցել, ասենք, ոչ թե թվաքանակով թույլ և իրերի ընթացքի վրա վճռորոշ ազդեցություն չունեցող իշխան Սաբահ էդ Դինի կուսակցության, այլ ազդեցիկ ուժի վերածված երիտթուրքերի հետ: Ընդ որում, այդ գործակցությունը երիտթուրքերի վարած քաղաքականության լռելյայն ընդունումը չէր:

Այս խնդիրների լուսաբանումը տրված է «Ազգությունների հարցը Տաճկաստանում» հոդվածում:¹²⁸ Այստեղ հեղինակ Մ.Վաքուրը ներկայացնում է խնդրի նախապատմությունը, նաև՝ 1909թ. երիտթուրքերի վարած քաղաքականությունը և ԶՅԴ-ի դիրքորոշումը տվյալ հարցում: Վաքուրի կարծիքով «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը Թուրքիան ուզում է դարձնել մի երկիր, որտեղ բացակայելու են ազգային տարածայնություններ ոչ թե այն պատճառով, որ գոհացում են ստանալու առկա ազգային պահանջները, այլ՝ որովհետև ազգերը վերանալու են: Լինելու են միայն օսմանցիները և օսմանյան լեզուն: Երիտթուրքերի այս ցանկությունը հոդվածում գնահատվում է իբրև «ուսուպիա»: Գիմնավորվում է ԶՅԴ-ի ուղեգիծը ազգերի ինքնավարության հիմնահարցում, այն է՝ կուսակցությունը պաշտպանելու է Թուրքիայի ֆեդերատիվ անբողջությունը. «Զայերը...միամիտ չեն: Նրանք ըմբռնելով երիտթուրքերի ծրագիրն ազգային հարցում պինդ են գրկել Սահմանադրությունը և Սահմանադրության պաշտպաններն են մի երկրում, որը չի տրոհվելու, չի բաժանվելու, թեև կենտրոնախույս ձգտումները շատ ուժեղ են»:

Ընդգծենք, որ կուսակցության հասարակական-քաղաքական հավատամքի ճշգրտման ու արտահայտման սկզբունքը հատուկ է թե՛ «Ուսանողին», թե՛ «Երկունքին»: Երկուսն էլ պարբերաբար, հատկապես տարեվերջին ու ԶՅԴ-ի համագումարների օրերին մանրամասն անդրադառնում են իրենց բռնելիք դիրքին Թուրքիայի իշխող կուսակցության, դառնում են իրենց բռնելիք դիրքին Թուրքիայի իշխող կուսակցության, խորհրդարանի նկատմամբ: Օրինակ՝ «Երկու տեսակետ» հոդվածում փորձ է արվում գնահատել Թուրքիայի հասարակա-

128 Նույն տեղում, 1909, թիվ 2, էջ 68-80:

կան-քաղաքական կյանքը և անթաքույց ու բարձրաձայն խոսել ԶՅԴ-ի տեսակետների մասին:¹²⁹ Խմբագրությունը ամփոփ ձևով ներկայացնում է իրենց և սեփական կուսակցության մոտեցումները: Նաև գտնում է, որ եղած Սահմանադրությունը անկատար է: Այն տկար քայլեր է անում գործնական հողի վրա: Բայց պետք է հաշվի առնել երկու հանգամանք. միմյանց հետ չպիտի խառնել Սահմանադրությունը ու դրա իրականացման այսօրվա շրջանը: Ամենակենսունակ սկզբունքներն անգամ իրագործվում են ժամանակի ընթացքում, ինչը պայմանավորված է կոնկրետ երկրի իրականությամբ: «Ուսանողը» համոզված է, թե այդ առումով օսմանյան իրականությունը աննպաստ է: Հետևաբար Սահմանադրությունը անկարող է 2-3 ամսվա մեջ թուրքիայի կենսապայմանները վերափոխել: «Բարեխիղճ լինենք և նկատենք, որ հայերի համար ներկա թուրքիան անհամեմատ լավ է, քան անցյալ թուրքիան, նաև այն, որ կատարվել է բարելավում թուրքերի, գոնե կառավարության վերաբերմունքի մեջ դեպի հայերը», - կարդում ենք հողվածում: Խորհրդածություններից իբրև ամփոփում ածանցվում է հատկապես տեսակետը. անհրաժեշտ է թուրքական իրականության նկատմամբ հանդես բերել սպասողական մարտավարություն:

Հայերի համար թուրքիայի անհամեմատ լավ լինել ասվածը լրացվում է նույն համարում գետնեղված մեկ այլ «Մեր դիրքը թուրքիայի նոր ռեժիմի հանդեպ» հողվածում բերված որոշակի փաստարկներով:¹³⁰ Իսկ դրանք ապացուցում են այն ճշմարտությունը, թե խեղդվող փրփուրներից է բռնվում:

«Ուսանողի» տվյալ համարը կարդացողը արդեն ամբողջական պատկերացում է ունենում և թուրքիայի իրականության, և ԶՅԴ-ի դիրքորոշման մասին: Հողվածագիրը կրկին նշում է. «Այսօր մենք տարբեր իրականության մեջ ենք ապրում... Մեզ ասում են. «Դուք ազատ եք. խոսե՛ք, գրե՛ք, ճամփորդե՛ք, ապրե՛ք ինչպես կուզե՛ք»: Բնական է, որ հարց է առաջանում. ԶՅԴ-ի համար վերջացա՞վ մարտական շրջանը, թուրքիայի Սահմանադրությունը, պառլամենտի բացումը, Համիդի գահընկեցությունը վերջ տվի՞ն կարմիր ռեժիմի օրերին, թե՞ ի տես Ադանայի վերջին ջարդերի ու նրա շուրջը կատարվող կոմեդիայի՝ մենք պետք է ասենք, որ արյունալի շրջանը չի վերջացել»: Այսպիսով այլևս հասկանալի է, որ այդ տարբեր, այդ նոր իրականությունը ամենևին նոր ու ամենևին տարբեր չէ: Այս միտքը արծարծվում է նշված հողվածում, նաև «Ուսանողի» հետագա տարիներին հրատարակված նյութերի մեծ մասում:

129 Նույն տեղում, 1910, թիվ 4, էջ 270-273:

130 Նույն տեղում, 1910, թիվ 4, էջ 257-269:

Քննարկվում է ցավոտ հարց. ի՞նչ են տվել 1908 թ. հեղափոխությունը, Սահմանադրությունը ու խորհրդարանը թրքահպատակներին, ի թիվս որոնց՝ հայերին: «Շատ խոստումներ, իսկ դրականապես՝ ոչինչ», - կարդում ենք վերոհիշյալ հողվածում: Հայկական նահանգներում փոփոխություններ չեն կատարվել: Հողը դարձյալ խլված է հայից, և հայերը ենթակա են հալածանքների: Առաջվա նման գավառներում պետական ծառայության մեջ ոչ մի հայ պաշտոնյա չկա: Ի վերջո, ո՞ւմ են պետք բարենորոգումները, երբ թուրքերը ոչնչացնում են հայերին: Ամսաթերթը հավատում է առանց կասկածի նշույլի, որ հայերի նկատմամբ նույն քաղաքականությունն է իրականացվում, ինչ համիդյան վարչակարգի օրոք:¹³¹ Ամսաթերթը հավատում է նաև, որ թուրքիայի ամփոփոխ մնացած քաղաքական կյանքում լուրջ վերափոխումներ կարող են իրագործել երկրի խորհրդարանը ու կառավարությունը, որոնք, սակայն, իշխող կուսակցության կամակատարներն են:¹³²

Խորհրդարանը թուրքիայում, ըստ «Ուսանողի», դժվարին կացության մեջ է հայտնվել: Այնտեղ հավասարաչափ չեն ներկայացված պետության հասարակական-քաղաքական բոլոր հոսանքները ու կուսակցությունները: Մեծամասնություն են կազմում երիտթուրքերը ու նրանց կողմնակիցները: Հասկանալի է, որ որոշումներն էլ ընդունվում են նրանց քաղաքական հավատամքին համապատասխան: Փաստորեն «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը խորհրդարանին ու կառավարությանը տանում է իր ուզած ճանապարհով՝ ի հեճուկս փոքրաթիվ արմատական ձախակողմյան պատգամավորների բողոքների և արտասանած գեղեցիկ ճառերի: «Ուսանողի» ցանկությունն է արդար ընտրություններով ներկայացուցչական մարմնում տեսնել օրինական ճանապարհով բոլոր ազգերից ընտրված պատգամավորներ, որոնք կպաշտպանեն և ընտրողների, և՛ հարազատ կուսակցությունների շահերը: Իսկ վերջիններին ամսաթերթը մեծ տեղ է հատկացնում երկրի վերածնման գործընթացում, թեև կարծում է, որ թուրքիայում դեռևս չի կարելի խոսել եվրոպական իմաստով քաղաքական կուսակցությունների մասին:¹³³ Դրանցում են ձևակերպում և ամփոփվում ժողովրդի անցյալի փորձը ու հասարակական գիտակցության արդյունքները: Հասարակական տարբեր խավերի օբյեկտիվ շահերի գիտակցությունը իր սուբյեկտիվ արտահայտությունն է գտնում այս կամ այն հասարա-

131 «Ուսանող», 1909, թիվ 1, էջ 63-64, 1910, թիվ 4, էջ 225-269, «Երկունք», 1913, թիվ 12, էջ 304-306:

132 «Ուսանող», 1909, թիվ 2, էջ 68-80, թիվ 3, էջ 133-150, 1910, թիվ 4, էջ 257-269, 1911, թիվ 6, էջ 133-139:

133 Նույն տեղում, 1909, թիվ 3, էջ 133-150:

Ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները կփորձենք անել մի շարք եզրակացություններ:

■ «Ազատամարտ» օրաթերթը, «Ուսանող» և «Երկունք» ամսաթերթերը 1909-1915թթ. հրապարակվելով Կ.Պոլսում իբրև Հայ հեղափոխական դաշնակցության պարբերական մամուլի օրգաններ՝ եղել են քաղաքական պայքարում ՀՀԴ գաղափարաքարոզչական օժանդակող հիմնական գործոններից մեկը և իրենց կուսակցության գաղափարախոսները՝ ժամանակաշրջանի իրադարձությունները վերլուծելով ու գնահատելով ՀՀԴ ծրագրային մեկնակետից:

■ «Ազատամարտը», «Ուսանողը» և «Երկունքը» հրատարակության տարիներին վերածվել են համազգային հիմնախնդիրներով մտահոգ, դրանց լուծմանը հետամուտ, հայ մտավոր ներուժը միավորել փորձող պարբերական մամուլի ներկայացուցիչների:

■ ՀՀԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը 1909-1915թթ. եղել է արևմտահայ կյանքի բոլոր բնագավառների ու ոլորտների առաջընթացին նպաստող ազդակ:

■ Նշված ժամանակաշրջանում «Ազատամարտ» օրաթերթը, «Երկունք» և «Ուսանող» ամսաթերթերը փորձել են աջակցել օսմանյան կայսրությունում 1908թ. հուլիսյան հեղաշրջումից հետո հայտարարված կառավարման եվրոպական կառույցով պետության կայացմանը, ինչը ինքնին կարելի է առաջադիմական դիրքորոշում համարել:

■ ՀՀԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը 1909-1915թթ. աչքի է ընկել ինքնատիպ և ուրույն դիմագծով, արդարության հաղթանակի համար մարտնչողի անկեղծ անմիջականությամբ, հրապարակումների օբյեկտիվությամբ:

■ Այսպիսով «Ազատամարտ» օրաթերթը, «Ուսանող» և «Երկունք» ամսաթերթերը ծնվել են գաղափարական, կուսակցական հիմունքներով՝ որպես ՀՀԴ-ի գաղափարաքարոզչական պայքարի միջոց ու մինչև վերջին համարը մնացել են Դաշնակցության, նրա հայեցակետերի և քաղաքական ուղեգծի գաղափարախոսներ:

ՍԿԶԲՆԱԴՐՔՈՒՐՆԵՐ

1. ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՊԿՊԱ)

1. Բարսեղի հոդվածը. «Բ. Սիքայեյանը և ՀՀԴ-ն» (1906թ.), ֆ. 43, ց. 1, գ. 47:
2. «ՀՀԿ կանոնադրությունը» (1910 թ.), ֆ. 69, ց. 1, գ. 289:
3. ««Դաշնակցություն» կուսակցության գործունեության վերաբերյալ փաստաթղթերի հավաքածու», ֆ. 95, ց. 2, գ. 1-9:
4. «Իմպերիալիստական պատերազմում գործող հայ կամավորական խմբերի և զինվորական ջոկատների մասին փաստաթղթերի հավաքածու», ֆ. 121, ց. 1, գ. 16:
5. Անհայտ հեղինակ, «Հայկական հարցը և ՀՀԴ-ն», ֆ. 166, ց. 1, գ. 51:
6. Խորեն Լ-ի նամակը «Մշակի» խմբագրությանը՝ Սալմաստում ՀՀԴ և հնչակյան կուսակցությունների պայքարի, դաշնակցականների կատարած բռնությունների մասին (1905թ.), ֆ. 227, ց. 1, գ. 545:
7. Բննադատական հոդվածներ ՀՀԴ-ի կողմից ազգի պառակտման մասին «Մշակում» (1906թ.), ֆ. 227, ց. 1, գ. 568:
8. Բննադատական հոդվածներ ՀՀԴ-ի գործունեության մասին «Մշակում» 1906-1912թթ., ֆ. 227, ց. 1, գ. 571, 572, 579:
9. Հ. Առաքեյանի նամակներն Ա. Չոպանյանին իր թարգմանությունների և ՀՀԴ-ի սխալների մասին (1898-1916թթ.), ֆ. 282, ց. 1, գ. 1:
10. «Անձնական ծագում ունեցող վավերագրական նյութերի հավաքածու», ֆ. 314, ց. 1, գ. 26, 32, 85, 111-113:
11. Հոդված Բ. Սիքայեյանի գործունեության մասին (կտրոն «Հորիզոն» թերթից, «Հորիզոն», 1915թ., թիվ 18), ֆ. 314, ց. 8, գ. 28:
12. ՀՀԴ 1907թ. Ընդհանուր ժողովում ընդունված ծրագիրը, ֆ. 393, ց. 1, գ. 301:
13. Հոդվածներ ՀՀԴ-ի մասին (կտրոններ սփյուռքահայ «Պայքար», «Հառաջ», «Նոր օր», «Հուշարար», «Երևան» թերթերից 1928-1958թթ.), ֆ. 412, ց. 1, գ. 2129:
14. Ե. Օտյանի հուշերը. «12 տարի Պոլսեն դուրս» (կտրոններ «Արև» թերթից 1896-1909թթ.), ֆ. 413, ց. 1, գ. 882:
15. «Արտասահմանից ստացված վավերագրական նյութերի հավաքածու», ֆ. 420, ց. 1, գ. 5, ֆ. 420, ց. 6, գ. 12, ֆ. 420, ց. 7, գ. 1, ֆ. 420, ց. 46, գ. 6, ֆ. 420, ց. 60, գ. 5:
16. «Փաստաթղթերի հավաքածու Հայկական հարցի մասին», ֆ. 450, ց. 2, գ. 8, 128:

- II. ՀՀ հասարակական-քաղաքական կազմակերպությունների և փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՀԶԿԿ ԿՊԱ)
17. “Манифест социал-демократических делегатов и членов участвовавших на 6-ом конгрессе “Союза студентов армян Европы” обращенный ко всем европейским армянским студентам-социал-демократам”, ֆ. 4007, ց.4, գ.4:
 18. Ստ. Շահումյանի «Հայ հեղափոխական ֆեդերացիան հայ իրականության դատաստանի առջև» ձեռագիր հոդվածի պատճեն, ֆ.4007, ց.4, գ.8:
 19. «Ծրագիր հնչակյան կուսակցության (1887թ.)», ֆ.4045, ց.1, գ.2:
 20. «Ծրագիր հնչակյան կուսակցության (1891թ.)», ֆ.4045, ց.1, գ.5:
 21. «Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության նավահանգստի վարչության կոչը հնչակյաններին և դաշնակցականներին ուժերը ցարիզմի և սուլթանիզմի դեմ համախմբելու համար», ֆ.4045, ց.1, գ.126:
 22. «Վերակազմյալ հնչակյան կուսակցության Կ.Պոլսի վարչության հայտարարությունը ներկուսակցական հարցերի շուրջ», ֆ.4045, ց.1, գ.148:
 23. “Исторический очерк гнчакской партии и ее позиции в Турецкой Армении, составленный в департаменте полиции”, ֆ.4045, ց.1, գ.165:
 24. «Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության և Իթքիյաֆի համաձայնության պատճեն», ֆ.4045, ց.1, գ.167:
 25. «Հնչակյան և ռամկավար կուսակցությունների ընտրական հանձնաժողովի հայտարարությունը ՀՀԿ նախընտրական գործելակերպի մասին (1910թ.)», ֆ.4045, ց.1, գ.169:
 26. X. Агамирян, “Об армянской социал-демократической партии Гнчак”, ֆ. 4045, ց.2, գ.22:
 27. М. Назарбек, “Из воспоминания о создании и деятельности партии Гнчак (1918а.)”, ֆ.4045, ց.2, գ.27:
 28. Վ. Թաթևյան, «Հնչակյան կուսակցությունը և սոցիալիզմը», ֆ.4045, ց.2, գ.34:
 29. «ՀՀԿ ծրագիրը (1890թ.)», ֆ.4047, ց.1, գ.1:
 30. «ՀՀԿ կոչը հայ ժողովրդին (1890թ.)», ֆ.4047, ց.1, գ.2:
 31. «Դրոշակի» թռուցիկ թերթը, 1891թ., թիվ 3, ֆ.4047, ց.1, գ.3:
 32. Հ.Դավթյան, «Հասարակական կուսակցություն», ֆ.4047, ց.1, գ.4:
 33. «ՀՀԿ Փարիզի կոմիտեի հերքումը (1898թ.)», ֆ.4047, ց.1, գ.7:
 34. «ՀՀԿ-ի կոչը հայրենակիցներին (1904թ.)», ֆ.4047, ց.1, գ.15:
 35. «ՀՀԿ Արևելյան բյուրոյի հայտարարությունը Սասունում տեղի ունեցած հայ-քրդական ընդհարման մասին (1904թ.)», ֆ.4047, ց.1, գ.17:

36. «Դրոշակի» 1905թ. թիվ 4-ը՝ նվիրված Բ. Միքայելյանի մահվանը, ֆ.4047, ց.1, գ.24:
37. «ՀՀԿ Կ.Պոլսի պատասխանատու մարմնի շրջաբերականը (1908թ.)», ֆ.4047, ց.1, գ.61:
38. «ՀՀԿ Դաշնակցայի ենթակոմիտեի կոչը դաշնակցական խմբերին (1909թ.)», ֆ. 4047, ց.1, գ.64:
39. “Докладная записка о деятельности партии Дашнакцутюн за 1890-1908гг.”, ֆ.4047, ց.1, գ.68:
40. «Եվրոպայի ՀՀԿ ուսանողների 3-րդ համագումարում ընդունված կոչը Տաճկաստանի և Պարսկաստանի հայրենակից ուսանողներին (1910թ.)», ֆ.4047, ց.1, գ.69:
41. «Քաղվածքներ ՀՀԿ 8-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից (1914թ.)», ֆ.4047, ց.1, գ.88:
42. «ՀՀԿ Արևելյան բյուրոյի հայտարարությունը (1914թ.)», ֆ.4047, ց.1, գ.89:
43. Կարսի կոմիտեի կոչը (1914թ.), ֆ.4047, ց.1, գ.90:
44. Համազասպ, «Նամակներ Քալանթարին և ուրիշներին (1907-1915թթ.)», ֆ.4047, ց.2, գ.1:
45. Ա. Փորսուղյան, «Հուշեր ՀՀԿ մասին», ֆ.4047, ց.2, գ.7:
46. «Անհայտ հեղինակի հուշերը 1905-1908թթ. իրադարձությունների և ՀՀԿ-ի գործունեության մասին Արևմտյան Հայաստանում», ֆ.4047, ց.2, գ.16:
47. Լ.Սարգսյան, «Հուշեր ՀՀԿ հիմնադրման, 1-ին քայլերի և 1-ին համագումարի մասին (1889-1892թթ.)», ֆ.4047, ց.2, գ.9:
48. Հ. Սառիկյանց, «Հուշեր 1878-1924թթ. մասին», ֆ.4047, ց.2, գ.11:

III. Օգտագործած հարակից գրականության և մամուլի ցանկ

49. Աղոնց Ն., «Հայկական հարցի լուծման շուրջ», Երևան, 1989 թ.:
50. Ալևոնի Է., «Դեպի երկիր», Բոստոն, 1911 թ.:
51. Ահարոնյան Ա., «Քրիստափոր Միքայելյան», Բուենոս Այրես, 1945թ.:
52. Ամուրյան Ա., «ՀՀԿ-ն Պարսկաստանում 1890-1918թթ.», Թեհրան, 1950 թ.:
53. Ատոմ, «Մեր հավատամքը ազգային հարցի մասին», Կ. Պոլիս, 1910թ.:
54. Ատոմ, «Օսմանյան կայսրության անկման պատմությունը», Կ. Պոլիս, 1913 թ.:
55. «Արամը», Երևան, 1991 թ.:
56. «Արծազանք» թերթ, Թիֆլիս, 1884 թ.:
57. Բարսեղյան Բ., «Հին հուշեր հայ հեղափոխական կյանքից», Կ. Պոլիս, 1913 թ.:
58. Գանգրունի Հ., «Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրու-թյան դեմ (1890-1910թթ.)», Բեյրութ, 1973 թ.:
59. Գեմբարսկի Բ., «Նամակներ աշխարհին», Երևան, 1990թ.:
60. «Գիծեր ՀՀԿ կյանքին», Պուլքրեշ, 1933թ.:
61. Գյուզալյան Գ., «Հայ քաղաքական մտքի զարգացումը և ՀՀԿ-ն», Փարիզ, 1927թ.:

62. «Դիվան ՅՅԴ», հ.1, Բոստոն, 1934թ.:
63. «Դիվան ՅՅԴ», հ.2, Բոստոն, 1934թ.:
64. «Դրոշակ», ժնև, 1891թ., թիվ 1,2:
65. «Դրոշակ», ժնև, 1892թ., թիվ 3:
66. «Դրոշակ», ժնև, 1893թ., թիվ 5:
67. «Դրոշակ», ժնև, 1894թ., թիվ 10, 11:
68. Ջավարյան Ա., «Երկեր», Երևան, 1991թ.:
69. Ջարդարյան Ռ., «Ցայգալույս», Կ.Պոլիս, 1910թ.:
70. Թեհլիրյան Ա., «Վերհիշումներ», Երևան, 1993թ.:
71. Թոփչյան Ե., «Երիտասարդ Թուրքիան և հայերը», հ. 1, Թիֆլիս, 1909թ.:
72. «Թուրքիա», Երևան, 1979թ.:
73. Ինճիկյան Յ., «Օսմանյան կայսրության անկումը», Երևան, 1984թ.:
74. Լեո, «Անցյալից», Թիֆլիս, 1925թ.:
75. Լեո, «Թուրքական հեղափոխության գաղափարաբանությունը», հ.1, Փարիզ, 1934թ.:
76. Լեփսիուս Ի., «Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն», Կ.Պոլիս, 1919թ.:
77. Լուղշուվեյտ Ե., «Թուրքիա», 1958թ.:
78. Խրիմյան Հայրիկ, «Երկեր», Երևան, 1992թ.:
79. Խուդինյան Գ., «ՀՀԴ առաջին Անդհանուր ժողովը», Երևան, 1992թ.:
80. «Ծրագիր ՀՀԴ», Կ.Պոլիս, 1908թ.:
81. «Ծրագիր հնչակյան կուսակցության», Լոնդոն, 1897թ.:
82. «Կանոնադրություն Եվրոպայի ՀՀԴ ուսանողական միության», ժնև, 1908թ.:
83. Կիրակոսյան Ջ., «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», հ. 1, Երևան, 1982թ.:
84. Կիրակոսյան Ջ., «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ», հ. 2, Երևան, 1983թ.:
85. Кондакян Р., «Турция: внутренняя политика и ислам», Ереван, 1983г.
86. Հակոբյան Ա., «Հայաստանի Հանրապետություն (1918-1920թթ.)», Երևան, 1992թ.:
87. Համբարյան Ա., «Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին», Երևան, 1990թ.:
88. «Հայերի ցեղասպանությունն ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի», Երևան, 1988թ.:
89. «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1985թ.:
90. «Հայ ժողովրդի պատմություն», հ.5, Երևան, 1974թ.:
91. «Հայ ժողովրդի պատմություն», հ.6, Երևան, 1981թ.:
92. «Հայ հեղափոխական կուսակցությունները և օսմանյան կայսրությունը», Կ.Պոլիս, 1916թ.:

93. «Հայ հեղափոխական դաշնակցության ծրագիր», Կ.Պոլիս, 1908թ.:
94. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924թ., թիվ 3, 5-7, 9-12, (Սիրունի Յ., «Ազատամարտի» սերունդը):
95. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924թ., թիվ 4 (Նավասարդյան Վ., «Հայ անկախության գաղափարը մերձավոր անցյալի մեջ»):
96. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924թ., օգոստոս, (Միքայելյան Բ. «Բեկորներ իմ հուշերից»):
97. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924թ., թիվ 9:
98. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1925թ., թիվ 3(Սիրունի Յ., «Ռուբեն Ջարդարյան»):
99. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1936թ., թիվ 2(Սևյան Ա., «Ե՞րբ է հիմնվել ՀՀԴ-ն»):
100. «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1964թ., թիվ 12 (Աստվածատրյան Ա., «Իթքիհատ-ՀՀԴ հարաբերություններ»):
101. «Հայ նոր գրականության պատմություն», հ. 2, Երևան, 1962թ.:
102. «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, Երևան, 1964թ.:
103. «Հայ նոր գրականության պատմություն», հ. 4, Երևան, 1972թ.:
104. Հակոբյան Ն., «Մտածումներ ՀՀԴ մասին», Երևան, 1992թ.:
105. Հասարթյան Մ., Օրեշկովա Ս., Պետրոսյան Յու., «Թուրքիայի պատմության ուրվագծեր», Երևան 1986թ.:
106. Հովհաննիսյան Ա., «Դաշնակցության առիթով», Մոսկվա, 1929թ.:
107. Հովհաննիսյան Ա., «Նալբանդյանը և նրա ժամանակը», հ. 2, Երևան, 1956թ.:
108. «Հուշապատում ՀՀԴ (1890-1950թթ.)», Բոստոն, 1950թ.:
109. Ղազարյան Վ., «Ռամկավար ազատական կուսակցություն. ուղեցույց և համառոտ պատմություն», Երևան, 1991թ.:
110. Ծիզմեճյան Մ., «Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց», Ֆրեզնո, 1930թ.:
111. «Մայրենի» ամսագիր, Երևան, 1991թ., թիվ 4-5:
112. Մանդելշտամ Ա., «Երիտասարդ թուրքերի պետությունը: Պատմա-քաղաքական ակնարկ», Էջմիածին, 1916թ.:
113. «Մանիֆեստ ՀՀԴ», 1890թ.:
114. Մարկոսյան Ս., «Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին», Երևան, 1968թ.:
115. Միքայելյան Բ., «Հեղափոխականի մտքերը», Երևան, 1990թ.:
116. Մխիթարյան Ս., «19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ մամուլի պատմությունից», Երևան, 1976թ.:
117. Մորգենթաու Յ., «Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները», Երևան, 1990թ.:
118. Նժդեհ. Գ., «Բաց նամակներ հայ մտավորականության», Բեյրութ, 1929թ.:

119. «Նյութեր ՅՅԴ պատմության համար (1890-1914թթ.)», հ. 1-3, Բեյրութ, 1984թ.:
120. Նորյան Ա., «Դրվագներ ՅՅԴ գործունեությունից. Ա տասնամյակ», Բոստոն, 1917թ.:
121. Շահրիկյան Յ., «Բարենորոգումների հարցը», Կ.Պոլիս, 1914թ.:
122. Շահրիկյան Յ. «Պետական վերանորոգությունն ու հողային հարցը», Կ.Պոլիս, 1910թ.:
123. «Որոշումներ ՅՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի», Ժնև, 1907թ.:
124. Չորմիսյան Լ., «Կուսակցություններ», Բեյրութ, 1965թ.:
125. Պետրոսյան Յ., «Գեղամ Տեր-Կարապետյան », Երևան, 1983թ.:
126. Պոզնանսկա Ք., «Հին և նոր Թուրքիան», Երևան, 1985թ.:
127. Պոտոլոյան Մ., «Հայ մամուլը 15 տարուն մեջ (1894-1909թթ.)», Ս. Ղազար, 1909թ.:
128. «Ռամկավար ազատական կուսակցություն», Երևան, 1991թ.:
129. Ռշտունի Վ., «Հայ հասարակական հոսանքների պատմությունից», Երևան, 1956թ.:
130. Ռուբեն, «Հայ հեղափոխականի մը հիշատակները», հ. 1-7, Երևան, 1990թ.:
131. Ռուբեն, «Հայ-թուրքական կնճիռը», Կահիրե, 1924թ.:
132. Սապահ-Գյուլյան Մ., «Երիտասարդ Թուրքիա», Երևան, 1991թ.:
133. «Սովետական գրականություն» ամսագիր, Երևան, 1966թ., թիվ 10, (Սիրունի Յ., «Երբ գարուն էր 1913-ին...»):
134. Վարանդյան Մ., «ՅՅԴ պատմություն», Երևան, 1992թ.:
135. Վրացյան Ս., «60-ամյակ (1890-1950թթ.)», Բոստոն, 1950թ.:
136. Տեր-Կարապետյան Գ., «Տարոնի աշխարհ», Երևան, 1995թ.:
137. Բիֆաթ Մ.Զ., «Օսմանյան հեղափոխության մութ էջերը և «Իթթի-հատի» հայաջինջ ծրագրերը», Երևան, 1990թ.:
138. Փաստրմաջյան Գ. «Ապրված օրեր», Բոստոն, 1948թ.:
139. Քաջազունի Յովհ., «Բաց նամակ Z-ին. Թուրքիա՞, թե՞ Ռուսիա», Երևան, 1990թ.:
140. «Քրիստափորի հիշատակին», Կ.Պոլիս, 1909թ.:
141. Фирбюхер Г., “Армения 1915г. Уничтожение Турцией культурного народа”, Ереван, 1991г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
ՅՅԴ-Ն ԵՎ ՆՐԱ ՀԱՎԱՏԱՄՔԸ	12
ՅՅԴ-Ի ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ 1909-1915 ԹԹ.	21
Օսմանյան կայսրության հասարակական-քաղաքական կացությունը	
19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին	21
ՅՅԴ-ի դիրքորոշումը Թուրքիայում 1909-1915 թթ.	32
ՅՅԴ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՐԲԵՐԱՎԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԻԲՐԵՎ	
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍ	40
«Ազատամարտ» օրաթերթը ՅՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնաթերթ	42
«Ուսանողը» և «Երկունքը» ՅՅԴ ուսանողական միությունների խոսնակներ	47
ՅՅԴ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՐԲԵՐԱՎԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԵՎ ՆՐԱ	
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱԽՈՒՄԲԸ	56
Հասարակական-քաղաքական հարցադրումները	
«Ազատամարտ» օրաթերթում	56
Արևմտահայերի ներազգային կյանքը «Ազատամարտի» էջերում	80
«Ուսանողի» և «Երկունքի» հասարակական-քաղաքական	
հետաքրքրությունների շրջանակները	91
Ամփոփում	100
Օգտագործված գրականության և մամուլի ցանկ	101

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀԳ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ
ՁԱՀԱԿԻՐ
1909-1915ԹԹ.